A.R.A.R.@
digitised by

12 ՀՈՒՆՎԱՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱՐ





digitised by A.R.A.R.@

Սովետական Հայաստան

№ 12 (225) ԴԵԿՏԵՄԲԵՐ

1964 Թ. ԵՐԵՎԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ, ՕՐԳԱՆ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ

«СОВЕТАКАН АЙАСТАН»
(Советская Армения)
Ежемесячный общественный, литературно - художественный иллюстрированный журнал
Орган армянского комитета по культурным связям с соотечественниками за рубежом

«SOVETAKAN HAYASTAN»
(Arménie Soviétique)
Revue mensuelle illustrée sociale, littéraire et artistique
Organe du comité pour les liens culturels avec les Arméniens de l'étranger

«SOVETAKAN HAYASTAN»
(Soviet Armenia)
Social, art, literary illustrated monthly
Organ of the Committee for Cultural Relations with Armenians Abroad

Շապիկը՝ Հ. Կոչոյանի անվան դպրոցի աշակերտուհի Նինե Գյուլամիրյանի (13 տարեկան): Շապիկի 2-րդ էջում՝ ՈՒԺ ԱՇՈՒՆ լուսանկար՝ Գ. Գեարոյանի:

Նկարներում՝ 1. «Ուրմենիա» չերմաճավը Բաթումիի նավահանգըստում: Դիմավորում են Սիբիայից ժամանած հայրենադարձներին: 2. Հայրենադարձների ժամանումը Հոկտեմբերյան, ուր բնակություն են հաստատելու նրանք:



ՍԻԲԻԱՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՎ ԵՐՐՈՐԴ ՔԱՐԱՎԱՆՆԵՐԸ

Նոյեմբերի սկզբներին Սովետական Հայաստանի աշխատավորները ջերմությամբ ընդունեցին սիբիահայ հայրենադարձների երկրորդ հարավաները: 329 հայեր բնդմիշտ հրաժեշտ տալով Սիբիայի հյուսիսում բնկած երեք փոքրիկ գյուղերի՝ Գոլիին, Ուչոյին և Ոարիարին եկան Սովետական Հայաստան ու բնակություն հաստատեցին տարազատ երկրում:

Հայրենադարձների այս հարավանի ննշող մեծամասնությունը հին սահմանցիներ էին, որոնք ազատվելով բռնարական բռնություններից հաստատվել էին Սիբիայի հրդեհական շրջաններում և գրեթե չգիտեին մայրենի լեզուն:

— Անողոք ճակատագիրն է մեղավոր, որ մեզանից շատերը չգիտեն հայերեն լեզուն,— արտահայտելով բոլոր հայրենադարձների մտերը ասում է Մարի Քոչկարյանը.— այո՛, անողոք ճակատագիրը... Բայց ահա մենք հայրենիք ենք եկել և այստեղ պիտի խոսենք մեր սիրելի հայերենով... Այս հարավանում են իմ երեք զավակները: Ես բերել եմ երրանց, որպեսզի հայրենիքում նրանք կրթություն ստանան և աշխատեն հայրենիքի ծաղկման ու բարգավանման համար:

Հայրենադարձների այս նոր հարավանից 12 մարդ բնակություն հաստատեցին Կիրովականի «Ինմաց» բաղամասում, 44-ը՝ Լենինականում: 134 սիբիահայեր իրենց նոր կյանքը սկսեցին Հոկտեմբերյանի Մայիսյան և Խանջյանի անվան սովետական տրնտեսություններում, ուր նրանց հատկացվեցին գեղեցիկ առանձնատներ՝ իրենց բոլոր հարմարություններով: 70 մարդ բնակվեցին Էջմիածնի Ինիրովի անվան սովետական տնտեսությունում, իսկ մյուսները՝ բվով 69 հոգի տեղավորվեցին Լուսավան բաղաքում:

Նոյեմբերի 19-ին Սովետական Հայաստան ժամանեց նաև սիբիահայ հայրենադարձների երրորդ հարավանը: Նրանք բնակություն հաստատեցին Կիրովականում, Լենինականում և Լուսավանում:



digitised by A.R.A.R.@



Կիրովի անվան փողոցը։

Վ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ծաղկում է

Գավառական մի հետամնաց փոքրիկ, շատ փոքրիկ քաղաք էր Կիրովականը՝ նախասովետական տարիներին։ Արխիվներում մնացած ժլատ վավերագրերից մեկում կա այսպիսի հիշատակություն. 1914 թվականին քաղաքն ունեցել է 3865 բնակիչ... Ու կոչվել է քաղաք...

Բնակիչների ճնշող մասը երկրագործներ էին, մյուս մասը՝ արհեստավորներ ու առևտրականներ։ Արտադրական ձեռնարկություններ չկային. երկաթուղային փոքրիկ կայարանն էր, Ադաբաշյան եղբայրների մեխանիկական արհեստանոցը, դարախանան, այսպես կոչվող «ղանձլի ֆաբրիկան» և մի քանի մանր-մունր արհեստանոցներ։

Քաղաքն աչքի էր ընկնում միայն իր բնական հիանալի դիրքով. երեք կողմը գեղանկար սարեր, մի կողմը անտառ ու այդ անտառի փեշին՝ քաղաքը։ Ամռան ամիսներին այստեղ ամեն կողմից հովեկներ էին գալիս՝ փոքր ինչ աշխուժացնում գավառական կյանքը, ու երբ նորից ետ էին գնում՝ տխրում էր քաղաքը, ինչպես անտառը հավքերի չվելուց հետո...

Բնակչության մեծ մասը անգրագետ էր. միայն երկու խղճուկ դպրոց կար, մեկ աղքատիկ գրադարան և մեկ էլ չինովնիկական ակումբ։ Շատ զրկանքներ ու տառապանքներ էր բաժին ընկնում քաղաքի բնակիչներին՝ սով, կոտորածներ, ավերածություն, որբի արցունքներ...

Սակայն նոր առավոտ բացվեց վշտահեծ քաղաքի վրա։ Ամբողջ երկրի հետ վերածնունդ ապրեց և լեռների մեջ ծվարած գյուղաքաղաքը, նոր կյանք բացվեց նրա բնակիչների համար։ Հետամնաց, տխուր Ղարաքիլիսան սովետական տարիներին ծաղկեց ու բարգավաճեց այնպես, որ հիմա, երբ քայլում ես նրա փողոցներով գրեթե ոչինչ, այո՛, ոչինչ չես գտնում հնից։ Երբեմնի ամայի, անմարդաբնակ վայրերում հիմա փռվել են բոլորովին նոր, գեղեցկատես թաղամասեր, գործարանային ավաններ, ու ծավալվել, տարածվել է քաղաքը բոլոր ուղղություններով։ Նրա մի ծայրը մտել է Ժդանով գյուղը, մյուսը՝ ընդհուպ մոտեցել Խնձորուտ գյուղին։ Այդ գյուղերը հիմա մտել են քաղաքի մեջ, դարձել նրա բաղկացուցիչ մասերը։ Նրա շրջագծի մեջ են մնացել նախկինում քաղաքից շատ հեռու հոսող երեք գետերը՝ Տանձուտը, Վանաձորը, Ջիլխանը։

Տանձուտի աջ ափին՝ դարավանդի վրա, ծնվել է հսկայական մի թաղամաս, որին տեղացիները «Դիմաց» են կոչում։ Այն հիմա մի քանի անգամ մեծ է՝ քան նախկին ամբողջ Ղարաքիլիսան։ Բոլորովին նոր, բարեկարգ թաղամասեր են անտառի փեշերին տարածված, քիմիական կոմբինատի բանվորական ավանը, արհեստական մետաքսաթելի գործարանի բնակելի համալիրը, որը վարդագույն նախշերով ներկել է Բազումի լեռների նախկին անհրապույր ստորոտը։ «Աչափնյակ է» կոչվում այդ թաղամասը։ Այնտեղ վեր են բարձրացել բազմաթիվ բարձրահարկ շենքեր, ուր բնակություն են հաստատել գերազանցապես հայրենադարձները։

Առաջ քաղաքում մատների վրա էին հաշվում երկհարկանի տները. այժմ նախկին աչքի ընկնող տներն արդեն չեն երևում ծաղկող քաղաքի ընդհանուր համայնապատկերի մեջ։ Մեծ մասը չորս, հինգ հարկանի շենքեր են. հիմա կառուցվում են տաս-տասներկու հարկանի նորաոճ շենքեր։ Միայն այս տարի քաղաքի աշխատավորները ստացել են ավելի քան 1200 բնակարան՝ 31 հազար քառակուսի մետր բնակելի տարածությամբ, իսկ վերջին չորս տարում շահագործման է հանձնվել ավելի շատ բնակելի տարածություն, քան անցած քառասուն տարիներին։

Լայնահուն ու բարեկարգ են քաղաքի փողոցները՝ կառուցապատված վարդագույն, հոյակապ շենքերով՝ ծառ ու ծաղիկների գեղեցիկ համադրությամբ։ Նախկին ղարաքիլիսեցու մտքով չէր անցնի, թե մի օր իրենց քաղաքը կունենա այնպիսի բարեկարգ անկյուններ, ինչպիսիք են Կիրովի անվան հրապարակը, Լենինի պողոտան, Արովյան, Շահումյան, Աղայան, Մյասնիկյան փողոցները, քաղաքային զբոսայգին, քիմիագործների և երկաթու-



Մի տեսարան Կիրովի անվան հրապարակից։ Խորքում «Գուգարք» հյուրանոցը։



8176-64

digitised by A.R.A.R.@

Կիրովականը



Կիրովականի «Ավտոմատիկա» գործարանի ուժեղացուցիչների աշխատամասում:

Լուսանկարները՝ Հ. Հեհեյանի և Գ. Պետրոսյանի

ղայինների հանգստի պուրակները, անտառի փեշերին տարածված բուսաբանական հոյակապ այգին:

Քաղաքը հարուստ է մշակութային օջախներով: Կիրովականցիների սիրելի օջախներն են Հովհաննես Աբելյանի անվան պետական թատրոնը, Քիմիագործների մշակույթի պալատը, քաղաքային և քիմիագործների ստադիոնները, բազմաթիվ ակումբներն ու գրադարանները, կինոթատրոնները, մշակույթի տները:

Աննախադեպ են հաջողությունները լուսավորության բնագավառում: Այժմ քաղաքում գործում են 25 դպրոց, 4 տեխնիկում, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիլիալը, գիտահետազոտական 3 հիմնարկ՝ «Ավտոմատիկա», «Հայքիմնախագիծ» ինստիտուտները և կոնստրուկտորական բյուրոն:

Աշխատավորության առողջապահության նպատակին են ծառայում 5 հիվանդանոց, 4 պոլիկլինիկա և «Հայաստան» առողջարանը:

Հաճելի նորություն են գրողների, նկարիչների և երգահանների միությունների՝ քաղաքում ստեղծված համապատասխան միավորումները, Հայֆիլհարմոնիայի Կիրովականի բաժանմունքը:

Այո՛, փոխվել, անճանաչելի է դարձել Կիրովականը ու նրա աճման, արագ զարգացման նախադրյալը քաղաքի վերընթաց թռիչք ապրող արդյունաբերությունն է, որը նրան տվել է իսկական քաղաքի տեսք ու հնչեղություն:

Քաղաքի օրեցօր աճող արդյունաբերության հսկան ու նրա հպարտությունը՝ Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատն է: Դա հրաշքներով լեցուն մի հետաքրքիր աշխարհ է, ուր ծնունդ են առնում բազմաթիվ քիմիական նյութեր՝ ազոտային պարարտանյութ, կարբիդ, ցիանամիդ, դիցիանդիամիդ, ամյակային սելիտրա, մելամին, միզանյութ, ցիանական փոշի, սրհետտական թանկագին քարեր և այլ նյութեր: Կոմբինատը արտադրանք է ուղարկում ավելի քան 800 հասցեատերերի, որոնց թվում են նաև բազմաթիվ արտասահմանյան երկրներ, ինչպես օրինակ՝ Բուլղարիան, Ռումինիան, Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունը, Բիրման, Կամբոջան, Աֆղանստանը, Իրանը, Իրաքը, Գվինեան և այլ երկրներ:

Երկու տարի էլ չկա, ինչ քաղաքի հեռավոր ծայրամասերից մեկում՝ Ջիշխան գետի անմարդաբնակ, ամայի ափին, ծնվեց արհեստական մետաքսաթելի գործարանը: Նորակառույց հսկան այժմ թողարկում է մեծ քանակությամբ մետաքսաթել և ութսուն գույներով, ամուր ու գեղեցիկ այդ թելերը, դուրս են գալիս գործարանի տեղամասերից ու ճանապարհ ընկնում, ինչպես հանրապետության, այնպես էլ Սովետական Միության գործվածքեղենի ֆաբրիկանները:

Նոր և խոստումնալից են քաղաքի մեքենաշինական ձեռնարկությունները: «Ավտոմատիկա» գործարանը թողարկում է բարձրորակ ավտոմատ սարքեր, որոնք լայնորեն օգտագործվում են քիմիական և մետալուրգիական արդյունաբերության մեջ: Կիրովականի մակնիշով այդ սարքերը՝ այժմ կարելի է տեսնել Սովետական Միության և արտասահմանյան շատ քաղաքների ձեռնարկություններում, ուր նրանք շափում են գազերի ու հեղուկների ճնշումը, խտությունը և կարգավորում արտադրական գործողությունները:

Տասներեք տիպի գերճշգրիտ հաստոցներ են դուրս գալիս Կիրովականի ճշգրիտ-հաստոցաշինական գործարանի դարպասներից: Վերջերս նրա արտադրանքը հարստացավ ևս մեկով. գործարանը սկսեց թողարկել էլեկտրակայծային հաստոցներ, իսկ հիմա կառուցվում են նոր բաժանմունքներ, ուր արտադրվելու են գերճշգրիտ եղանակով մեքենայական մասեր մշակող հաստոցներ:

Երկար տարիներ գյուղատնտեսության մեջ և կենցաղում օգտագործվում էին քաղաքի մեքենաշինական գործարանում արտադրված բազմատեսակ մեքենաներն ու սարքավորումները: Այժմ այդ ձեռնարկությունը վերակառուցվել է նոր պահանջներին համապատասխան, փոխել իր արտադրական դեմքը և սկսել է թողարկել քիմիական պոլիմերային-մեքենաներ:

Արհեստական մետաքսաթելի արտադրության հիման վրա իր դեմքն է փոխել նաև քաղաքի Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկան: Այստեղ կառուցվել և շարք են մտել նոր բաժանմունքներ, տեղադրվել են նոր մեքենաներ, սարքավորումներ և ֆաբրիկայի արտադրական կարողությունը աճել է մոտ 5 անգամ:

Կատարելագործվել, ընդարձակվել են նաև քաղաքի մյուս խոշոր ձեռնարկությունները՝ կոդրի ֆաբրիկան, ավտովերանորոգման գործարանը, մսրթու և մուշտակի ֆաբրիկան,

Այսպիսին է լինելու Կիրովականի կենտրոնական թաղամասերից մեկը:

Թաղամասի նախագիծը կատարվել է «Հայպետնախագիծ» ինստիտուտի № 1 արվեստանոցում. հեղինակներն են՝ Շ. Սահակյանը, Հ. Կարապետյանը, Ա. Դավթյանը և Գ. Աֆրիկյանը:



2113-Ա.Հ.

digitised by A.R.A.R.@

մաի կոմբինատը, գորգերի ֆաբրիկան, կոմինդրի գործարանը, փայտամշակման կոմբինատը, թեթև ու սննդի արդյունաբերության, ինչպես նաև կենցաղսպասարկման ձեռնարկությունները:

Ու այսպես նախկին, հետամնաց Զարաքիլիսան Սովետական իշխանության տարիներին դարձել է արդյունաբերական աշքի ընկնող կենտրոն, բարեկարգ ու հաճելի քաղաք...

Գեղեցիկ է Կիրովականը այսօր, բայց նա ավելի գեղեցիկ ու շքեղ կլինի մոտ ապագայում. չէ՞ որ նա կառուցվող, զարգացող քաղաք է, մեծ հեռանկար ունեցող քաղաք:

Այժմ, երբ անցնում ես քաղաքի փողոցներով, նոր թաղամասերով, ամեն տեղ քեզ ողջունում են երկինք միտված վերամբարձ կռունկները, շինարարական փայտամածները: Ամեն տեղ կառուցվում է, ամենուր շինարարական եռուզեռ:

Ամենաուշագրավը քաղաքում նոր բացվող երկու հրապարակներն են: Նրանցից մեկը, որ կրելու է Ստեփան Շահումյանի անունը, ձևավորվելու է Երևանյան և Շահումյան փողոցների խաչմերուկում, իսկ մյուսը՝ Լենինի անվան պողոտայի ծայրին, ուր բարձրացել է «Դիմաց» քաղամասը քաղաքին միացնող հսկայական կամուրջը: Այդ երկու հրապարակները էլ կառուցապատվելու են բարձրահարկ շենքերով, ձևավորվելու են կանաչապատ տարածություններով: Քաղաքի կառուցողական նկարագրի մեջ հաճելի նորություն են լինելու բարձրաբերձ շենքերը: Դրանցից երկուսը կառուցվելու են Շահումյան հրապարակի վրա, մյուսները քաղաքի տարբեր մասերում: Շենքերից մի քանիսի հիմքերը արդեն դրվել են, մյուսները կսկսվեն 1965 թվականին:

Հսկայական գործ է կատարվելու քաղաքը կանաչապատելու ուղղությամբ: 1965 թվականին սկսվելու է քաղաքային գրոսայգու վերակառուցումը: Քաղաքի համար մեծ նվաճում է Նովոսելցովո—Կիրովական ջրատարի կառուցումը, որը քաղաքին մեկ վայրկյանում տալու է 810 լիտր ջուր:

Այո՛, հաճելի է շրջել Կիրովական քաղաքի փողոցներում և զգալ, թե ինչպես է ծաղկում և բարգավաճում սովետական կարգերի ծնունդ այդ քաղաքը: Նոր կյանքի շունչն է թևածում նրա ամեն մի մասում և ամեն մի հարկի տակ: Քաղաքն ապրում է նոր կյանքով, նոր շունչով...



ՀԱՅՐԸ ԵՎ ՈՐԴԻՆ

ՌԱՖԱՅԵԼ ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ

Ծանր տարիներ էին հայ ժողովրդի կյանքում: Հրի ու սրի մատնված ժողովուրդը խարխափում էր սովի, աղքատության ճիրաններում: Սպառնում էր համաճարակը...

Սակայն եկավ փրկությունը՝ հայոց լեռների վրա ծագեց ապատության արևը և երիտասարդ հանրապետությունը կարիք զգաց անձնազոհ, նվիրված մարդկանց, որպեսզի ոտքի հանեին հարապատ ժողովրդին՝ պայքարելու սովի ու աղքատության, համաճարակների դեմ:

Ու ելան մարդիկ, սովետական նորաստեղծ երկրի հայրենասեր մարդիկ, որոնց թվում և բժիշկ Ալեքսանդր Քյանդարյանը: Նա նոր էր ավարտել Դորպատի համալսարանի բժշկական ֆակուլտետը, վերադարձել հայրենի Երևան՝ հարապատ ժողովրդին ծառայելու համար:

Սկսվեցին երիտասարդ բժշկի ստեղծարար գործունեության բուռն տարիները: Նա մեծ եռանդով, իր նման շատ ու շատ բժիշկների հետ, ձեռնամուխ եղավ բնակչության բուժսպասարկման կարևոր գործին: Առանձնապես մեծ ջանքեր գործադրեց նա բնակչությանը դարերով մեծ չարիք պատճառող մալարիայի դեմ: Եթե հիշենք, որ նախասովետական Հայաստանում երեք բնակչից երկուսը հիվանդ էր մալարիայով, դժվար չէ պատկերացնել, թե բժշկության այս բնագավառը ինչպիսի համառ, տևական աշխատանք էր պահանջում: Իսկ թե ինչպիսին է Քյանդարյանի և նրա բազմաթիվ գործընկերների՝ մալարիայի դեմ տարած պայքարի արդյունքը, այդ մասին կարող է վկայել առողջապահության մինիստրության 1960 թվականի հաշվետվությունը: Հիվանդությունների վիճակագրության՝ մալարիայի սյունակի դիմաց գրված է՝ 0: Հայաստանում մալարիայի ոչ մի դեպք չի արձանագրվել նաև ընթացիկ տարում:

— Մալարիա բառն արդեն դուրս է եկել բժշկական բառացանկից: Բժշկական ինստիտուտի դասախոսները «դրժգոհում» են, որ մալարիայի ոչ մի դեպք չի լինում՝ ուսանողներին ցույց տալու,— չթաքնված հպարտությամբ պատմում է Քյանդարյանը:

Եվ իսկապես, նրա հպարտությունը տեղին է:

Այժմ Երևանում և ամբողջ Հայաստանում վերացվել են հակամալարիական հարյուրից ավելի կայաններ, փոխվել է գիտահետազոտական խոշոր հիմնարկներից մեկը՝ մալարիաբանական ինստիտուտը, դադարել են տպագրվել մալարիայի մասին մենագրություններ, մալարիաբան բժիշկները շտապ փոխել են իրենց մասնագիտությունը: Սա մի ամբողջ հեղաշրջում է բժշկության մեջ, որի դեմ ակտիվ պայքարողներից էր նաև բժիշկ Ալեքսանդր Քյանդարյանը:

«Երկու տասնյակ տարում իսպառ վերացնել մալարիան, մանավանդ մալարիայի համար այնպիսի բնորոշ հրկրում, ինչպիսին Հայաստանն է, դա անհավատալի բան է»,— չարակամորեն պնդում էին Միավորված Ազգերի Կազմակերպության՝ մալարիայի հանաշխարհային կենտրոնում:

Անցյալ տարի Երևան հյուր եկած արտասահմանյան մի քանի բժիշկներ Երևանի պոլիկլինիկաների լաբորատորիաներում փորձեցին պլազմոդիումներ գտնել՝ մարդկանցից վերցրած արյան նմուշներում:

Սակայն ապարդյուն: «Մեր կողմից ստուգված արյան նմուշները մալարիայի տեսակետից ստերիլ էին»,— ստիպված գրեցին նրանք ՄԱԿ-ի բժշկական բյուլետենում:

Իսկ ինչո՞ւ միայն մալարիան: Քյանդարյանը Հայաստանի բժիշկների այն սերնդից է, որոնք ստիպված էին մեծ ջանքեր գործադրել բնական ծաղկի, բծավոր, հետադարձ տիֆերի, մյուս վարակիչ հիվանդությունների դեմ իսկական համաժողովրդական պայքար կազմակերպելու համար:

Ալեքսանդր Քյանդարյանին հատկապես լավ են հիշում Ալավերդու բնակիչները: Տարիներ շարունակ աշխատելով այնտեղ, նա հանքագործների և կոլտնտեսականների բարի խորհրդատուն, առողջ կենցաղի համար մարտնչողներից էր:

— Ինչ վերաբերում է բնական ծաղկին, ապա դրա համար վիճակագրական տվյալներ անհրաժեշտ չեն: Հայաստանի թեկուզ հեռավոր գյուղերում չես հանդիպի ծաղկատար դեմքով որևէ երիտասարդի, միայն հատ ու կենտ ծերունիների կարելի է տեսնել, որոնց դեմքին՝ անցյալում կրած ծաղիկ հիվանդության դրոշմն է մնացել,— պատմում է Քյանդարյանը, մի պահ կարծես մոռանալով, թե ինչպես ինքը բավմիցս մասնակից է եղել այդ վտանգավոր հիվանդությունով վարակվելուց:

Դժվար է այժմ մեկ առ մեկ պատմել բազմավաստակ բժշկի կեսդարյա աշխատանքային ուղու մասին: Նրա աչքերի առաջ սկիզբ են առել ու զարգացել Հայաստանի առողջապահությունը, սերունդը այն մասնագետների, որոնք Սովետական Հայաստանի հասակակիցներն են՝ մեծացած և կրթություն ստացած՝ Երևանի բժշկական ինստիտուտում:

Հեռու գնալու կարիք չկա: Այդ սերնդի բժիշկներից է Կարեն Քյանդարյանը՝ Ալեքսանդր Քյանդարյանի որդին: Նա այժմ մեր հանրապետության նշանավոր ռենտգենաբաններից և սըրտաբաններից մեկն է: Թեև երիտասարդ, սակայն իր բեղմնավոր աշխատանքով նա արդեն հմուտ մասնագետի անուն է վաստակել:

Հայր և որդի Քյանդարյանների կյանքն անչափ բնորոշ է մեր բժիշկների երկու սերնդի համար: Ավագ սերնդի մարդիկ անհաշիվ վրկանքներ կրելով պայքարում էին սովի ու աղքատության դեմ, վերացնում համաճարակները, իսկ սովետական տարիներին ծնված սե-

digitised by A.R.A.R.@

րունդը. այդ թվում Կարենը. իրենց հայրերի գործը շարունակում են միանգամայն այլ պայմաններում: Այժմ մեծ հնարավորություններ կան՝ ընտրելու ցանկացած մասնագիտությունը. խորանալու բժշկական գիտության մեջ:

Չի կարելի առանց հիացմունքի ծանոթանալ Կարեն Ջլանդարյանի գիտական ուսումնասիրություններին: Նա արդեն 70 տպագիր մեծարժեք աշխատության հեղինակ է. մեր հանրապետության ռադիոկենսաբանական գիտության պիոները: Ահա թե ինչու, չնայած երիտասարդ հասակին, նրան մի քանի տարի առաջ ընտրեցին Հայաստանի Գիտությունների ակադեմիայի ռադիոկենսաբանական սեկտորի վարիչ: Վերջերս նրան հաջողվեց հայտնաբերել և նկարագրել սրտի բնածին արատի՝ համաշխարհային բժշկական գիտությանը մինչ այդ անհայտ տարատեսակը: Կարեն Ջլանդարյանի գրչին պատկանող 25 տպագիր մամուլից բաղկացած «Սրտի բնածին արատների ռենտգենա-ախտորոշումը» մենագրությունը. շատ հեղինակավոր գիտնականների վկայությամբ, խոշոր նվաճում է սովետական սրտաբանության բնագավառում:

Գնահատելով Կարենի և նրա տաղանդավոր գործընկերների բեղմնավոր աշխատանքը. Սովետական Միության Բժշկական գիտությունների ակադեմիան Երևանում բացեց սրտաբանության և սրտի վիրաբուժության գիտահետազոտական ինստիտուտ: Ինստիտուտում համախմբվեց երիտասարդ տաղանդավոր գիտնականների մի հրաշալի համաստեղություն. որի դիրեկտորն է դոցենտ Կարեն Ջլանդարյանը:

Ինստիտուտում երիտասարդ պրոֆեսոր Ալեքսանդր Միքայելյանի ղեկավարած բաժանմունքն արդեն կատարել է սրտի 200 վիրահատություն: Սա խոշոր նվաճում է Հայաստանի բժշկական գիտության համար:

Միութենական կառավարության հատուկ որոշմամբ այժմ Երևանում սկսվել է սրտաբանության ինստիտուտի համար նոր 14 հարկանի շենքի շինարարությունը. որի վրա ծախսվելու է 4 միլիոն ռուբլի:

Ուրախությամբ ենք նշում. որ նախկինում բժշկական քիչ թե շատ կանոնավոր բուժհիմնարկներից կուրկ Հայաստանում. սովետական իշխանության տարիներին աճել է տաղանդավոր բժիշկ-գիտնականների մի ամբողջ հրաշալի սերունդ: Բավական է ասել. որ Հայաստանի բժշկական հիմնարկներում աշխատում են մոտ 500 գիտնականներ. այդ թվում գիտությունների 52 դոկտոր և 260 թեկնածու:

— Մի երկու խղճուկ բուժհիմնարկներից սկսեցինք գործը. իսկ այժմ Հայաստանը բժիշկների թվով անցել է աշխարհի ամենավարգացած երկրներից.— բավկաթոռին հենված. վաստակած մարդու հանդարտությամբ. ասում է Ալեքսանդր Ջլանդարյանը:

Այնուհետև նա խոսում է այն մասին. որ այժմ Հայաստանում յուրաքանչյուր 450 մարդու ընկնում է մեկ բժիշկ. այն դեպքում. երբ Ամերիկայում մեկ բժիշկ է ընկնում 850. Անգլիայում՝ 1200 մարդու:

Հայաստանն այժմ բժշկական բարձրորակ գիտության երկիր է: Այստեղ բացի բժշկական ինստիտուտից. բեղմնավոր գործունեություն են ծավալել ուռուցքաբանության. արյան. օրթոպեդիայի. մանկաբարձության. կուրորտաբանության. աշխատանքի հիգիենայի և բժշկության այլ մասնաճյուղերի գծով գիտահետազոտական ինստիտուտներ. կլինիկաներ. լաբորատորիաներ...

ՍՍՌՄ Բժշկական գիտությունների և Հայաստանի Գիտությունների ակադեմիաների ակադեմիկոսներ Լ. Հովհաննիսյանի. Ա. Ալեքսանյանի. Մ. Մնջոյանի. Հ. Բունիաթյանի. թղթակից-անդամներ Ա. Մեհրաբյանի. Ս. Միրզոյանի. Ի. Գևորգյանի և շատ ուրիշների գիտական հայտնագործությունները հայտնի են համաշխարհային բժշկական հասարակայնությանը: Սովորական երևույթ է դարձել. երբ Հայաստանի բժիշկը գիտական զեկուցումով հանդես է գալիս Նյու-Յորքում. Փարիզում. Պրագայում. Տոկիոյում. Բեռլինում. Հռոմում և աշխարհի այլ քաղաքներում հրավիրված միջազգային կոնգրեսներում: Պրոֆեսոր վիրաբույժ Ա. Ճաղարյանին Բրյուսելի համաշխարհային տոնավաճառում շնորհվեց «Գրան-պրի» ամենաբարձր մրցանակը:

Մենք պատմեցինք բժիշկների երկու սերնդից միայն հայր և որդի Ջլանդարյանների մասին. նրանց. որոնց կյանքն ու գործը շատ բնորոշ է Սովետական Հայաստանի առողջապահության գործի անցած փառավոր ուղու համար:

Հայր և որդի Ջլանդարյանները իրենց բնակարանի պատշգամբում:

Լուսանկարները՝ Զ. Բշտիկյանի





ԵՐԿԱՐԱՄՅԱ ՎԱՍՏԱԿՈՎ

Բոլորեց սփյուռահայ բանաստեղծուհի, արձակագիր, հրապարակախոս, հասարակական գործիչ Զարուհի Դալեմքյարյանի ծննդյան 90-ամյակը: Այդ տարելիին էր նվիրված Երևանի Արվեստի աշխատողների տան սրահում տեղի ունեցած երեկոն. որ հրավիրել էին Սփյուռահայության հետ մշակութային կապի կոմիտեն և Հայաստանի գրողների միությունը: Անվանի գրագիտուհու կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցումով հանդես եկավ բանաստեղծուհի Մարո Մարգարյանը:

Պատմում էր զեկուցողը. և ներկաների առջև պատկերաճում էր գեղեցիկ ապրված մի կյանք. որ համակ նվիրում է եղել իր ժողովրդին. նրա մշակույթին. գրականին:

Զ. Դալեմքյարյանը ժամանակակիցն է տաղանդավոր գրողների այն հուժկու սերնդի. որի հավաքական ջանքերով աննախընթաց թռիչք գործեցին հայ հերոսությունն ու արձակը. սակայն որի գործունեությունը այնպես անակնկալ ընդհատվեց բուռն ջարդարարների ոճրապարտ ձեռով: Դալեմքյարյանը. որը գրական ասպարեզ էր իջել ռոմանտիկ շնչով համակված երազկոտ բանաստեղծություններով. տառապագին ապրեց իր ժողովրդին հասած ծանր աղետը: Ամեն վտանգ մոռացած. նա շրջեց բռնության զոհ դարձած հայ բաղաքներն ու գյուղերը. ամենուր օգնության ձեռ մեկնելով որբ մանուկներին. անօգնական ծերերին ու վիրավորներին: Նա անձնուրաց ջանքեր էր չափում բացելու որբանոցներ ու հիվանդանոցներ: Եվ երբ այլևս ոչինչ չուներ աճելու ամայացած իր հայրենիքում՝ Դալեմքյարյանը կենդանի մնացած հայրենակիցների ու հարազատների մի խմբի հետ կարեց անցավ օվկիանոսը և հաստատվեց Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Այստեղ նա շարունակեց գրչով ու գործով մաճառել. որ ապրի հայ խոսքը. հայ գիրը. որ հայրենի երկրի սերը շարունակի ջերմացնել հայ մարդկանց սրտերը: Նա մեկն էր սփյուռահայ այն գործիչներից. որ սրտանց ողջունեց սովետական կարգերի հաստատումը Հայաստանում. վերածնված հայրենիքի հետ կապելով համայն հայության ապագան:

Դալեմքյարյանը իր երկար կյանքի ընթացքում ձեռ է զարկել գրական շատ ձևերի. գրել է արձակ ու չափածո բանաստեղծություններ. փոքրիկ պատմվածքներ ու հոգեբանական մանրապատումներ: Նրա հուշագրությունները բերում են անցած օրերի կենդանի արձագանքը. վերակենդանացնում դեմքեր ու դեպքեր. որոնց հիշատակն այսօր բանկ է ամեն մի հայի համար: Դալեմքյարյանի գրական վաստակի զգալի մասն են կազմում հոդվածները. հրապարակագրական երկերը. որոնք գրված են ժամանակի պարբերականներում: Գրագիտուհին ինչ որ կարողացել է ամփոփել է 1952-ին լույս տեսած «Կյանքիս ճամբեն» ստվար հատորում. որ հեղինակի փորձություններով լի կյանքի հուզիչ պատմություն է կազմում:

***

Արվեստի աշխատողների տան տեղի ունեցած երեկոյին շատ ջերմ խոսքեր ասվեցին սփյուռահայ գրագիտուհու հասցեին: Նրա կյանքի ու գործի մասին պատմեցին Գ. Սեյլանը. Ա. Երիցյանը. Գ. Ստեփանյանը:

Երեկոյի համերգային մասում կարդացվեցին Դալեմքյարյանի մի քանի գործեր: Երաժշտական կատարումներով հանդես եկան նաև իրանահայ երգիչ Աբա Հովհաննիսյանը. պոլսահայ դաշնակահար Հերման Միսեյանը: Ամերիկահայ հասարակական գործիչ Աբա Շիրազյանը կարդաց Զ. Դալեմքյարյանի՝ իր հետ ԱՄՆ-ից բերած մի անտիպ բանաստեղծություն:

Երեկոյի մասնակիցների անունից շնորհավորական հեռագիր ուղարկվեց վաստակավոր գրագիտուհուն:

Հոբելյանական երեկո՝ նվիրված Զ. Դալեմքյարյանի ծննդյան 90-ամյակին: Ամբիոնի մոտ է բանաստեղծուհի Մարո Մարգարյանը:

Լուսանկար՝ Վ. Ամալյանի

digitised by A.R.A.R.@



ՄԻԱՎԸ ԱՇԽՈՎԿԱՍՈՒՄ

ՇԱՀԵՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Տարիներ առաջ փոքրիկ, անհրապույր գյուղ էր Շենգավիթը՝ քաղաքից հեռու, մոռացված։ Միայն մի ձեռնարկություն կար այնտեղ՝ աղյուսի-կղմինդրի խղճուկ գործարանը։ Իսկ այսօ՞ր... այսօր հին Շենգավիթից միայն երկինքն է մնացել, նորից ջինջ ու կապուտակ, ինչպես առաջ։ Շենգավիթը միացել է իր թևերը լայնորեն տարածող Երևանին, դարձել Լենինյան շրջանի զարդերից մեկը։

Ու վերափոխվել են ամեն ինչ այստեղ՝ և՛ տները, և՛ այգիները, և՛ ճանապարհները, և՛ մարդիկ։ Վերափոխվել է աղյուսի-կղմինդրի գործարանը, նրա տխուր հուշեր արթնացնող փլատակների վրա հպարտորեն վեր է բարձրացել Անդրկովկասում միակ՝ կերամիկական իրերի հզոր կոմբինատը։

Բազմազան է կոմբինատի արտադրանքը։ Այն թողարկում է պեմզա-բլոկ՝ քիմիական արդյունաբերության համար, միջնորմային սալեր՝ շինարարության, և երկաթբետոնե սյուներ՝ գյուղատնտեսության, հատկապես խաղողագործության համար։ Սակայն կոմբինատի հիմնական արտադրանքը տարբեր տրամաչափի կերամիկական խողովակներն են, որոնք իրենց էժանությամբ, մանավանդ դիմացկունությամբ գերազանցելով թուջե խողովակներին, օգտագործվում են կոյուղիների կառուցման համար։

Կերամիկական խողովակների հումքը կավահողն է և այսպես կոչվող շամոտը՝ հրակայուն փոշին։ Կավահողը բերվում է ռուսական Արտյոմովսկ քաղաքից, իսկ շամոտը՝ Թումանյան բանավանից, որտեղ անապատ են դրանց պաշարները։

Երևանի կերամիկական իրերի կոմբինատի արտադրանքից։

Հումքով բեռնված երկաթուղային վագոնները ուղիղ մբտնում են կոմբինատի հումքի պահեստը, որտեղից սկսվում է կավահողի ու շամոտի երկար ու բարդ ճանապարհորդությունը՝ տարբեր բաժանմունքներով։ Տարբեր ուղղություններով անդադար աշխատող կոնվեյերներով դրանք փոխադրվում են հումքի չորացման, դողորմման, աղացման, մաղման, խողովակների չորացման, վերնիճի և Քրծման բաժանմունքը, որտեղից արդեն պատրաստի խողովակները տեղափոխվում են պահեստ՝ տեսակավորման և պիտակավորման համար։

Հետաքրքիր գործողություններ են կատարվում հատկապես վերնիճի և՛ Քրծման բաժանմունքներում, որտեղ երեսպատվում են կերամիկական առարկաները, նրանց տալիս արտաքին ամրություն։

Բարձր տեխնիկական ցուցանիշներ ունի ձուլման հզոր վառարանը, որն աշխատում է Ղարադաղի բնական գազով։ Ակզբնական հատվածում վառարանի ջերմաստիճանը լինում է 60—150, կենտրոնում հասնում է մինչև 1280 աստիճանի, իսկ վերջում նորից իջնում է, հասնում սկզբնական վիճակին։ Վառարանի աշխատանքին հետևում են ավտոմատ սարքերը, որոնք ճշգրտորեն արձանագրում են վառարանի առանձին հատվածների ջերմաստիճանը։

Նախատեսվում է այս տարի արտադրել մինչև 7,5 հազար տոննա խողովակ։ Դա կբավարարի և՛ մեր հանրապետության, և՛ եղբայրական Վրաստանի ու Ադրբեջանի պահանջները, որոնք կերամիկական խողովակների հսկայական պատվերներ են ներկայացրել։

Երևանի կերամիկական առարկաների կոմբինատը մեծ հեռանկարներ ունի։ Այստեղ 1965 թվականի առաջին եռամսյակից սկսվելու է երեսպատման սալիկների և հատակավորման սալերի արտադրությունը, որոնք օգտագործվելու են նորակառույց շենքերի կոմունալ օգտագործման սենյակները երեսապատելու համար։

Այժմ, երբ մտնենք կոմբինատի ընդարձակ տերիտորիան, առաջինը ձեր ուշադրությունը կգրավեն նորակառույց հսկա մասնաշենքերը, որտեղ սկսվել են հայրենական և գերմանական սարքավորումների շինմոնտաժային աշխատանքները։ Կոմբինատում լաբորատոր փորձարկումներ են տարվում նաև սանիտարա-տեխնիկական իրերի արտադրության համար։ Այժմ այդ փորձարկումները համարյա ավարտված են և սկսվել է նոր արտադրանքի համար կառուցվող վառարանի գազիֆիկացումը։

Կանցնի կարճ ժամանակ և մեր փականագործները, կոյուղիների շինարարության բնագավառում, այլևս գործ չեն ունենա ծանր ու տեղադրման համար դժվար թուջե իրերի



digitised by A.R.A.R.@

հետ, քանի որ դրանց փոխարինելու կգան կերամիկայից պատրաստվող սանիտարատեխնիկական ձևավոր իրերը:

Այս հետաքրքիր միտքը կոմբինատում հղացավ այն ժամանակ, երբ պարզվեց, որ Ալավերդու պղնձաձուլարանի թափուկները կարող են անփոխարինելի հումք հանդիսանալ կերամիկական ձևավոր իրերի արտադրության գործում:

Հայաստանի բնական այլ հարստություններ օգտագործելու նպատակով կոմբինատը Լենա-մետալուրգիական գիտահետազոտական ինստիտուտի հետ փորձարկել է բազալտի մանրուքից խողովակների արտադրության հնարավորությունը և գարմանալի արդյունքների է հասել: Այն ժամանակ, երբ նույն տրամաչափի թույլ խողովակը դիմանում է ընդամենը 9-ից 10-ը մթնոլորտային ճնշման, բազալտից պատրաստվածը դիմանում է մինչև 30 մթնոլորտային ճրնշման:

Հսկայական շինարարական աշխատանքներ են գնում Հայաստանում: Գործարկման պետք է գցվեն արտադրական նոր կարողություններ, նախատեսվում է կառուցել 250 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, դպրոցներ, առողջապահական շենքեր և այլն: Այս ազնիվ գործում իր պատվավոր բաժինն ունի նաև Երևանի կերամիկական իրերի կոմբինատը, որի արտադրանքը մեծ խնայողություն կտա երկրին, ավելի ճաշակով ու գեղեցիկ կդարձնի մեր բնակարանները՝ զգալիորեն հեշտացնելով շինարար մարդկանց աշխատանքը:

Կոմբինատի կառուցվող արտադրամասերի ընդհանուր տեսքը:

Լուսանկարները՝ Բ. Գազազյանի



ԼԵԳԵՆԴԱՐ ԳԱՅԻ ՀԱՆՁՆԱԿԱՏԱՐԸ

(Մի նամակի հետևերով)

Մեր ամսագրի 1964 թվականի փետրվարի համարում տպագրվել էր հոդված «Հայ ժողովրդի պանծալի վավակը» խորագրով: Հոդվածում պատմվում էր քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս, երկաթյա դիվիզիայի հրամանատար Գայի (Հայկ Բժշկյանի) կյանքի ու գործունեության մասին: Ջետեղված էր և անտիպ մի նկար, որը ներկայացնում էր Գային իր մարտական ընկերների հետ: Ովքե՞ր էին այդ մարտական ընկերները՝ նկարը տպագրելու ժամանակ հնարավոր չեղավ պարզել...

Անցավ մեկ ամիս և ահա խմբագրությունը ստացավ մի այսպիսի նամակ.

«Հարգելի խմբագրություն.

Ձեր ամսագրում լույս տեսած «Հայ ժողովրդի պանծալի վավակը»՝ հոդվածում, որ նվիրված է Հայկ Բժշկյանին, տպագրված է նաև նրա մարտական ընկերների լուսանկարները: Խնդրում եմ հնարավորության սահմաններում հայտնել լուսանկարում եղած ընկերների անուն-ազգանունները, նրանց ով լինելը: Լուսանկարում եղած անձնավորություններից մեկը (աջից առաջինը) իմ հայրն է՝ Խաչատուր Բարսեղյանը: Խնդրում եմ գրեք՝ ճի՞շտ եմ ես և որտեղի՞ց է վերցվել այդ նկարը:

Բարևներով Գարեգին Խաչատուրի Բարսեղյան.

Բասարգեչարի շրջանի Բասարգեչար գյուղի բնակիչ»:

***

Ստանալով այս նամակը խմբագրությունը սկսեց ուսումնասիրությունները: Պարզվեց, որ այդ խմբանկարը, մի շարք այլ նկարների հետ մեր հոդվածի հեղինակ Մկրտիչ Զեյթաղյանն է գտել Ռիգայում. Հայկ Բժշկյանի այրու մոտ:

Նկարում ձախից առաջինը լեգենդար կորավար Հայկ Բժշկյանի հանձնակատար Տիտանն է, երկրորդը Հայկ Բժշկյանն ինքն է, երրորդը ավագ հետախույզ Միցկևիչը և չորրորդը Հայկ Բժշկյանի հանձնակատար Խաչիկ Բարսեղյանը, որին Գայը, նրա կինը՝ Լիան և տանեցիները բարեկամաբար կոչել են Խաչի:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց առաջին տարում, Բասարգեչար գյուղի բնակիչ Խաչիկ Բարսեղյանը կորակոչվում է ցարական բանակ: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խաչիկը մտնում է Գայի հրամանատարությամբ գործող կորամասի շարքերը և մինչև քաղաքացիական կռիվների հաղթական ավարտը, ամենուր ուղեկցում Գային:

Խաչիկ Բարսեղյանը համարվել է Գայի տան անդամը: Նա անսահման նվիրված էր Գային և ինչպես ստվեր ամենուր հետևում էր նրան: Ջանիցս վիրավոր Գային նա գրկած հանել է թշնամու գնդակների տարափից, իսկ վիրավոր օրերին չի հեռացել նրա մոտից: Հենց նրա սենյակում էլ, մեջքը դեմ տալով դռանը, քնել է, հսկել իր հրամանատարին:

Ինչպես պատմում է Գայի այրին, Խաչիկը եղել է բռնկվող, տաքարյուն, բայց քաջարի մի երիտասարդ: Երբ Գայը մոտենում էր Խաչիկին, նա անմիջապես խաղաղվում էր, երեխայի նման դառնում հեզ, բարի:

Մարտերում մի քանի անգամ վիրավորվելուց հետո, հաշմանդամ Խաչիկ Բարսեղյանը 1922 թվականին վերադարձել է իր հայրենիք՝ Գեղարքունյաց երկիրը՝ Բասարգեչար գյուղը:

Բնավորությամբ այնքան համեստ է եղել Խաչիկը, որ համագյուղացիներից շատերը նույնիսկ չեն էլ իմացել, որ նա եղել է քաղաքացիական հերոսամարտերի վետերաններից մեկը, լեգենդար Գայի հանձնակատարը: Ու այդպես էլ համեստ, առանց իր շուրջն աղմուկ բարձրացնելու մահացել է 1941 թվականին:

Խաչիկ Բարսեղյանի մասին հետաքրքիր հիշատակություն է թողել նաև Գայը՝ «Մեծ ճանապարհի էտապները» խորագրով իր հուշերի գրքում: Ահա մի հատված այդ հուշերից:

«... Երբ գիշերը ծանր մարտերից հետո գրավեցինք Նովո-Ավենցյանը, դրպրոցի շենքում ինձ ու Վիլումսոնին տրամադրվեց մի լուսավոր սենյակ: Վիլումսոնը քնեց, իսկ ես չկարողացա քնել, ուղեղումս շաղափում էին Վիլնոյի գրավման առաջիկա գործողությունները: Հանկարծ հարևան սենյակից լսեցի հանձնակատարներ Խաչիկի և Տիտանի վիճաբանության ձայները:

— Է, հոգիս, դու ոչինչ չես հասկանում,— գոչում էր Խաչին:

— Ինքդ ոչինչ չես հասկանում — նույնպես գոչում էր Տիտանը:

Ջնեցի: Լուսադեմին արագ հագնվեցի, գնացի հանձնակատարների սենյակը:

— Դե, պարկերը պատրա՞ստ են,— հարցրի Տիտանից:

— Ճիշտ այդպես, երկու պարկ ծխախոտով և երկու պարկ գինով լի՝ պատրաստ են: Ո՞ւր կհրամայեք տանել:

— Մեկ հետ կտանենք հիվանդանոց,— ասացի ես:

— Ինչպե՞ս, մի՞թե այն պետք է բաժանենք լեհական վինվորներին ու սպաներին,— պարմացած հարցրեց Տիտանը:

— Իհարկե,— պատասխանեցի ես,— մի՞թե քո կարծիքով նրանք մարդ չեն, ծխելու և կամ խմելու ցանկությունից զուրկ:

— Ոչ, ոչ, նա չի հասկանում: Ես էլ ասացի և նա չի հասկանում, Տիտանի փոխարեն պատասխանեց Խաչին:

— Դե լավ, վերցրեք պարկերը գնանք:

Մեկ ընդունեց հիվանդանոցի գլխավոր բժիշկը:

— Բժիշկ, Ձեզ մոտ լեհ վիրավոր և հիվանդ վինվորներ կա՞ն:



Նկարում՝ (ձախից աջ) հանձնակատար Տիտան, Հայկ Բժշկյան (Գայ), ավագ հետախույզ Միցկևիչ, հանձնակատար Խաչիկ Բարսեղյան:

digitised by A.R.A.R.@

— Այո, հարյուր յոթանասուն ճոգի:
— Իսկ լեհական սպանե՞ր:
— Ո՛չ, սպաներ չկան:

... Երբ վինվորների հիվանդասենյակից դուրս եկանք, միջանցքի աջ կողմում նկատեցի դուռ: Մոտենալով դռանը, հարցրի գլխավոր բժշկից:

— Իսկ այստեղ ի՞նչ է, բժիշկ:

Բժիշկը խոնարհելով գլուխը, մեղմ պատասխանեց:

— Սպիտակեղենի սենյակն է:

— Ապա բացեք, բժիշկ:

Բժիշկը գունաթափվեց, բոլորովին շփոթվեց: Դողացող ձեռքերով բացեց դուռը: Սենյակում դրված երեք մահճակալներում պառկած էին երեք վիրավորներ, որոնց խնամում էր բուժքույրը: Նրանց արտաքինից երևում էր, որ սպաներ են: Վիրավորներից մեկը հենվելով արմունկների վրա, բարձրացավ և վախեցած դեմքով, աուսերեն դիմեց ինձ.

— Մի՞թե դուք եկել եք մեզ, վիրավորներիս գնդակահարելու:

— Դուք թյուրիմացության մեջ եք, պարոն սպա: Մենք ոչ միայն վիրավորներին, այլև անզեն վիրավորներին ձեռք չենք տալիս: Մենք եկել ենք ձեզ այցելության, ցույց տալու օգնություն, եթե դրա անհրաժեշտությունը կգում եք,— թեքվելով դեպի Խաչին ու Տիտանը, կարգադրեցի,— տվեք յուրաքանչյուրին մեկական տուփ սիգար և լիկյոր:

— Օ՛, շնորհակալություն, պարոն հրամանատար: Չնայած Ձեր աստիճանն ու ազգանունը մեզ հայտնի չէ, սակայն դուք շատ բարի եք, մարդկային:

— Ձեզ ոչ մի վտանգ չի սպառնում, իսկ բուժումից հետո ցանկացողը կարող է մտնել լեհական կարմիր բանակը:

— Ես Վիլնոյից եմ, ազգանունս Դոմբրովսկի: Վիլնոյում թողել եմ մայրիկիս, քրոջս առանց որևէ ապրուստի միջոցի, չգիտեմ նրանք ինչպես են ապրում... էխ, անիծյալ պատերազմ,— սպայի աչքերը լցվեցին արցունքով:

— Միք հուսահատվի, այդ հարցում էլ ձեզ կօգնեմ, շուտով կգրավենք նաև Վիլնոն: Գրեք նամակ ձեր մայրիկին, անձամբ կհանձնեմ: Նամակն ուղարկենք այսօր, երրորդ հեծյալ կորպուսի շտաբը, դպրոցի շենքումն է:

— Օ, անսահման ուրախ եմ, իսկ ո՞ւմ հասցեագրել, դուք շտաբի աշխատո՞ղ եք: Ձեր ազգանո՞ւնը:

— Ես երրորդ հեծյալ կորպուսի հրամանատարն եմ, ազգանունս՝ Գալ:

— Ի՞նչ... այդ Դո՞ւք... Մենք կարծում էինք... մեզ պատմել են...»:

✡✡✡

Գալի անպարտելի հեծելագնդերը գրավում են Վիլնոն: Մարտից հետո հաչիկը շրջելով անծանոթ քաղաքի փողոցները, գտնում է լեհ սպայի՝ Դոմբրովսկու մայրիկին և առաջնորդում Գալի առանձնասենյակը: Գալը իր խոստման համաձայն որդու նամակն անձամբ հանձնում է ձեր կնոջը և իմանալով նրա ծանր վիճակը՝ ցույց է տալիս նաև դրամական օգնություն:



«ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱՊԱԳԱՆ ԿԿԵՐՏՎԻ ԱՅՍՏԵՂ»

ՇԱՓԵ ՎԱՐՍՅԱՆ

Սփյուռքահայ քսաներկու ուսուցիչ-ուսուցչուհիներ մոտ երկու ամիս հայրենիքում հյուրընկալվելուց հետո նորից մեկնեցին օտար ափեր, մեկննցին այնտեղ, որտեղ իրենց հին սպասում հայրենիքից հեռու ծնված հազարավոր հայ մանուկներ՝ հաղորդվելու և հյորանալու համար հայրենի շնչով: Մեկնեցին նվիրվելու հայակերտումի մեծ ու շնորհակալ գործին: Սակայն մեկնեցին ոչ այնպես, ինչպես եկան:

— Կարճ ժամանակի ընթացքին եղած նվաճումները գիտության, արվեստի, լուսավորության և առհասարակ բոլոր մարզերուն մեջ, որոնք հաճախ կհասնին միջազգային չափանիշներու, ինծի իրավունք կուտան ճակատաբաց և հնքնավստահ նայելու մյուս ժողովուրդներու երեսին, և վրաս պարտականություն կդնեն ավելի եռանդով լծվելու հայ մանուկներու հայեցի դաստիարակության գործին: Ես հիացած եմ հայրենիքին մեջ իմ տեսածներովս: Հիացած և հյորացած:

Մեկնելուց առաջ այսպես ասաց Կալիֆորնիայից ժամանած ուսուցչուհի Արաքսի Անդիկյանը:

Հիացած, հյորացած...

Այսպես մեկնեցին սփյուռքահայ ուսուցիչները:

Եվ հիմա, ամեն անգամ, երբ նրանք դասարան են մտնում, ամեն անգամ, երբ հանդիպում են բարեկամների, ծանոթների, խոսել սկսելուց առաջ մի պահ իրենց մտածումի պաստառի վրա վերակենդանանում է այն ամենը, ինչ տեսել են հայրենիքում, այն ամենը, ինչ լսել և զգացել են: Եվ հավանաբար հուզվում են վերստին, ինչպես հուզվում էին այստեղ, երբ ցանկանում էին իրենց սրտի խոսքն ասել...

Արդարև, ինչպես չհուզվել, երբ մտածումի պաստառիդ վրա դարձյալ հայրենի տեսարաններ են, դաշտեր, լեռներ, ալգիներ, տներ, վարդագույն շենքեր ու շատրվաններ, երբ քեզ նորից ժպտում են հարյուրավոր մանուկներ ու պատանիներ, որոնք «իրենց աչքերուն մեջ ունին հայրենի երկինքին կապույտը և հոգիին մեջ՝ լեռներուն կանաչը». ինչպե՞ս չհուզվել, երբ նորից դէմդ հայրենի ճամփաներն են, երբ դեպի քեզ են երկարում բազմաթիվ հյուրընկալ ձեռքեր, հայ աշխատավորի, հայ գյուղացու, հայ ուսուցչի, հայ գիտնականի և արվեստագետի հայրենաշեն և հայրենաբույր ձեռքեր...

Ինչպե՞ս մոռանալ այն ջերմ ընդունելությունները, որոնց արժանացան սփյուռքահայ ուսուցիչները ամենուրեք:

✡✡✡

... Ավտոմեքենան ահա սուրում է Շիրակի դաշտավայրով: Մինչև Լենինական դեռ քսանհինգ կիլոմետր ճանապարհ կա: Ուսուցիչների հայացքը կանաչածուփ դաշտերի վրայով ջանում է ընկալել և հիշողության մեջ քանդակել հայրենի բնության ամեն մի տեսարան, երբ հանկարծ մանկական երգի հորձանուտ մի ալիք գալիս ողողում է բոլորին: Դիմացից եկող երկու ավտոմեքենա ապդանշան են տալիս ու կանգնում խճուղու եզրին: Մոտ հիսուն լենինականցի դպրոցականներ, մի խումբ ուսուցիչ-ուսուցչուհիներ, ժողովրդական կրթության բնագավառի պատասխանատու աշխատողներ հայրենական ծաղիկների փարթամ փնջերով վազում են հյուրերին ընդառաջ:

Համբույրներ, ժպիտներ, նաև արցունքներ, սիրտ մաշող կարոտի, երկար անջատումից հետո միմյանց գտնող հարազատների սրտամորմոք արցունքներ...

Եվ ապա, հենց դաշտի մեջ բացվում է ասպնջական լենինականցիների սեղանը, բարի գալուստի բաժակներ են խփվում միմյանց, որին հաջորդում են պիոներների երգը, նվագը, ապա՝ հավաքական շուրջպարը:

Բայց սա միայն նախերգանքն է, սկիզբը: Այնուհետև, երկու օր շարունակ սփյուռքահայ ուսուցիչները լենինականցիների սիրելի հյուրերն են, նրանց գուրգուրանքի առարկան: Նրանք իրենց սփյուռքահայ քույրերին ու եղբայրներին հպարտությամբ ցույց են տալիս քաղաքի տեքստիլ կոմբինատը, արդիական սարքավորումներով նրա ընդարձակ բաժանմունքները, տանում են կապրոն գուլպաների գործարանը, որի արտադրանքը հիացմունք է պատճառում հյուրերին: Նրանք մյասին շրջում են քաղաքը, լինում տեսարժան վայրերում, ծաղկով ու կանաչով պարդարված պրոսպեկտներում, դպրոցներում:

Ահա և Լենինականի Ֆիլհարմոնիայի սրահը: Բեմի վրա թնդում է, ալեկոծվում պիոներների պալատի երգի-պարի մանկական անսամբլի պարը: Ինչպե՞ս են պարում 9—13 տարեկան սևաչվի ու թխահեր այս հայ մանուկները, ինչպիսի՛ թափով, խրոխտ ու հոգեխոռով ինչպիսի՛ ոիթմով: Նրանք նոր են վերադարձել «Արտեկ» միջազգային պիոներական ճամբարից, որտեղ ամբողջ մի ամիս մասնակցել են երգի ու պարի օլիմպիական աշակերտական մրցումներին, վերադարձել են հաղթական, ոսկե մեդալներ նվաճած:

Դժվար է բաժանվել ասպնջական Լենինականից, բայց առջևում դեռևս երկար ճանապարհ կա, հեռվից կանչում ու գերում է Լոռվա գեղեցկուհին՝ Կիրովականը:

digitised by A.R.A.R.@





Եվ ավտոբուսը առաջ է սլանում:

Մոտ մեկուկես ժամվա ճանապարհ, և ահա երևում է կանաչ, գանգրախիտ անտառներով շրջապատված քաղաքը՝ դեպի երկինք խոյացող իր գործարանների ծխնելույզներով:

Նորից ջերմ դիմավորում, սրտագին հյուրընկալություն, այցելություն մետաքսաթելի հսկայական կոմբինատին, հանդիպում «Հայաստանի Արտել» պիոներական ճամբարի երեխաների հետ և ավտոմեքենան ուղղություն է վերցնում դեպի Թբիլիսի:

Սփյուռքահայ ուսուցիչները իրենց կյանքի ամենահուզումնալի պահերից մեկն են ապրում, երբ այցելում են Ս. Գեորգ եկեղեցու բակում գտնվող անմահ Սայաթ-Նովայի գերեզմանը և այնտեղ դնում մի մեծ ծաղկեփունջ: Տիրում է երկարատև լռություն, բոլորի գլուխները խոնարհված են դեպի շիրմաքարը, բոլորը մտովի կարդում են հանճարեղ աշուղի ու բանաստեղծի խորախորհուրդ տողերը.

Ամեն մարթ չի՛ կանա խըմի՝ իմ
ջուրըն ուրիշ ջըրեն է.
Ամեն մարթ չի կանա կարթա՝ իմ
գիրըն ուրիշ գըրեն է.
Բունիաթըս ավազ չիմանաս՝ քարափ
է. քարուկրեն է:

Խոկման, ինքնահայեցողության պահեր են, ոչ ոք չի ուզում շարժվել, բայց Նրանք մի սրբազան պարտք էլ ունեն, Նրանք պետք է այցելեն հայ գրողների և արվեստի գործիչների Թբիլիսիի պանթեոնը:

... Ահա կողք-կողքի թաղված են հայ մշակույթի սիրելի, թանկագին, նշանավոր ներկայացուցիչների աճյունները. Րաֆֆի, Թումանյան, Սունդուկյան, Զիվանի, Ծերենց, Մուրացան, Նար-Դոս, Մակար Եկմալյան, Պռոշյան, Գրիգոր Արծրունի, Հակոբ Հակոբյան և դեռ ուրիշներ. նվիրական ու սիրելի ուրիշ դեմքեր...

— Հանգիստ ձեր աճյուններին, այս պանթեոնի մեջ թաղված մեծ հայեր, մենք կերդնունք վառ պահել ձեր հիշատակը օտար ու ամայի ճամփեքի վրա հասակ առնող հայ մանուկներու սրտերուն մեջ, հայ ամենապոր գիրով ու բառով պինել պանոնք հայկակուլ հոսանքի դեմ...

Այս խոսքերով են հեռանում սփյուռքահայ ուսուցիչները պանթեոնից:

Հաջորդ օրը ուսուցիչների խումբը Դիլիջանում է, նրա հրաշագեղ անտառների գրկում և այս անգամ արդեն հանդիպումներ է ունենում հայ արվեստի կենդանի ներկայացուցիչների հետ: Լեռնալանջում՝ մրգատու ծառերով շրջապատված, կանգնած են Սովետական Հայաստանի կոմպոզիտորների միության ստեղծագործական տները: Այստեղ են Առնո Բաբաջանյանը, Ալեքսանդր Հարությունյանը, Ալեքսանդր Աճեմյանը, Գևորգ Արմենյանը և այստե՛ղ է ահա հայ նկարչության մեծ ու հանճարեղ ներկայացուցիչ, մեր անկուգական Մարտիրոս Սարյանը:

Հեռանալիս, որպես պատգամ, սփյուռքահայ ուսուցիչները իրենց հետ տանում են ծերունազարդ վարպետի խոսքերը.

— Ուր էլ որ լինեք, բարձր պահեք հայի անունը...

***

Եվ հիմա, երբ վերադարձել են օտար ափեր, սփյուռքահայ ուսուցիչների հիշողության մեջ նորից ու նորից վերակենդանանում է այս բոլորը:

Ահա նրանք նստած են ծարտարապետների տան դահլիճում և դասախոսություններ են լսում հայ ժողովրդի պատմության, հայոց լեզվի ծագման, հայ գրականության, գրականագիտական հարցերի, Սովետական Հայաստանի գյուղատնտեսության, արդյունաբերության, արվեստի, մանկավարժության զարգացման և այլ թեմաների մասին: Նրանց աչքերի առաջ կրկին պատկերվում են սիրելի դասախոսների՝ Բարկեն Առաքելյանի, Գ. Ջահուկյանի, Մ. Մկրյանի, Գ. Սևակի կերպարները, ապանձին ջերմությամբ հիշում են Մորուս Հասրաթյանին, որը ընկերացավ դեպի Գառնի, Գեղարդ, Էջմիածին, Զվարթնոց և Աշտարակ կատարած նրանց շրջագայություններին և իր գիտական բացատրություններով տպավորությունները դարձրեց ավելի ամրողջական:

Նրանց մտածումի պատառի վրայով ահա անցնում է քաղաքամայր Երևանը՝ իր Մատենադարանով, օպերայով, իր գեղեցիկ հրապարակներով ու պողոտաներով, իր համալսարանով ու մանկական երկաթգծով, իր ընդարձակ ու լուսավոր դպրոցներով:

Իսկ հապա ա՛յցը Օշականում թաղված առաջին հայ ուսուցչին՝ Մեսրոպ Մաշտոցին: Նրանք ծնկաչոք խոնարհվում են դարեր շարունակ պահպանված համեստ այս շիրմի առաջ, որ իր մեջ ամփոփում է հայ ժողովրդի ամենամեծ վավակի աճյունը, խոնարհվում են, համբուրում շիրմաքարը, և շատերի աչքերից հոսում են արցունքներ: Նրանցից յուրաքանչյուրը մտովի պրուցում է իր Մեծ ուսուցչի հետ, նրան պատմում այն դժվարին գոտեմարտի մասին, որ այժմ աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի բեկորները մղում են ընդդեմ սպիտակ ջարդի, ընդդեմ հայակուլ հոսանքների, պատմում այն անասելի վոհաբերությունների ու վրկանքների մասին, որ իրենք, սփյուռքահայ ուսուցիչները, հանձն են առնում ամենուրեք՝ Ամերիկայում և Ֆրանսիայում, Կիպրոսում և Եթովպիայում, Սիրիայում և Լիբանանում՝ հայ մանկան շրթներին նվիրագործելու համար Մեսրոպյան ոսկեղենիկ լեզուն:

Եվ նրանց մտածումների որպես արձագանք հնչում է Հալեպի Մեսրոպյան ավագային վարժարանի ուսուցիչ Տիգրան Գյուլլուպյանի ձայնը.

— Հայ գիրի և դպրության ստեղծող մեր Մեծ ուսուցիչ, անմարելի լույսի դուն առաջին ջահակիր, կերդնունք սփյուռքի բոլոր անկյուններուն մեջ, ի գին բոլոր վոհողությանց, վառ պահել այն ջահը, որ դուն մեկի հոխանցեցիր 16 դար առաջ, կերդնունք անաղարտ պահել մեսրոպատառ հայոց լեզուն:

Եվ ապա հայրենիք այցելած սփյուռքահայ ուսուցիչների հայացքի դիմաց վեր է խոյանում մի գրանիտյա հուշասյուն, որը հայ ժողովուրդը, հայրենիքի կառավարությունը կանգնեցրեց Օշականի մուտքի մոտ, կանաչ այգիների ֆոնի վրա, Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակի առթիվ:

Նրանք երկյուղածությամբ կարդում են հուշասյան վրայի մակագրությունը.

«Եվ այր մի Մեսրոպ Մաշտոց, պատմական բախտորոշ մի պահի, իր հայրական աջով ծնեց մեր նորոգ և սքանչելի այբուբենը, որ իրավամբ կոչվում է Մեսրոպյան: Իր ժողովրդի վավակը՝ նա դարեր շարունակ հայրություն արեց նրան, մինչև որ հասան նորոգ և սքանչելի այլ օրեր, երբ ժողովուրդն է հայրություն անում իր մեծագույն վավակին՝ երախտագիտությամբ և հպարտությամբ»:

Նկարներում (ձախից աջ)՝ 1. ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը սփյուռքահայ ուսուցիչներին տալիս է իր իճճնագիրը: 2. Սփյուռքահայ ուսուցիչները Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի գործվածքային բաժանմունքում: 3. Գտնիի ճերմանոսական տաճարի ավերակների մոտ:

Լուսանկարները՝ Վ. Ամալյանի

Այո՛, հասան նորոգ և սքանչելի ժամանակներ, ամրապնդվեց և առնականացավ երիտասարդ Սովետական Հայաստանը և այժմ նա հայրություն է անում անխտիր իր բոլոր վավակներին, նրանց, որ ապրում են հայրենի հողի վրա, և նրանց, որոնք դեռևս թափառում են օտար երկրներում:

Արդեն երրորդ տարին է, ինչ տարբեր երկրներից սփյուռքահայ ուսուցիչներ են հրավիրվում հայրենիք:

«Ասկե ավելի մեծ պատիվ մը չի կրնար երևակայել ուսուցիչ մը՝ որ իր բովանդակ կյանքը տրամադրեր է հայ լեզվի ուսուցման, հայրենիքեն դուրս հայը հայ պահելու նվիրական պարտականության: Ահա թե ինչ կնշանակե *հայրենիք* ունենալ, գնահատող, լուսամիտ հայրենիք»— իր տպավորությունների մեջ գրել է ուսուցչուհի Արաքսի Անդիկյանը:

Իսկ Թեքեյան վարժարանի տնօրեն Երվանդ Բաբայանը իր հայրենական տպավորությունները եզրափակել է հետևյալ խոսքերով. «Հայ ժողովրդի ապագան կկերտվի այստեղ, հայրենի նվիրական հողին վրա»:

Սիրելի, թանկագին սփյուռքահայ ուսուցիչներ, հայ ժողովրդի ապագայի կերտմանը մասնակցում եք նաև դուք, նվիրյալ խնկարկուներդ հայոց լեզվի ու դպրության: Հայրենադարձ հայերի կարավանները հաջորդում են միմյանց: Այսօր տուն են վերադառնում պանդուխտ հայը, պանդուխտ երիտասարդն ու մանուկը: Նրանց շրթներին դո՛ւք եք դրոշմել մայրենի լեզուն, դուք եք նրանց սովորեցրել սիրել հայրենի մշակույթը և հայրենիքը:

Իզուր չէ, որ հայրենիքի ժողովուրդը ձեզ ամենուրեք ասում էր «շնորհակալություն»:

digitised by A.R.A.R.@

ՄԵՏԱԹԱՐՄ, ԿԵՆՍՈՒՆԱԿ ԱՐՎԵՍՏ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐԱՔՄՄԱՆՅԱՆ



ԱՐՈՒՍ ԱՍԼՅԱՆ

... Քիֆլիսը հեղեղված էր ապդագրերով՝ «Հո՞ երթաս», «Հին աստվածներ»: Ամեն անգամ դասերից տուն դառնալիս, փոքրիկ Արուսը կանգնում էր ապդագրերի առջև և խոշոր աչքերը լայն բացած՝ կարդում էր, կարդում: Նա անգիր էր արել դերասանների անունները՝ Հասմիկ, Օլգա Գուլալյան, Զապել, Արուս Ոսկանյան, Աստղիկ Երամյան, Շարա Տալյան, Հովսեփ Ոսկանյան... Եվ մի օր, դասերից հետո, Արուսը քայլերն ուղղեց այն ակումբի կողմը, որտեղ ներկայացումներ էր տալիս դրամա-օպերետային խումբը: Հենց առաջին օրը նա միանգամից տեսավ բոլորին: Տեսան, նկատեցին և նրան: Սիրունիկ աղջիկ էր, չնկատել չէր կարելի:

Հ. Ոսկանյանը տեսնելով նրան ասաց.

— Էս ի՞նչ նման է Ալնիվ Հրաչյային...

Դերասանները քիչ-քիչ այնքան ընտելացան աղջկան, որ նրա ներկայությունը պահանջ դարձավ ամենքի համար: Արդեն գիտեին, որ Արուսը հաճելի ձայն ունի և վատ չի արտասանում: Նա գիտեր օպերետների գրեթե բոլոր գլխավոր դերերը: Եվ մի օր կատարվեց անսպասելին: Հայտարարված էր «Ասլի և Քյարամ»-ը: Բոլոր տոմսերը վաճառված էին: Ինչ-որ վեճի պատճառով Հ. Ոսկանյանի խմբից ներկայացման նախօրյակին բաժանվում է օպերետային «թևը»: Ներկայացումը հանել, նշանակում էր նյութական ու բարոյական մեծ վնաս կրել: Եվ ահա Ոսկանյանը Արուսին առաջարկում է խաղալ Ասլի: Միշտ ամաչկոտ Արուսը այս անգամ հանդգնություն է ունենում համաձայնելու: Այդ օրը Արուսը վաստակեց առաջին ծափերը: Հաջորդ առավոտյան արդեն խոսում էին երիտասարդ դերասանուհի Հրաչյա-Ասլյանի մասին: Երկու Արուսներին չշփոթելու համար Ոսկանյանը Ասլյանին շնորհել էր բեմական նոր անուն:

Արուսը գնաց թատրոն:

Մի քանի տարի երիտասարդ արտիստուհին հանդես էր գալիս օպերետներում: 1924-ին վերջապես նա ընդունվեց Թբիլիսիի հայ դրամայի խումբը: Մի շարք աննշան դերեր խաղալուց հետո 1925-ին ստացավ Շողակաթի դերը «Մեծապատիվ մուրացկաններում», որը հետագայում դառնալու էր դերասանուհու կենսագրության ամենափայլուն էջերից մեկը: Թբիլիսիում Ասլյանը խաղաց նաև Ելենա («Դասալիք կինը»), Շուշիկ («Մի կտոր հողի համար»), Դեմբի («Հին»), Մարսելլա («Պարտիզպանի շունը»), Սոնա («Խալխի նոքար»): Սոնան վերջին դերն էր Թբիլիսիում: Դերասանուհուն հրավիրեցին Լենինականի նորաստեղծ պետական թատրոն:

Այստեղ սկսվում է Արուսի բեմական կյանքի երկրորդ՝ ստեղծագործական հասունացման շրջանը: Թբիլիսիում նա թողել էր իր բնածին հմայքի հաջողությունները: Լենինականում վիճակված էր հմայքին բաղդատել կատարելագործված, գիտակցված արվեստը, իսկական պրոֆեսիոնալ վարպետությունը:

Ինչ ամպլուայով եկավ Ասլյանը Լենինական: Նրա բարետես արտաքինը, ելևէջող, ճկուն ձայնը, երգելու, պարելու շնորհքը ենթադրել էին տալիս, որ գործ ունեին սուբրետի տվյալներ ունեցող դերասանուհու հետ: Երևի հենց այդ տվյալները նկատի ունենալով էր, որ Վարդան Աճեմյանը իր անդրանիկ լենինականյան բեմադրության՝ «Բեկում»-ի մեջ Ասլյանին հանձնարարեց թեչևամիտ, պճնասեր Քաենիայի դերը: Ռեժիսորը չսխալվեց: Այս դերակատարումով մի տեսակ հաստատվեց Ասլյանի բեմական ամպլուան: Քաենիայից հետո Ասլյանի նշանակալից դերակատարումներն էին Յուլինկան («Արդյունավոր պաշտոն»), Ֆաթիման («Մարոկկո») և Վիրգինիան («Լեռը»): Եվ ահա վերջապես այն դերակատարումը, որին տարիներ շարունակ այլևայլ դերեր խաղալով նախապատրաստվել էր արտիստուհին. Պաշա՝ Կիրշոնի «Հաց» պիեսում: Դա դրամատիկմով հագեցած դեր էր:

Պաշայի դերակատարմամբ Ասլյանը կարծես վերջնականապես հաստատեց, որ անձուկ են այլևս իրեն վերագրված ամպլուայի սահմանները, որ նրա արվեստը կարող է ընդգրկել կոմիկականից մինչև դրամատիկականը:

1933 թվականի հուլիսին Լենինականի թատրոնում բեմադրվեց Պոգոդինի «Իմ բարեկամը»: Ասլյանին հանձնարարվեց երկու միջադեպիկ դեր՝ Հասակավոր կին և Լափող կին: Դերասանուհին հանդես էր գալիս նույն պատկերում, համարյա իրար ետևից: Սկզբում բեմ էր դուրս գալիս որպես ատամնաթափ, փոքր ինչ թլվատ մի պառավ: Նա դուրս էր գնում և քիչ հետո մրրիկի նման ներս էր խուժում Լափող կինը՝ «ահարկու» խառնվածքով, իր կանացի բարեմասնություններին ապավինած, ուրիշ աշխարհ, ուրիշ խառնվածք, այլ ռիթմ: Երկու դեպքում էլ գերակշռում էր կոմիկը՝ տարբեր որակի, տարբեր չափի, տարբեր արտահայտչամիջոցներով դրսևորված: Ապշեցուցիչ փոխակերպություն:

Մեկ տարի անց, երկար նախապատրաստությունից հետո, տեղի ունեցավ «Մեծապատիվ մուրացկանների» նշանավոր բեմադրությունը, որի հռչակը կարճ ժամանակում դուրս եկավ բաղաքի ու հանրապետության սահմաններից: Աբիսողոմ-Զոհրաբյան, Մանուկ աղա-Ամերիկյան և Շողակաթ-Ասլյան. դերասանական արվեստի գլուխգործոցներ, մեկը մյուսով պայմանավորված հաջողություն:

Շողակաթի դերակատարումը աչքի էր ընկնում ստեղծագործական վառ երեվակայությամբ ու անակնկալներով: Շողակաթը Ասլյանի ամենալայն արձագանք գտած ու դրվատանքների արժանացած դերակատարումներից մեկն է: Նրա խաղի մասին գրեցին Լենինականում, Երևանում, Թբիլիսիում, Բաքվում, ռուսական մամուլում:

Արևմտահայ հայտնի գրող Զապել Եսայանը Շողակաթով հիացած՝ ներկայացումից հետո հարցրել էր նրան.

— Պոլսեցի՞ եք...

— Ո՛չ, ծնվել եմ Լոռիում, Սանահին գյուղում,— ժպտալով պատասխանել էր Արուսը:

Եսայանը չէր թաքցրել զարմանքը. Ասլյանի Շողակաթը ոչ մի վայրկյան չէր մատնում դերասանուհու արևելահայ ծագումը:

«Մեծապատիվ մուրացկաններից» մի քանի ամիս անց Ասլյանը նորից ընտիպեց զարմանքով խոսելու իր մասին: Այս անգամ նա խաղաց Լուիզա:

Առաջին ներկայացումից հետո մամուլում գրվեցին այսպիսի տողեր. «Ասլյանի Լուիզան մինչև վերջ կերտված է լիրիկական պայծառությամբ»:

Եվ այսպես, Ասլյանը վերջնականապես հաստատեց, որ իրավունք և տվյալներ ունի դուրս գալու իր ամպլուայի շրջանակներից, մտնելու դրամայի և ողբերգության ոլորտները...

1935 թվականի վերջերին լենինականցիները առաջին անգամ բեմադրեցին արևմտաեվրոպական դասական կատակերգություն. Գոլդոնի, «Հյուրանոցի տիրուհին». Միրանդոլինա՝ Արուս Ասլյան: Վ. Աճեմյանն ստեղծեց հետաքրքրական, ճաշակով, հնարամտությամբ ու գյուտերով հարուստ ներկայացում: Ասլյանի Միրանդոլինան այդ բեմադրության ոգին էր: Միրանդոլինան հաջողություն էր:

Արբուզովի «Տանյա»-ն մի դրամա է կենսագրություն չունեցող աղջկա մասին, որը ծանր փորձությունների գնով ձեռք է բերում այդ կենսագրությունը: Մի ամբողջ հեղաշրջում մարդու կյանքում, նրա կենսաիալացքի մեջ: Ասլյանը մարմնավորելով Տանյան, հիանալի հասկացել էր, որ դերի հաջողության ամբողջ գաղտնիքը միևնույն հերոսուհու երկու հակապատկերն ստեղծելու մեջ է: Դժվարին, բայց շնորհակալ ստեղծագործական խնդիր, որ փայլուն լուծեց դերասանուհին: Դա Ասլյանի վերջին դերակատարումը եղավ Լենինականի թատրոնում: 1940-ի վերջերին արդեն իբրև վաստակավոր արտիստուհի նա տեղափոխվում է Երևան, Սունդուկյանի անվան թատրոն:

Արուսը երևանցիներին անծանոթ չէր: Եվ այսուհանդերձ, պահանջվում էր ուժերի կրկնակի լարում. հույսը չէր կարելի դնել արդեն ձեռք բերածի վրա: Հանդիսականը սպասում էր նոր աշխատանքների:

Սկսվեց Հայրենական պատերազմը: Մարտաշունչ այդ օրերին սունդուկյանցիները բեմադրում են Սիմոնովի

digitised by A.R.A.R.@

«Ռուս մարդիկ» դրաման: Ասրյանը առաջին անգամ իր բեմական կյանքում խաղ[illegible] է սովետական կնոջ դեր: Վալյայի դերակատարումը սկզբունքային հաջողություն էր. նոր էջ դերասանուհու արվեստում: Առանձնապես ուշադրություն գրավեց այն հանգամանքը, որ իր դերերը դունապարդել սիրող դերասանուհին Վալյայի դերը խաղաց գերագույն կսպվածությամբ ու պարկությամբ:

Ժամանակակից սովետական կանանց դերաշարքում մյուս կարևոր էջը Լյուբով Շևցովան էր («Երիտասարդ գվարդիա»): Այս դերակատարման մեջ երջանկորեն ներդաշնակվեցին դերասանուհու բոլոր առավելությունները և վերջին տարիների ու դերերի փորձը: Շևցովայի դերակատարման մեջ Ասրյանը հավաստիությունը զուգորդեց վառվոռուն թատերականության հետ:

Իսկական արվեստագետն իրեն բավարարված կարող է զգալ սոսկ այն դեպքում, երբ համընթաց է ժամանակին: Շփվելով իր ժամանակի հերոսների հետ, հաղորդվելով նրանց խոհերին ու ապրելով նրանցով, Ասրյանն ինքն էլ մի տեսակ հարստացավ գաղափարապես, ձեռք բերեց ստեղծագործության գեղագիտական նոր որակ: Հատկապես 1948—49 թ.թ. Ասրյանը շատ է խաղում, ավելի, քան երբևէ և գերազանցապես այժմեական դերեր (Կրուժկովա՝ «Մոսկովյան բնավորություն», Ռեյչել՝ «Դատապարտվածների դավադրությունը», Արևհատ՝ «Խիպախում», Ջուլետա «Փորձադաշտ» և այլն)...

... 1943-ի հունվարին հայ բեմում առաջին անգամ ներկայացվեց Լոպե դե Վեգայի «Այլոց համար հիմար, իրեն համար խելոք» կատակերգությունը: Վեց ամիս հետո նշվեց բեմադրության 50-րդ ներկայացումը:

Երևի դեռ ոչ մի դերակատարման համար Ասրյանը այնքան դրվատանք չէր ստացել, որքան Դիանայի համար: Սմեն ներկայացման ժամանակ տոմսարկղի վրա կախվում էր «Տոմսերը վաճառված են» ցուցանակը:

Դիանան իսպանացի կատակերգակի դժվարին կանացի դեղերից մեկն է: Միայն վարպետությամբ այդ դերը չես խաղա: Հմայք, անմիջականություն, խելք, հնարամտություն, ճկունություն... Ահա թե որքան օժտված պետք է լինի Դիանայի դերակատարը: Ասրյանի այս դերակատարումը մի տեսակ ի մի է բերում այն ամենը, ինչ նա կուտակել էր, յուրացրել իր գործունեության գրեթե 25 տարիների ընթացքում:

Վերջին տասը տարում Ասրյանի դերացանկում քիչ անուններ են ավելացել, սակայն եղածների մեջ էլ կարելի է գտնել հետաքրքիր, լիարյուն կերպարներ: Որոշ իմաստով նրա համար նորություն էր Հեղինեն Գ. Տեր-Գրիգորյանի «Գարնան անձրևում»: Այս դերակատարումը հոգեբանական պրպտումների մի ակնառու փորձ էր, որ պսակվեց հաջողությամբ: Հեղինեի տրամաբանական շարունակությունը (թեև ժամանակի առումով բավական ուշ) կարելի է համարել Մարգարիտը «Բրոուդիի ամրոցում»:

... Ակամայից մտաբերում ենք թեվավոր դարձած խոսքը՝ փոքր դեր չկա, կա փոքր դերասան: Այն դերը, որի մասին ուզում ենք մեր ակնարկի վերջում համառոտակի պատմել, և՛ փոքր է, և՛ փոքր չէ: Մի դեր, որ գրեթե խոսք չունի, ամբողջովին ամփոփված է հեղինակի նշագրումների մեջ և ամբողջովին կախված այն բանից, թե դերակատարը որչափ արտահայտիչ ու նշանակալից կդարձնի այդ անխոս կերպարը: Բեն Ալեքսանդրի մայրը՝ Վիլյամ Սարոյանի «Իմ սիրտը լեռներում է» պիեսում: Դա ապշեցուցիչ խաղ էր: Օտար ափերում տառապած ավանդական հայ կնոջ կերպարը ընդհանրանում էր լռության մեջ, մի հատիկ նախադասությամբ՝ «Հո՞րի կուրանաս քու անուշ բարբառ...». մեր լեռնաշխարհի մի հատիկ երգով, մի հատիկ մրմունջով... Ի՞նչ էր դա. պատահականությո՞ւն, ստեղծագործական երջանիկ դիպվա՞ծ, թե՞ դերասանական ամենաբարձր ու նուրբ արվեստի գեղեցիկ արտահայտություն: Դա արտիստական գլուխգործոց էր, բեմական կյանքի քառասունհինգ երկար ու ձիգ տարիների օրինաչափ արգասիք...

Շեքսպիրյան 400-ամյակի օրերին Սունդուկյանի անվան թատրոնը բեմադրեց «Ռոմեո և Ջուլիետը»: Եվ տիա Ա. Ասրյանը կրկին շողշողաց՝ խաղաց Ջուլիետի ծծմոր դերը: Համակ կյանք, հյութեղ ու կենսալի, որպես վերածընընդի իսկական կերպար: Եվս մի ապացույց, որ դերասանուհին հեռու է սպառվելուց: Նա նորից պատրաստ է թռիչքների...

Ասում են մարդը մնացել է երիտասարդ. նրա զգացմունքները, երաշխարհը, մտածելակերպը, երապանքները բուրում են երիտասարդական կենսունակությամբ, թարմությամբ: Կա նաև մի ուրիշ երիտասարդություն՝ բեմական: Սա արդեն պատկանում է արվեստի մարզին: Մշտաթարմ արվեստը նույնպես հաճելի է: Այն միշտ լիություն է բարձր վարպետության, ստեղծագործական անմար ոգևորությունների արտահայտություն: Հանձինս ժողովրդական դերասանուհի Արուս Ասրյանի մենք ունենք նման մի արվեստագետ. նա բեմի վրա չի թառամում, չի ծերանում... թեպետ բոլորել է արդեն իր կյանքի վեցերորդ տասնամյակը:

130 ՏԵՍԱԿԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐ

Երևանի տրիկոտաժի № 1 ֆաբրիկայում բողարկվում են բդյա, կիսաբդյա և մետաքսե 130 տեսակի հագուստներ: Ամռանը՝ Մոսկվայում տեղի ունեցած համամիութենական տոնավաճառում, ֆաբրիկայի արտադրանքի նմուշները արժանացան մասնագետների բարձր գնահատականին և երկրի առևտրական 46 խոշոր կազմակերպություններ ֆաբրիկայի հետ կնքեցին ավելի քան 24 միլիոն ռուբլու գործարք:

Վերջերս ֆաբրիկայում չահագործման հանձնվեց մի նոր արտադրամաս, որտեղ թափուկներից պատրաստվում են մանկական ձմեռային կոստյումներ, ձեռնոցներ ու գլխարկներ:

ՆՈՐ ԳՈՐԾՎԱԾՔՆԵՐ

«Երիտասարդական», «Վարդագույն», «Աբագած» այսպես են կոչվում Շահումյանի շրջանի մետաքսի կոմբինատի վերջերս բողարկած մետաքսե գործվածքները:

Բնական ու արհեստական մետաքսի և կապրոնի համակցումից ստացված գործվածքը նախատեսված է ներապակների, իսկ վարդագույնը՝ կանացի ամառային շրջազգեստի համար: Յուրահատուկ մուգ կապույտ երանգ ու փայլ ունի «Աբագած» գործվածքը, որը նախատեսված է կանանց տոնական շրջազգեստի համար:

Կոմբինատի բոլոր գործվածքներն էլ աչքի են ընկնում իրենց տեսքով, գույնով, երբությամբ ու դիմացկունությամբ:

Հայաստանի մետաքսե կտորի համբավը վաղուց դուրս է եկել հանրապետության սահմաններից: Այն այժմ ուղարկվում է տասը եղբայրական հանրապետություններ ու արտասահմանյան շատ երկրներ:







digitised by A.R.A.R.@



Պատանի ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ՄՈՏ

Մ. ԱՅՎԱԶՅԱՆ

Շատ ժամանակ չի անցել այն օրից, երբ Երևանում կազմակերպվեց Հ. Կոջոյանի անվան նկարչական դպրոցը: Իր գոյության ընթացքում դպրոցի կատարած բեղմնավոր աշխատանքը, չնորհալի երեխաների գեղարվեստական առողջ դաստիարակությունը, մանկական ստեղծագործության հաջող մասնակցությունը հանրապետական, համամիութենական, ինչպես նաև միջազգային ցուցահանդեսներին դեպի իրեն է սևեռում մեր հասարակայնության ուշադրությունը՝ առաջացնելով աշխույժ հետաքրքրություն:

Ահա այդ դպրոցի կյանքի ու ստեղծագործական աշխատանքի մասին է, որ ցանկանում ենք պատմել այստեղ: Հ. Կոջոյանի անվան նկարչական դպրոցի առաջին ընդունելությունը հայտարարվեց 1958—59 ուսումնական տարում: Դպրոցում մեր մայրաքաղաքի աշխատավորների երեխաները հնարավորություն ստացան զարգացնելու իրենց նկարչական ընդունակությունները և գեղագիտական դաստիարակություն ստանալ: (Նախքան այդ դպրոցը, Երևանում և հանրապետության այլ քաղաքներում գործել և այժմ էլ գործում են մի շարք ստուդիաներ):

Սկզբում դպրոցն ուներ 30-ից ոչ ավելի աշակերտներ, բայց նրանց թիվը տարեցտարի աճում է և այժմ այդտեղ սովորում են 150 շնորհալի երեխաներ: Սովորաբար դպրոցն ընդունվում են տասնամյա երեխաներ, որոնք սովորում են չորս, երբեմն էլ հինգ տարի:

Երեխաները զբաղվում են գեղանկարչությամբ, գծանկարով և կոմպոզիցիայով, այսինքն ազատ ստեղծագործությամբ, կիրառական արվեստով, անցնում են արվեստների համառոտ ընդհանուր պատմությունը:

Հինգ խանդավառ մանկավարժներ՝ երիտասարդ նկարիչներ Հ. Փիլոյանը (դպրոցի դիրեկտոր), Կ. Հովսեփյանը, Ս. Գրիգորյանը, Ս. Սիրեկանյանը, Ա. Ծովյանը, Ռ. Բաբյանը, աշխատելով պատանի նկարիչների հետ, հավատարիմ են իրենց հիմնական սկզբունքին՝ երեխաների մեջ խնամքով պահպանել ստեղծագործական անհատական հակումները, զարգացնել նկարչական երևակայությունը, միաժամանակ նրանց տալ նկարչության, գեղանկարչության ճիշտ ունակություններ, նրանց դաստիարակել՝ սերտորեն կապված կյանքի, արդիականության հետ:

Դպրոցի ամենաշնորհալի աշակերտները հնարավորություն ունեն ընդունվելու նկարչական տեխնիկում և ավարտել կրթությունը գեղարվեստական ինստիտուտում: Նրանք առանց դժվարության կարող են սովորել և այլ բուհերում, անենք՝ ճարտարապետական ֆակուլտետում: Դպրոցի աշխատանքի մասին ամենապերճախոս կերպով պատմում են հենց պատանի նկարիչների ստեղծագործությունները:

Դիտելով նրանց բազմաթիվ գծանկարները, գեղանկարչական աշխատանքները, ազատ հորինվածքները, համոզվում ես, թե որքան ճշմարտացի ու անմիջականորեն են պատկերում ծանոթ առարկաները կամ շրջապատող իրականության երևույթները, որ նրանք տեսել են անձամբ կամ ընկալել արվեստի ստեղծագործությունների, գրականության ընթերցման միջոցով:

Լայն ու բազմազան է կոմպոզիցիաների թեմատիկան՝ կապված ժամանակակիցների աշխատանքային կյանքի, կենցաղի, տոնական շքերթների, մանկական զվարճանքների, հեքիաթների նկարազարդումների հետ, ընդհուպ մինչև սովետական մարդու կողմից տիեզերքը նվաճելը: Միաժամանակ այդ աշխատանքներում զգում ես մանկավարժի անտեսանելի ձեռքը, որ զգուշաբար ուղղություն է տալիս սովորողի ստեղծագործական երևակայությանը, ըմբռնում յուրաքանչյուրի անհատական հակումները:

Պատանի նկարիչների լայն հետաքրքրություններն ու կապվածությունը կյանքի հետ դրսևորվում է նաև այլ կերպ: Այսպես, վերջերս, Երևանի պիոներների իններորդ հավաքի առիթով նրանք ձևավորեցին Կանաչի բանվորական ավանի մանկական գիշերօթիկ դպրոցի դահլիճները: «Քիմիայի հրաշքները», «Ժամանակը և ճարտարապետությունը», «Տիեզերք», «Ռադիոլոկացիա»— մեր երիտասարդությանը խորապես հուզող այս թեմաներն էին ընկած այդ դահլիճների ձևավորման հիմքում:

Պատանի նկարիչների կողմից այս լուրջ գործերի հետաքրքիր ու հաջող կատարման մեջ ներդրված էին շատ հնարանքներ, երևակայություն, ինչպես նաև հիմնավոր գիտելիքներ՝ վերցված գիտության ու տեխնիկայի տարբեր բնագավառներից:

Հ. Կոջոյանի անվան նկարչական դպրոցը սովորողների արդեն երկու շրջանավարտներ է տվել: Դպրոցի ֆոնդի նկարչական մեծ հավաքածուներում պահվում են շատ աշխատանքներ, որ նրանք կատարել են դասարանում և տանը:





Նկարներում՝ 1. Ստեղծագործական պարապմունք Հ. Կոջոյանի անվան նկարչական դպրոցի առաջին դասարանում (ղեկավար՝ Ռ. Բաբյան): 2. Արտո Հովսեփյան (13 տարեկան). ՆՈՐԱՇԱԿՈՒՅՑ ՔԱՂԱՔ: 3. Ժիրայր Արահեսյան (15 տարեկան). ԾԱՂԻԿՆԵՐ:

digitised by A.R.A.R.@



է. Եսայան (16 տարեկան). ԲԱԿԸ:



Վ. Քոչար (15 տարեկան). ՄՏՈՐՈՒՄ:
(Նկարը 1963 թվականին ցուցադրվել է Փարիզում՝ ԺԱՖ-ի ֆեստիվալում):

Ա. Սեդրակյան (13 տարեկան).
ՖՈՒՏԲՈԼԱՍԵՐՆԵՐԸ ՊԱՇՏՈՒՄ:

digitised by A.R.A.R.@



Աշոտ Մուսոյան (14 տարեկան). ՃԵՊԱՆԿԱՐՆԵՐ:

Մատիտով կատարված դիպուկ ու պլաստիկորեն արտահայտիչ դիմանկարային ուրվագծերը, համարձակորեն վրձնած «Ընտանիք» գեղանկարչական կոմպոզիցիան, ընդհանրացված բնանկարները վկայում են Վահան Քոչարի ակնհայտ տաղանդի մասին: Պատանի նկարչի պահպանված առաջին աշխատանքները ցույց են տալիս, որ դպրոցը ավարտելուց հետո նա ունեցել է ստեղծագործական մեծ տեղաշարժ:

Չափազանց անկեղծ են դպրոցի շրջանավարտ, շնորհալի գեղանկարիչ Սերգեյ Մարգարյանի ծաղկածորյան բնանկարները, նատյուրմորտը՝ կապույտ թեյամանով:

Վ. Քոչարը և Ս. Մարգարյանը յուրատեսակ ձևով են նկարազարդել Հովհ. Թումանյանի «Անհաղթ աքլորը» և «Սուտլիկ որսկանը» հեքիաթները, որոնք տեքստերի հետ միասին հավանորեն կհրատարակվեն առանձին գրքույկներով:

Իրոք քնարական են դեռահաս նկարչուհի Նենե Գյուլամիրյանի աշխատանքները, որոնք աչքի են ընկնում գույնի նուրբ արտահայտչականությամբ (գարնանային բնանկարները, «Զբոսայգում» և այլն):

Դպրոցի ամենապատանի սովորողներից է Լևոն Իսանյանը (9 տարեկան): Հովհ. Թումանյանի «Նեսոյի քարաքաղնիսը» ջրաներկ նկարազարդումը ուրախացնում է գրական ստեղծագործության երգիծական բովանդակության ընկալմամբ ու անքանակբոս կատարմամբ:

Պատանի նկարիչների ամենասիրելի թեմաներից մեկն է գարունը, որ պատկերվում է բազմազանորեն: Այսպես, Ժիրայր Աթանեսյանի մոտ գարունը բացահայտվում է խորհրդանշային ձևով: Լակոնիկ է բնության կերպարը. տակավին տերևազուրկ ծառ, մարդկային երկու ֆիգուր, թափանցիկ օդ՝ արևի վարդագույն ճառագայթներով գունավորված: Գրիգոր Նալբանդյանի մոտ այդ թեման նույնպես խորհրդանշային ձևով է մեկնաբանվում: Առաջին պլանի վրա խոշոր ձևով տրված են ծառերի ծաղկող ճյուղերը, որոնց վրա մեղրաճանճեր են նստած, իսկ հեռվում ուրվագծվում են Երևանի կառուցվող վարդագույն տները: Դա բնության վաքթոնքի պահն է, ստեղծարար մարդու գարունը:

Ժանրային թեմաները աշխույժ ու դիտունակությամբ են բացահայտվում շատերի ստեղծագործություններում: Այսպես օրինակ, Էդուարդ Ամիրբեկյանը սև ջրաներկով է պատկերում երեկոյան երևանյան փողոցը: Անձրև է տեղում: Մարդկանց հսկայական բազմությունը կանգնել է շախմատային տախտակի առջև: Խորն է նրանց հուզմունքը: Ռադիոյով հաղորդում են Միխայիլ Բոտվիննիկի և Տիգրան Պետրոսյանի աշխարհի շախմատային առաջնության մատչը: Մի այլ նկարում Արա Սեդրակյանը պատկերում է ֆուտբոլի ցավողներին ստադիոնում: Նկարիչը մեղմ հումորով կարողանում է հաղորդել մարդկանց մեծ պանգվածի ապրումները: Ճշմարտացիությունն ու անմիջականությունը իսկույն գրավում են դիտողի ուշադրությունը:

Պատանի նկարիչների աշխատանքների մասին դեռ շատ բան կարելի է պատմել: Բայց ամենից լավ է դիտել նրանց ստեղծագործությունները ցուցահանդեսներում: Իսկ այդ դպրոցի սովորողները հանրապետական և համամիութենական արդեն շատ հաշվետու ցուցահանդեսների մասնակիցներ են: 1961 թվականին նրանց ստեղծագործությունները ցուցադրվում էին մանկական ստեղծագործության միջազգային ցուցահանդեսներում Պրագայում և Չեխոսլովակիայի այլ քաղաքներում, 1963 թվականին՝ Ֆինլանդիայում և Բուլղարիայում: Այդ նույն թվականին նրանք մասնակցում էին նաև Ամերիկայում կազմակերպված սովետական երեխաների ստեղծագործության ցուցահանդեսին, իսկ այս տարի՝ Մարոկկոյում և Դանիայում: Աշխարհի կանանց միջազգային կոնգրեսի ժամանակ ցուցահանդեսում ներկայացված էին նաև դպրոցի սովորողների աշխատանքները, որոնք հետագայում նվիրվեցին կոնգրեսի պատվիրակներին: Դպրոցը խնամքով պահում է տարբեր հիմնարկներից ու կազմակերպություններից ստացված բազմաթիվ շնորհակալություններ ու պատվոգրեր:

Ինչպես նշեցինք, դպրոցի սովորողների թիվը տարեցտարի աճում է: Անհրաժեշտություն է դառնում բացել նաև քանդակագործական բաժանմունք: Վատ չէր լինի նաև խեցեգործական բաժանմունք ունենալ: Հարկավոր են լուսավոր դասարաններ, ցուցասրահ, գրադարան և պարապմունքների համար այլ հարմարություններ: Այդ ամենը դպրոցի նոր շենքի նախագծով արդեն նախատեսված է: Մնում է միայն արագացնել այդ շենքի կառուցումը: Այդ դեպքում կաճի սովորողների թիվը և կհասնի 250—300 մարդու:

Հ. Կոջոյանի անվան նկարչական դպրոցը ներկայումս ապրում է ստեղծագործական աշխույժ կյանքով՝ ցուցադրում աշխատանքի հիանալի արդյունքներ, որ խթանում են մանկական ստեղծագործության վերելքին, հանդիսանալով մեր պատանեկության մտավոր ու գեղագիտական զարգացման և կոմունիստական դաստիարակության լավագույն միջոցներից մեկը:

Ցանկանում եմ հոդվածն ավարտել վրձնի մեր խոշորագույն վարպետ Մարտիրոս Սարյանի խոսքերով: Նա իր «Հրաշալի ցուցահանդես է» տպավորության մեջ նկատել է այն արժեքավորը, ինչ այդ դպրոցը պատվաստում է աճող սերնդին: Նա գրում է.

«Մեծերը պետք է շատ բան սովորեն երեխաներից: Ամենաառաջինը անկեղծությունն է, որ նախ և առաջ աչքի է ընկնում երեխաների աշխատանքի մեջ: Դա հիացմունք է առաջ բերում: Դժբախտաբար, երբ մարդիկ մեծանում են, այդ թանկարժեք գանձը կյանքում գնալով կորցնում են: Դասատուները շատ բարեխիղճ աշխատանք ու ջանք են թափել պահպանելու այդ մեծ գանձը, որ կարողանան այդ հարըստությունը խնամել ու զարգացնել»:



Սերգեյ Մարգարյան (14 տարեկան). «Սուտլիկ որսկան» հեքիաթի նկարազարդումներից:

digitised by A.R.A.R.@

ՀԵՐՈՍԱՑՎԱԾ ԿՅԱՆՔ

(Նելսոն Ստեփանյանի մահվան
20-ամյակի առթիվ)

ԳՈՒՐԳԵՆ ՍԱՐՅԱՆ



Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի հուշարձանը Երևանի Կիրովի անվան մանկական զբոսայգում:
Լուսանկար՝ Պ. Պետրոսյանի

Ամեն անգամ վաղ ծմռան այդ օրը ես միշտ այցելում եմ մանկական զբոսայգին...

Փչում է մեղմ, սառնաշունչ քամին, սվվում ծառերի արանքներով, վնգստում կրպակների տանիքների վրա: Ու դալուկ տերևներն են մի պահ խաղում, օրորվում օդում, ապա սահելով ցած՝ անվրդով փռվում ծառուղիներին: Եվ թվում է, քայլում ես ահա հիացումով լի փափուկ անձեռակերտ գորգի վրայով...

Բայց այդ օրը՝ դեկտեմբերի 14-ին, ինձ այստեղ բերեցին ոչ բնության հրաշալիքները: Երեկո է: Մայրամուտ: Իջնում եմ ծառուղիով ցած՝ մտախոհ: Շուրջս այնքա՜ն մարդիկ կան, երեխաներ: Ու թնդում է այգին մանկական կվարթաձայն երգերից:

Մոտենում եմ Նելսոն Ստեփանյանի հուշարձանին: Ծաղկեպսակներ, ծաղիկներ... Այդ օրը՝ հերոսի մահվան քսանամյակին, պիոներական ջոկատները այստեղ պատվո պահակ են կանգնել, հավերժացրել սիրելի հերոսի հիշատակը, երդում տվել հավատարիմ լինել ժողովրդին, կոմունիզմին:

Ձեռքիս թարմ ծաղկեփունջը դնում եմ պատվանդանին...

***

Նելսոն Ստեփանյան: Ինչպիսի՜ նվիրական անուն: Նա իր մեջ մարմնավորել էր հարազատ ժողովրդի դարավոր իմաստությունը, սլացիկ միտքը, կգացմունքների խորությունը, առասպելական հերոսությունը, որ սահման չունի:

Նա ոռհվեց մարդկության ամենաոխերիմ թշնամու՝ հիտլերյան ֆաշիզմի դեմ մղված ճակատագրական պայքարում, ու ձեռք բերեց անմահություն, որ վախճան չունի...

Ծնվել է նա Ղարաբաղի Շուշի քաղաքում հիսունմեկ տարի առաջ: Բայց նա ծննդավայրում երկար չի մնացել: Ծնողները թողել են Շուշին, երբ նա դեռ մանուկ էր: Ապրել, մեծացել, սովորել է նա Երևանում: Բյուր երեխաների նման նա էլ չարաճճի է եղել: Ծիծաղել է, խաղացել, կվարճացել իր խաղընկերների հետ, երազել...

Պատանեկությունը իր հետ բերել է նոր ձգտումներ ու երազանքներ: Նելսոնին համակում է օդաչու դառնալու բուռն ցանկությունը, պատրաստում էր ինքնաթիռի մոդելներ, թռցնում դրանք: Նա հմտանում էր իր սիրած գործում: Շուտով սովորում է Բաքվի ռազմական դպրոցում: Ու ահա, երբ դառնում է տասնինը տարեկան, վերջապես ընդունվում է Բատայսկի օդաչուական դպրոց: Իրականանում է տարիների նրա երազանքը:

Վառվռուն պատանի էր Նելսոնը՝ կայտառ, ընկերասեր, խանդավառ տենչերով լեցուն: Նա որդիական ջերմ սիրով էր նվիրված իր հայրենիքին, իր սիրասուն ժողովրդին: Նա գերազանց ավարտում է օդաչուական դպրոցը, ապա բարձր թռիչքային դասընթացները, ավելի ու ավելի կատարելագործվում իր սիրած արվեստում:

Սովետական ժողովրդի հայրենական մեծ պատերազմը նա դիմավորում է որպես կոմունիստ-օդաչու՝ պատրաստ հայրենանվեր սխրանքների: Հայրենիքի սիրով ծովացած, նա կիրքով ատելությամբ է համակվում ատելի թշնամու հանդեպ: Եվ նա սովետական հայրենիքի վրա հիտլերյան բարբարոսների ուխտադրուժ հարձակման երկրորդ իսկ օրը մեկնում է ռազմաճակատ:

***

«Քանի դեռ կրծքումս բաբախում է սիրտս,— գրում է նա իր հարազատներին,— իմ սրբազան պարտքն է մինչև արյան վերջին կաթիլը պաշտպանել սիրած հայրենիքը, մեր գեղեցիկ սովետական ժողովուրդը, մեր ծաղկած քաղաքներն ու գյուղերը: Իմ տեղը հայրենիքը պաշտպանողների շարքերում է»:

Եվ նա գնում է պաշտպանելու իր հայրենիքը, իր ժողովրդին, իր ընտանիքը, հարազատ որդուն՝ իր փոքրիկ Վիլիկին, իր ծնողներին, որ անհուն կարոտը սրտերում տենչում էին նրան:

Սովետական ժողովրդի նման ահեղ էր Նելսոնի դատաստանը գերմանական ֆաշիստ հրոսակների նկատմամբ: Նա տեսնում էր հիտլերյան մարդակերների պատճառած վիթխարի ավերածությունները, անասելի վայրագությունները, ահավոր դաժանությունը, սովետական ժողովրդին ստրկացնելու նրանց կատաղի ձգտումը և նրա ալեկոծ սիրտը լցվում էր վրեժխնդրության անմարելի հրով:

Նելսոնի անունը շատ շուտով հռչակվում է Օդեսայի համար մղված առաջին իսկ մարտերում, երբ նա իր գրոհող մեքենայով՝ վրեժի մի թեժ կրակ դարձած, ահեղ հարվածներ էր հասցնում թշնամուն՝ ջախջախելով նրա կենդանի ուժն ու տեխնիկան:

Մարտերից մեկում ստացած վերքից ապաքինվելուց հետո, Նելսոնը նորից նետվում է ռազմաճակատ: Այս անգամ սովետական անվեհեր օդաչուների կազմում նա իր մեքենան ուղղում է ֆաշիստական այն վորամասերի դեմ, որոնք ձգվում էին դեպի Լենինգրադ: Բալթի սրատես աչքով նա ամենուրեք որսում էր արգահատելի թշնամուն և նրանց գլխին թափում իր ռումբերի ծանր բեռը:

Այո՛, Նելսոն Ստեփանյանի ցասումն ու ատելությունը հիտլերյան ճիվաղների նկատմամբ սահման չուներ: Անհուն խիզախությամբ ու անհողդողդ վճռականությամբ նա իր ամեն մի մարտական թռիչքով սարսափ ու մահ էր սփռում հիտլերյան ֆաշիստների գլխին: Բալթիկ ծովի փոթորկոտ ալիքները, որ լուռ վկաներն են եղել այդ մեծ սխրանքների, բազում անգամ ներկվել են նրա ոչնչացրած հիտլերականների սև արյունով: Թե որքան վիթխարի է եղել թշնամուն միայն Նելսոն Ստեփանյանի հասցրած կորուստները, կարող են ցայտուն կերպով վկայել հետևյալ ոչ լրիվ տվյալները.

գերմանական 600 ավտոմեքենա, ավելի քան 100 տանկ ու կրահամեքենա, 300 կենիթային թնդանոթ ու ավտոմատ, 13 փոխադրանավ, 30 ինքնաթիռ, 130 գնդացրային կետ, 50 վագոն, 5000 զինվոր ու սպա, առաջացրել է 80 պայթյուն, 70 հրդեհ և պատճառել շատ այլ վնասներ:

Այսպիսին էր ավիացիայի փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը: Հենց իր այդ հանդուգն սխրագործությունների համար նա արժանացել էր հրամանատարության բարձր գնահատականների ու պարգևատրվել շքանշաններով:

«Քաջերից քաջի, այդ երևելի մարդու մասին, —գրել է Նելսոն Ստեփանյանի վերաբերյալ նավատորմի ծովակալ Հ. Իսակովը,— շատ գրքեր կարելի է գրել, այնքան շատ ուսանելի բան է կապված նրա փառավոր անվան հետ»:

***

Պատերազմի ծանր օրերին Նելսոնը շատ կարճ ժամանակով այցելեց Երևան, որ Միության բոլոր քաղաքների նման ապրում էր թիկունքային մարտական կյանքով: Կարոտով գրկեց իր հարազատներին, բայց և ժամանակ գտավ անցնել «Սովետական Հայաստան» թերթի խմբագրություն: Անչափ բուռն էր ու ջերմ փառաբանված օդաչուի հետ խմբագրության աշխատակիցների հանդիպումը: Մենք ամուր սեղմեցինք հերոսի առնական ձեռքը ու առաջնորդեցինք ներս:

Ես ուշադիր նայում էի նրան՝ աներ ցանկանալով տպավորել սրտումս դյուցազնի անմոռանալի կերպարը. թուխ առնական դիմագծեր, խոհուն ճակատ, արծվային հայացք կեռ հոնքերի տակ, հմայիչ ժպիտ, որ բոլորովին կերպարանափոխում էր նրան՝ դարձնելով մի տեսակ չարաճճի, բարի և հուսական:

Նա շատ կարճ խոսեց ռազմաճակատի մասին, ուր մարտնչում էր ինքը: Նայվածքը դարձավ չեչտակի, բոցավառվեց ներքին այրումից: Հուզմունքի, ցույցն և վրեժի ահավոր ալիքը վերջստին վրդովվեց նրա հանգիստը:

digitised by A.R.A.R.@

— Ֆաշիստական գալանը չունի ո՛չ մի փրկություն:

Եվ որպես իր խոսքերի հաստատում նա ձեռքը կտրուկ շարժումով ուղղեց դեպի ցած՝ հասկացնելով, որ նա, այդ թշնամին, արդեն գլորվում է իր իսկ փորած անդունդը:

Շատ հարցեր տրվեցին նրան. պատասխանում էր հակիրճ, խելացի: Մենք հետաքրքրվում էինք նրա դյուցազնական հարվածներով, նրա հերոսական կյանքի դրվագներն էինք ցանկանում, որ մեզ պատմի: Բայց ավա՛ղ, նա մեզ իր մասին համարյա ոչինչ չպատմեց: Իրեն վերաբերող հարցերին նա միայն հանգիստ ժպտում էր: Եվ երբ հարցերի շարանը վերջապես դադարեց, նա մի պահ ուշադիր նայեց մեզ ու մեղմորեն նկատեց.

— Ինչ պատմեմ: Պատմելու ոչինչ չունեմ: Կռվում եմ ինչքան կարողանում եմ: Կատարում եմ պարտքս: Ու դեռ կկռվեմ քանի դեռ թշնամին վերջնականապես չի ջախջախվել:

Իր օդաչու մարտական ընկերների մասին նա խոսում էր կարճ, բայց ներկատելի ոգևորությամբ՝ նշելով նրանց մարտական հաջողությունները:

Մենք անընդհատ փորձում էինք հյուրասիրել մեր թանկագին հյուրին սեղանին դրված մրգերով, բայց նա շատ քիչ բան կերավ: Նա հետաքրքրվում էր, թե ինչ է կատարվում մեզ մոտ՝ թիկունքում, ինչ ենք անում մենք ռազմաճակատին ավելի օգնելու համար: Նա ցանկություն հայտնեց, որ այդ օգնությունը լինի ավելի ուժեղ, որ թիկունքը լինի ավելի ամուր ու կազմակերպված: Նա մեզ հայտնեց, որ ռազմաճակատ վերադառնալուն պես ավելի աճարկու, ավելի խորտակիչ հարվածներ կհասցնի թշնամուն:

— Ձեռքս չի դողա, համոզված եղեք:

Նելսոնը շտապում էր: Ծողեցինք սեղանը, հավաքվեցինք պատշգամբում: Լուսանկարվեցինք միասին: Մենք հրաժեշտ տվինք նրան: Մեր վերջին հրաժեշտն էր դա: Կարո՞ղ էինք կարծել, որ մենք նրան այլևս չենք տեսնելու:

Անցան ամիսներ: Ու աճա թշնամու դեմ մղված աճեղ մարտերից մեկում ցուրտ Բալթիկայի մաոախլապատ երկրներում կտրվեց Նելսոնի, մեծ մրրկահավի, հրաշունչ կյանքի թելը:

***

Ջոան տարի է անցել այդ օրից: Սովետական Միության կրկնակի հերոս էր նա և նրա արձանը կանգնեցվեց Երևանում՝ Կիրովի անվան մանկական պրոսպեկտում: Նա տվեց իր ջահել կյանքը, որ սովետական մարդիկ չիմանան ինչ է ֆաշիստական ստրկությունը, որ գալիք սերունդները ապրեն ազատ, անկաշկանդ, որ կյանքը հորդի ինչպես վարար գետը...

Ու նրա շուրջը միշտ եռուն է կյանքը, միշտ անպակաս է մանկական կենսախինդ ու կվարթաձայն աղմուկն ու երգը, նրանց, որոնց կյանքի ու երջանկության համար այնքան ջերմորեն բաբախում էր մեծ հայրենասերի մեծ սիրտը:



ՀԱՐ ԵՐԳԵՐՆ ԵՆ ԾՆՎՈՒՄ

ԼԵՎՈՆ ՋԱՔԱՐՅԱՆ

Ամեն ժողովուրդ իր երգն ունի: Ժողովուրդը երգով է անցնում իր ճանապարհը, աշխատում, պայքարում է երգը շուրթերին...

Այն դժնի ժամանակներում, երբ ամենաանելույս գիշերն էր թանձրանում հայոց լեռնաշխարհի վրա, մեծ Կոմիտասը անօրինակ ջանքեր էր գործադրում, որ աշխարհին ճանաչել տա հայ երգը՝ իր ժողովրդի ինքնության վկայագիրը: Աճա այդ դժվարին ժամանակներում Կոմիտասը երազում էր Հայաստանում ունենալ երաժշտական գեթ մի հաստատություն, մի երաժշտանոց, որ երգի մշակներ պատրաստեր հայրենի անդաստանում գործելու համար: Սակայն դրա փոխարեն Կոմիտասը տեսավ՝ ինչպես Տեր-Զորի անապատներում, արևի ապշահար հայացքի տակ մորթվում է մի ամբողջ ժողովուրդ ու նրա հետ մորթվում է հայ երգը: Տեսավ ու ծնկի իջավ և մի վերջին անգամ, ձեռքերը երկինք կարկառած, երգեց իր նահատակ ժողովրդի երգը: Ու հավատի հետ ընդմիշտ փշրվեց նրա հոգու լուսեղեն սափորը... Սակայն խավարի սև ուժերը անզոր եղան ոչնչացնելու այն ժողովրդին, որ միշտ ապրել էր արարչագործելու անմար տենչով, որ միշտ ալրվել էր, որպեսզի լույս բաշխի աշխարհին: Դարերի փորձություններով անցած մի ժողովուրդ, որի ապրելու կամքը մաճվան ուժերից հզոր դուրս եկավ: Եվ ապրեց հայ ժողովուրդը, ու նրա հետ ապրեց հայ երգը: Սովետական Հայաստանը դարձավ այն ցանկալի երկիրը, որտեղ շուտով մարմին էին առնելու հայ ժողովրդի լավագույն ավանդների նվիրական երազները:

Սովետական իշխանության հաստատումից շատ չանցած, առաջին հայկական համալսարանի, առաջին գիտական հաստատության հետ ստեղծվեց նաև առաջին երաժշտանոցը, որին տրվեց հայ երաժշտության եղերաբախտ հանճարի՝ Կոմիտասի անունը: Կոնսերվատորիային հետևեցին երաժշտական մշակույթի նոր օջախներ: Այսօր Սովետական Հայաստանը երաժշտական ուսումնարանների ու դպրոցների ընդարձակ ցանց ունի, պետական ֆիլհարմոնիա, օպերայի և բալետի թատրոն: Երբեմնի միայնակների փոխարեն, որոնք գործում էին հաճախ նյութական միջոցների կարոտ, զուրկ պետական հովանավորությունից, այսօր հանրապետության մի քանի տասնյակի հասնող կոմպոզիտորները միավորված են ստեղծագործական առանձին միության մեջ, որն իր շքեղ տունն ունի Երևանում՝ աշխատանքի ու հանգստի բավմաթիվ սենյակներով, ընդարձակ համերգասրահով: Եվ աճա անցյալ տարի շարք մտավ մի ինքնօրինակ օջախ ևս՝ յոմպոզիտորների ստեղծագործական տունը Դիլիջանում:

Ստեղծագործական տուն: Դա մի վայր է, որտեղ ծնվում են երգերը, ուր հնչյուններն են դաշնավորվում, հայկ ու իմաստ ստանում, վերածվում եռգի, համանվագի, աշխատանքին ու յարդուն նվիրված օրհներգի... Այստեղ է, որ խաղաղիկ լռությունը փոխարկվում է փոթորկուն ներշնչանքի, ստեղծագործական հրայրքի, երբ բեղմնավոր է դառնում ամեն մի պահը, երբ երկունքով աշխարհ են գալիս ոգու գանձերը...

Այսօր, երբ հայ երգահանները, ինչպես նաև նրանց գործընկերները սովետական երկրի տարբեր կողմերից այցելում են Դիլիջանի ստեղծագործական տունը, անկարող են իրենց հիացումը պահել՝ ի տես այն ամենի, ինչ արված է այստեղ, որպեսզի իրենք լավագույն պայմաններն ունենան ստեղծագործելու ու հանգստի համար: Իսկ այդ ամենը ստեղծվել է ոչ միանգամից: Հարկ է եղել մեծ աշխատանք կատարել, շատ միջոցներ ծախսել, նախագծողներն ու շինարարները անձնվեր շատ ջանքեր են թափել, որպեսզի գծագրերից մարմին առնեն բարեկերտ այս շենքերը, վարդատուֆ այս կառույցները, դեպի բարձրիկ լեռնագոգը ձգվող ողորկ այս ճանապարհը...

Ամեն ինչ սկսվեց ինքօրինակ այս ավանին հարմար վայր փնտրելուց: Եվ ընտրությունը կանգ առավ Դիլի-

digitised by A.R.A.R.@



ջանի վրա ոչ պատահաբար: Դիլիջանը վաղուց հռչակվել է իր առողջարար օդով, նկարագեղ բնությամբ, իր արեվով ու կանաչով: Եվ ահա նրա ամենագողտրիկ անկյուններից մեկում կլանք առավ մի ամբողջ համակառույց: Այն կազմված է կենտրոնական եռահարկ շենքից, 12 առանձնատներից և օժանդակ շինություններից:

Նախագծի հեղինակը՝ երիտասարդ ճարտարապետ Էդվարդ Ալթունյանը, հմտորեն է օգտագործել տեղանքի առանձնահատկությունները. թե կենտրոնական շենքը և թե առանձնատները տեղադրված են այնպես, որ բոլորն էլ առատորեն օգտվեն արևից ու լույսից: Շենքերի արտաքին հարդարանքի համար օգտագործված են տարբեր երանգի տուֆե սալիկներ: Պատերի վարդագույն, ճերմակավուն, արևագույն մակերեսները շրջապատի համատարած կանաչի հետ գունային վարպետ խաղ են ստեղծում: Նման խնդիր են կատարում նաև շենքերի տարբեր երանգներով ներկված թիթեղե ծածկերը, մանավանդ, երբ ավանը դիտում ես վերևից:

Առանձնատներից յուրաքանչյուրը բաղկացած է երեք սենյակից: Երկուսը ծառայում են իբրև ննջարան և ընդունարան, իսկ երրորդը աշխատանքային սենյակն է, այստեղ ամեն ինչ, սկսած դաշնամուրից մինչև կահավորման վերջին մանրամասնությունը, տրամադրում են աշխատելու, ստեղծագործելու:

Բնակիչներից շատերը այստեղ են գալիս սեփական ավտոմեքենաներով. նախագծող ճարտարապետը այդ հանգամանքը նկատի է առել՝ առաջին հարկում տեղադրելով գարաժը: Դրան կից է գալի կաթսայատունը՝ առանձնատան ջեռուցման և ցնցուղարան-լողարանը տաք ջրով ապահովելու համար:

Կենտրոնական շենքի առաջին հարկում է գտնվում կինոսրահը՝ 80 մարդու համար, ուր ամեն օր ցուցադրվում են կինոնկարներ: Երկրորդ հարկում ճաշասրահն է: Խոհանոցը օժտված է ճաշատեսակների և հրուշակեղենի պատրաստման արդիական սարքավորումներով:

Ճաշասրահը ստեղծագործական տան բնակիչների ամենօրյա հավաքատեղին է միաժամանակ. կոկիկ այս անկյունում հաճախ ծայր են առնում աշխուժ վրույցն ու կատակները, այստեղ են փոխանակվում օրվա նորությները: Սրահում դրված է դաշնամուր, որ հաճախ առիթ է տալիս հանպատրաստից որևէ հատվածի, նոր ստեղծված երգերի անակընկալ կատարման:

Երրորդ հարկում է գտնվում հանգստի սենյակ-խաղարանը: Բնակիչներից ոմանք նախընտրում են շարժուն մրցախաղը, փոքր ռակետի սիրահարներն են դրանք: Մյուսներին ավելի գրավում է շախմատը...

Շենքի ամբողջ ներքին և արտաքին հարդարանքը ծառայեցված է միևնույն խնդրին՝ առավել հանգստավետ ու հաճելի դարձնել ամեն մի անկյուն: Այստեղ կա գրադարան, ռադիոընդունիչ: Այստեղ ցանկացած պահին մագնիտոֆոնի վրա կարելի է ձայնագրություններ կատարել: Այս շենքում են տեղավորված նաև պանսիոնատները: Երբ կավարտվի պանսիոնատների համար նախատեսված հատուկ շենքի կառուցումը, այժմյան սենյակները կվերածվեն աշխատանոցների:

Ամռանը համեմատաբար մարդաշատ է լինում ստեղծագործական տուն-ավանը. ամռան շոգերին կոմպոզիտորները գալիս են մեծ մասամբ ընտանիքներով. չէ՞ որ այստեղ բացի աշխատանքից, հանգստի լավագույն պայմաններ ևս կան: Այդ ժամանակ այս վայրը առանձին աշխուժ է առնում, լցվում երեխաների վարպ կանչերով: Տարվա մյուս ամիսներին միանգամայն խաղաղիկ է այստեղ: Դրա փոխարեն օրերը առավել արդյունավետ են անցնում. աշունը ոչ միայն հոդի բերքը, այև ոգու բերքը հավաքելու շրջանն է...

Ստեղծագործական տան անդորրը խախտվում է երբեմն. այդ շինարարներն են, որ դեռ շարունակում են կառուցել. մի տեղ պանսիոնատների նոր շենքն է բարձրանում, մյուս տեղում ավարտվում է լողավազանը, որտեղ

Գեղատեսիլ բնությամբ է շրջապատված կոմպոզիտորների տունը: Հորիզոնում երևում են տան սպիտակաբույր առանձնատները:

Հուսանկար՝ Զ. Բշտիկյանի



Նկարներում՝ 1. Կոմպոզիտորների ստեղծագործական տունը Դիլիջանում: Լուսանկար՝ Վ. Մանուկյանի: 2. Աւոմ Խաչատրյանը ստեղծագործական տան պատշգամբում: 3. Ստեղծագործական պահ:

Լուսանկարները՝ Ա. Քոչարի

ներ: Ու միշտ արդյունավետ է անցել նրանց ժամանակը: Շոստակովիչը Դիլիջանում է ավարտել իր լարային կվարտետը, որի առաջին ունկնդրությունը տեղի ունեցավ հայ գործընկերների շրջանում: Այստեղ ավարտվեց Ալ. Հարությունյանի «Սալաթ-Նովա» օպերայի առաջին արարը: Գրիգոր Եղիազարյանն աշխատում էր «Ավրա Գեղեցիկ» բալետի վրա: Իրենց նոր գործերի վրա են աշխատել Էդ. Միրզոյանը, Ա. Բաբաջանյանը, Շչեդրինը, Հաչիևը և ուրիշներ:

Երաժշտական նոր երկերից շատերի ինքնագրերի ներքևում կգրվի հանրածանոթ դարձած մի անուն՝ Դիլիջան: Այդ երկերը կանցնեն աշխարհից աշխարհ, և մարդիկ նրանց հնչյուններում կգտնեն ցոլացումը այն վայրի, արևային գույների, արևոտ բույրերի, որոնցով լցված է Դիլիջանը...

Շատերն են ցանկանում գալ Դիլիջան: Ստեղծագործական տան տնօրինությունը առաջիկայի համար բազմաթիվ հայտեր է ստացել սովետական երկրի տարբեր քաղաքներից:

Իսկ ովքեր արդեն եղել են, գոհունակ են հրաժեշտ տվել հյուրընկալ այս վայրին: Տպավորությունների գրքում նրանք թողել են սրտագին տողեր, որտեղ իրենց անմիջական ազգեցություններն են դրել: Գրքում դուք կգտնեք շնորհակալության ջերմ խոսքեր՝ ուղղված ստեղծագործական տան կառուցողներին, սպասարկող անձնակազմին և բոլոր նրանց, ովքեր շատ բան են արել ու անում, որ այստեղ միշտ լինեն ստեղծագործելու ու հանգստի լավագույն պայմաններ:

Տողերից մեկի հեղինակը՝ երգահան Գայանե Ջեբոտարյանը, այսպիսի խոսքերով է եզրափակել իր խոսքը. «Մեղք է լինել այս վայրում և չստեղծագործել...»:



digitised by A.R.A.R.@



ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ

(Երվանդ Լալայանի ծննդյան 100-ամյակի առթիվ)

ԱՐՏԱՇԵՍ ՆԱՋԻՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Լրացավ հայ նշանավոր ապգագրագետ, բանագետ ու հնագետ Երվանդ Լալայանի ծննդյան 100-ամյակը: Եր. Լալայանը մեկն էր հայագիտության խոշոր դեմքերից, որի բազմակողմանի գիտելիքներն ու կարողությունը ցուգակցվում էր անձնանիր ու մեղմաջան գործունեությանը: Երվանդ Լալայանը հրապարակ մտավ այն ծանր ժամանակաշրջանում, երբ սուլթանական Թուրքիայի հալածված քաղաքականության պատճառով վտանգի տակ էր գտնվում հայ ժողովրդի բուն գոյությունն իսկ: Լալայանը հայրենասերի խոր գիտակցությամբ իրեն նպատակ դրեց ժամանակի ամենակուլ բերանից փրկել հայ ժողովրդի ավանդական բանահյուսության ստեղծագործությունները, հին-վուրց ծեսերն ու սովորույթները, պատմական, ճարտարապետական ու գեղարվեստական հուշարձանները, միջնադարյան ձեռագրերն ու վավերաթղթերը: Շուրջ կեսդարյա իր անխոնջ գործունեության ընթացքում Լալայանը հրապարակեց 60-ից ավելի մեծ ու փոքր ապգագրական, բանահյուսական, հնագիտական, մանկավարժական, գեղարվեստական-թարգմանական աշխատություններ, ժողովածուներ, հոդվածներ, ծրագրեր և այլ նյութեր:

Երվանդ Լալայանը ծնվել է 1864 թվականին Ալեքսանդրապոլում (այժմյան Լենինական): Սովորել է Ծիֆլիսի Ներսիսյան դպրոցում, որն ավարտելուց հետո հինգ տարի (1885—1890 թթ.) մանկավարժական աշխատանք է կատարել Ախալցխայի, Ախալքալաքի և Ալեքսանդրապոլի թեմական դպրոցներում: 1890-ին Լալայանը կնոջ՝ Հայկանուշ Հարությունյան-Լալայանի հետ մեկնում է Ժնև, որտեղ ինքն ընդունվում է Ժնևի համալսարանի հասարակագիտական բաժինը, իսկ կինը՝ բնագիտական: Ավարտելով համալսարանական դասընթացը՝ Լալայանն ստանում է սոցիալական գիտությունների թեկնածուի աստիճան: Միաժամանակ նա էքստեռն կարգով ավարտում է Լոլանի համալսարանի մանկավարժական դասընթացը:

Վիեննայի Միխթարյանների մոտ և Փարիզի մարդաբանական դպրոցում կարճ ժամանակ աշխատելուց հետո Լալայանը վերադառնում է Անդրկովկաս և նվիրվում մանկավարժական ու գիտական գործունեության:

Լալայանն իրականացնում է վաղուց ի վեր փայփայած իր ցանկությունը՝ ստեղծել հայ ապգագրական գիտական պարբերական: 1896 թվականին Շուշիում, որտեղ աշխատում էր Լալայանը որպես թեմական դպրոցի ուսուցիչ, լույս է տեսնում «Ապգագրական հանդեսի» առաջին գիրքը, որը բարձր գնահատության է արժանանում հայ մտավորականության ու մամուլի կողմից: Շուտով Լալայանը տեղափոխվում է Ծիֆլիս, որտեղ իր իսկ նախաձեռնությամբ հիմնադրվում են հայոց ապգագրական-հրատարակչական ընկերությունը (1900 թ.), հայոց ապգագրական ընկերությունը (1906 թ.) և ապգագրական թանգարանը (1907 թ.): Ձաև տարվա ընթացքում համախմբելով ժամանակի առաջավոր մտավորականության ուժերը՝ Լալայանը հրատարակում է «Ապգագրական հանդեսի» 26 գիրք և հիշյալ ընկերությունների միջոցով կազմակերպում բազմաթիվ միջոցառումներ, որոնք մեծ դեր խաղացին հայագիտության կարգացման գործում:

Լալայանի գիտական գործունեության հիմնական բնագավառը ապգագրությունն էր: Նախապես պատրաստված գիտական ծրագրով Լալայանը և իր աշակերտները շրջագայելով Արևելյան և Արևմտյան Հայաստանի բնակավայրերը՝ մանրամասն տեղեկություններ էին գրանցում տվյալ շրջանի պատմա-աշխարհագրական միջավայրի, տնտեսական կյանքի, ամուսնական ու հարսանյաց, ծննդյան, թաղման և այլ սովորույթների, ինչպես նաև հավատալիքների ու սնոտիապաշտությունների, ժողովրդական բժշկության և այլնի մասին: Ապգագրական այդ հետազոտությունը լրացվում էր տվյալ բնակավայրերի ժողովրդական անգիր գրականության նմուշներով, նշանավոր վանքերի, պատմական հուշարձանների, միջնադարյան ձեռագիր մատյանների և այլ հնությունների նկարագրություններով: Այդ ճանապարհով Լալայանը հրապարակ է հանել պատմական Հայաստանի հիմնական ապգագրական շրջանները բնութագրող մեծարժեք աշխատություններ՝ «Ջավախք», «Վանդա», «Ջանգեզուր», «Նոր-Բայազետի գավառ կամ Դեղարքունիք», «Բորչալուի գավառ», «Գանձակի գավառ», «Վասպուրական», «Մուշ-Տարոն» և այլն:

1915 թվականին Հայոց ապգագրական ընկերությունը Երվանդ Լալայանի նախաձեռնությամբ կազմակերպում է գիտարշավ՝ Անդրկովկասի ավաններում ու գյուղերում ցրված արևմտահայ գաղթականներից բանահյուսական և ապգագրական նյութեր գրի առնելու համար: Գիտարշավը, որին գլխավորում էր Լալայանը, իր կազմում ուներ այդ գործին նվիրված ուսուցիչ-մտավորականներ (Ն. Մարտիրոսյան, Ե. Պեպպլյան, Ս. Շալճյան, Ա. Բարսեղյան, Շ. Կուժիկյան, Վեսպեր և ուրիշներ): Չնայած անբարենպաստ պայմաններին, Լալայանի արշավախումբը շուրջ 6 ամսվա ընթացքում շրջագայում է Անդրկովկասի քաղաքներն ու գյուղերը, իր շուրջը հավաքում եղեռնից մազապուրծ փախած Մշո, Մոկսի, Վանի, Բիթլիսի, Արճեշի, Սասունի, Ալաշկերտի, Բասենի, Շատախի, Բուլանըխի և այլ վայրերի անօթևան ծերունիներին ու մանուկներին և բարոյապես սփոփելով նրանց՝ գրի առնում հնավանդ հեքիաթներ, առակներ, կրույցներ, երգեր, խաղեր, առածներ ու հանելուկներ: Շատերն այդ գաղթականներից փոխվել են՝ չդիմանալով քաղցին, համաճարակներին ու վրկանքներին, բայց փրկվել է նրանց իմաստուն խոսքն ու պրույցը, արդարության, ազատության ու երջանկության մասին նրանց բանաստեղծական երազանքը: Գիտական այդ արշավախմբի աշխատանքի արդյունքները բեղմնավոր են եղել՝ շուրջ 1000 հեքիաթ, առակ, պրույց ու ավանդություն, բազմաթիվ երգեր ու փոքր ծավալի բանահյուսական այլ ստեղծագործություններ, որոնք ներկայացնում են Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներն ու ավանները:

Անհատական գրառումներն ու իր նախաձեռնությամբ կազմակերպած խմբական բանահավաքչական աշխատանքների արդյունքները Լալայանը հրապարակել է «Ապգագրական հանդեսի» գրքերում և առանձին ժողովածուներով, որոնցից հատկապես լայն ժողովրդականություն են վայելում «Ջավախքի բուրմունքը» (1892 թ.), «Ժողովրդական առակները», Ա. գիրք՝ «Հոբոս» (1903 թ.), Բ. գիրք՝ «Մոլլա Նասր-էդ-դին» (1904 թ.), «Պառավաշունչը» (1911 թ.), «Մարգարիտներ հայ բանահյուսության» եռահատորը (1914—1915 թթ.) և այլն: Հայ բանահյուսության համար կարևոր արժեք են ներկայացնում Երվանդ Լալայանի գրի առած և հրատարակած «Սասնա ծռեր» վիպերգի Նոր-Բայազետի պատումը և իրանական «Ռուստամ Զալ» վեպի հայկական տարբերակը: Լալայանի բանահյուսական ժառանգության մի մասը դեռևս մնում է ձեռագիր վիճակում, ցրված տարբեր արխիվներում:

Երվանդ Լալայանի գիտական գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում նրա հնագիտական աշխատանքները: Լալայանը երկարամյա հնագիտական պեղումներ է կատարել Շարուր-Դարալագյազում, Նախիջևանում, Նոր Բայազետում, Շրեշ-բլրում, Նուխու Նիժ և Վարդաշեն գյուղերում, Էլարում (1906—1927), հայտնաբերելով հայ ժողովրդի բազմադարյան պատմության տարբեր շրջաններին վերաբերող նյութական մշակույթի կարևոր առարկաներ ու իրեր, որոնց մասին հաղորդումներով ու հոդվածներով հանդես է եկել Կովկասյան և Համառուսական հնագիտական ընկերության հավաքածուներում ու պարբերականներում: Լալայանի հնագիտական պեղումների արդյունքներն ամփոփված են հետմահու հրատարակված նրա «Դամբանների պեղումներ Խորհրդային Հայաստանում» աշխատության մեջ (1931 թ.):

Բազմավաստակ գիտնականի հնագիտական գործունեության բաղկացուցիչ մասն են կազմում վիմագրական արձանագրությունների հավաքման և միջնադարյան հայ ձեռագրերի ցուցակագրման ու նկարագրման աշխատանքները, որոնց արդյունքներից մեկն է «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի» ստվարածավալ աշխատությունը (1915 թ.):

Հնարավոր է, որ ժամանակակից հնագիտության համար Լալայանի մի շարք դրույթներ ենթակա են վերանայման, բայց դա բնավ չի նսեմացնում իր ժամանակի պայմաններում Լալայանի կատարած հնագիտական աշխատանքների պատմական նշանակությունը:

Իր ամբողջ կյանքի ընթացքում Երվանդ Լալայանը իբրև մանկավարժ ու հասարակական գործիչ, բանահավաք ու հետազոտող գիտնական, թարգմանիչ ու լրագրող, առաջնորդվել է մայրենի ժողովրդին օգտակար լինելու բարձր գիտակցությամբ: Նրա հարուստ գիտական ժառանգությունն այժմ հրատարակվում և ուսումնասիրվում է, հայագիտական բազմաթիվ հետազոտությունների համար սկզբնաղբյուր են ծառայում Լալայանի հավաքած նյութերը:

Մեծ են Երվանդ Լալայանի մատուցած ծառայությունները հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի հայտնաբերման, լուսաբանման ու պահպանման գործում: Նրա հիշատակը պայծառ կմնա սերունդների հիշողության մեջ:

digitised by A.R.A.R.@



Գոռծ՝ Հայկ. ՍՍՀ ժողովրդական նկարիչ է. Խաչենկյանի:

Ս. Խանզադյան

ՍՈՒՐԵՆ ԱՂԱԲԱԲՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր

Սերո Խանզադյանի և՛ գրական առաջին քայլերը, և՛ ճանաչման հասնելը վերաբերում են հետպատերազմյան տարիներին: Հայտնի գրողին առաջին գրքի հեղինակից բաժանում է մի կարճ ժամանակամիջոց: Պատճառն այն է, որ նա գրականություն մտավ հասուն տարիքում, «կյանքի դպրոցն» ավարտած, արդեն իսկ հարուստ կենսափորձով, ժողովրդական կյանքի իմացությամբ, ասելու և, մանավանդ, պատմելու շատ բան ունենալով:

Նրա ասելիքը, ստեղծագործության առաջատար թեման բոլոր թելերով կապված է *մարդը և հողը* հարաբերության հետ: Նա զննել է այդ հարաբերությունը և՛ ժամանակակից կյանքից առնված մեծ ու փոքր կտավներում, և՛ «Միխթար սպարապետ» պատմավեպում: «Հողը» վերնագիրը, որ կրում է Խանզադյանի վեպերից մեկը, բնութագրական է նրա ամբողջ ստեղծագործության համար, գրողն իր ամբողջ կորությամբ հաստատում է յեև ավանդական, բայց մեր օրերում էլ կենսական այն գաղափարը, որ մարդը հայրենիքով, հայրենի երկրով, հողի հետ ունեցած սրբական կապով է մարդ:

***

Ս. Խանզադյանը գրել է սկսել պատանի հասակից: 1940-ին Գորիսի շրջանային թատրոնը բեմադրում է նրա «Վահրամ Որոտանցի» պատմական պիեսը, որի նյութը 10-րդ դարում Սյունիքում ծագած գյուղացիական ապստամբությունն է:

1949 թ. «Սովետական գրականություն և արվեստ» հանդեսում, իսկ այնուհետև (1950 թ.) առանձին գրքով լույս տեսավ Ս. Խանզադյանի «Մեր գնդի մարդիկ» վեպը: Այդ գրվածքը երիտասարդ գրողին ուղեգիր տվեց դեպի գրականություն: Նրա մուտքը ողջունեցին Ստ. Զորյանը և Դ. Դեմիրճյանը, փորձված աչքով նշմարելով նոր գրողի հարուստ կենսագիտությունն ու համակրելի գրելաձևը:

Զարյանի «Հացավան»-ից հետո սոցիալիստական նոր գյուղի մասին լավագույն երկը Ս. Խանզադյանի «Հողը» վեպն է (առաջին գիրքը լույս տեսավ 1954-ին, երկրորդը՝ 1955-ին): «Հողը» ժամանակակից արձակում ուշագրավ երևույթ է ոչ միայն «մասշտաբային» ընդգրկմամբ, այլ առաջին հերթին՝ հետպատերազմյան գյուղական իրականությունը կենսական հարաբերություններով արտացոլելու տեսակետից: Վեպում կարելի է մատնանշել և՛ գլխավոր կոնֆլիկտի լուծման որոշ պարզունակացում, և՛ դիտված նյութի ու սյուժեի անհամապատասխանություն, և նկարագրությունների ձգձգվածություն,— սակայն դա այն գրքերից է, որտեղ տրված է ժամանակակից գյուղի մարդկանց կյանքի ու գործի բովանդակալից պատկերը:

Վիպական գործողության հիմքում հեղինակը դրել է հոգեբանական կարեվոր խնդիր. գիրքը պատմում է այն մասին, թե ինչպես ռազմաճակատից վերադարձած մարդիկ մտնում են կենսական նոր հարաբերությունների մեջ և հաղթահարում իրենց առօրյա կյանքում պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները:

Ս. Խանզադյանը որպես գլխավոր հերոս ընտրել է դժվար ճակատագիր ունեցող մի հերոսի: Գարեգին Մովսիսյանին գյուղում սպատում է և՛ իր առաջին սիրո փլուզումը (սիրած աղջիկը՝ Արևիկը ամուսնացել է), և՛ հոգեկան խոր կսկիծը (գյուղում լսում է ավագ եղբոր՝ Մարտիրոսի կոիվելու լուրը): Զարակերտ գեղեցկանիստ գյուղը, որը «տոքերով կանգնած է մերձարևադարձային գոտում, իսկ գլուխը հասնում է մինչև հյուսիսային բևեռ», խոր վերքեր է ստացել պատերազմի տարիներին:

«Ամեն փոթորիկ ծառ է պոկում, ամեն կռիվ կոհ է տանում, որդիս, բայց ոչ փոթորիկն է անտառին վերջ տալիս, ոչ կսկիծը՝ ժողովրդին»,— գեղջկական իմաստությունը բնորոշ այս խոսքերով է դիմավորում Բաղդասար պապը պատերազմից դարձող Գարեգինին: Դեռ գյուղի ճանապարհին նա տեղեկանում է նաև գյուղացիների մեջ եղած խոր տարաձայնությունների մասին: Նրանց մի մասը, կոլտնտեսության նախագահ Մանվել Հասրաթյանի գլխավորությամբ, հակված է լեռնային գյուղը Արարատյան դաշտ տեղափոխելու մտքին, իսկ մյուս մասը վճռականորեն դեմ է դրան. հացի համար պայքար պետք է սկսել տեղում, մշակել դարեր ի վեր խոպան մնացած Որոտանի կիրճի հողերը, պետք է փրկել հայրենի հողը, մարդկանց հոգիներում անշեջ պահել ծննդավայրի ու հողի սերը:

Դառնալով իրադրության «գործող անձը»՝ Գարեգին Մովսիսյանը վճռականորեն միջամտում է այդ վեճերին, գլխավորում հարձակումը «հավիտենապես անշարժ» բնության վրա:

«Հողը» վեպի գլխավոր արժանիքը ժողովրդի ըգացմունքի խորությունը, նրա պարգացման ոգին մարմնավորող դրական հերոսների շարքն է: Պատմական նոր ժամանակաշրջանի հերոսների ցուցադրման տեսակետից սովետահայ գրականության մեջ նկատելի հետաքրքրություն են ներկայացնում Գարեգին Մովսիսյանի, Մանուշի, Մանասարի կերպարները: Ի դեմս այդ հերոսների, վիպասանը պատկերել է ժողովրդական աշխարհայգացման մարդկանց, որոնք ապրում ու շնչում են պայծառ երազներով, ժողովրդի ցավերով ու խնդությամբ:

«Հողը» վեպից հետո Խանզադյանը գրական մամուլում հանդես եկավ բազմաթիվ պատմվածքներով ու մանրանկարչական նովելներով, որոնք հետագայում մուծվեցին «Կարմիր շուշաններ» (1958) և «Կորած արահետներ» (1964) հավաքածուները: Այդ ժողովածուները «Որոտանի կիրճում» և «Ջարանձավի բնակիչները» մանկական գրքույկների, մամուլում տպագրված գեղարվեստական ակնարկների հետ միասին գրողի ավանդն են «կարճ արձակում»:

Խանզադյանը արտահայտման ինքնատիպություն ունեցող պատմվածքագիր է: Նա Զանգեզուրի լեռնաշխարհի մարդկանց ու բնության մասին պատմում է այդ աշխարհի արմատական, հմուտ ճանաչողությամբ: Նրա կենսագիտությունը արտահայտվում է թե՛ ճշգրիտ, կոլորիտային, ակգային վառ երանգներով հագեցած մանրամասներում, թե՛ հերոսների պատկերավոր ու կենդանի խոսքում, թե բնապատկերներում:

Ս. Խանզադյանի արձակը, առհասարակ, և պատմվածքը, մասնավորապես, էական հատկանիշներով ու ոճաբանական կառուցվածքով սնվում է մի կողմից հայ ժողովրդական բանահյուսության ակունքներից, մյուս կողմից՝ դասական գրականության ավանդներից: Նրա պատումի որոշ եղանակներ ծայր են առնում իր մեծ հայրենակցի՝ Ակսել Բակունցի արձակից:

Խանզադյանի պատմվածքները իրենց թեմատիկայով խմբավորվում են առանձին ակգակից մոտիվների շուրջը: Պատմվածքների մի խումբ նվիրված է ժողովրդական այն դրամային, որ ապրում էր հայ գյուղացին հեղափոխությունից առաջ («Կարմիր շուշաններ», «Լալ Համապը» և այլն):

Մանկության տարիների հիշողություններից են հյուսված «Մերոնք և մեր հարևանները» շարքի գործերը: Սրանք «բանահյուսական» ծագում ունեցող, ժողովրդական առակ կամ կենցաղային անեկդոտ հիշեցնող պատկերներ են, որոնց մեջ հեղինակը հետամուտ չէ հոգեբանական բարդ խնդիրների լուծման: Հակիրճ բնութագրումներով, քնարական վերաբերմունքով կամ ժողովրդական հումորի չարաճճի շեշտով հեղինակը գծում է մարդկային այս կամ այն, դրական կամ բացասական հատկությունը մարմնացնող «հերոսի» բնավորությունը, չմոռանալով

digitised by A.R.A.R.@

բարոյախոսական անհրաժեշտ եզրակացությունը՝ լավ ու արդար գործի, ճշմարիտ բարեկամության, մարդկային հավատի ու առաքինության, պատվի ու խղճի մասին:

Բարոյախոսական-խրատական ոգեգծված շեշտը բնորոշ է նաև արդիական կյանքից ու հարաբերություններից բաղված պատմվածքներին: Ս. Խանլաղյանը կենցաղի առօրեական նյութ «արտակարգ» որևէ սյուժեի միջոցով վեր է հանում ժողովրդական բարոյախոսական ժառանգության նշանակությունը ժամանակակից կյանքի համար: Տվյալ կենսական դրվագի կամ սյուժեի մեջ նրան ավելի շատ հետաքրքրում է խրատական իմաստը, կենսական պրոբլեմը, քան բնավորության հոգեբանական գծերի մշակումը: Այս առումով ուշագրավ են «Բաղդասար նախագահը», «Ուստա Հեթումը», «Յորերրորդ աղբյուրը» պատմվածքները:

Հեթումի ողբերգական ճակատագիրը ոչ միայն չի խաթարում մարդկայնությունը, այլ ընդհակառակը՝ նրան բարձրացնում է մարդասիրության գագաթը:

Ս. Խանլաղյանի պատմվածքի անվիճելի արժանիքներից մեկը ոճական հավաստիությունն է, իրապատում շունչը, որ զգացվում է թե կենցաղանկարներում, թե նովելներում, թե ժողովրդական սկզբնաղբյուրների վրա հյուսված սյուժեներում:

«Կյանքի սյուժեների» նախասիրությունը պայմանավորում է Խանլաղյանի պատկերի ու բնութագրումների դիպուկությունը, հայրենի բնության գույների հարատևությունը, խոսքի քնարական անմիջականությունը, կառուցվածքի պարզությունը, բառագործածության ժողովրդական շունչը:

Սերո Խանլաղյանի գրական նկարագրի համար բնորոշ հատկանիշ է պատմության զգացմունքը: Ժողովրդական բանահյուսության նմուշների քաջատեղյակության հետ միասին նա հայտաբերում է հարուստ, կալուն և, որ գլխավորն է, «ապրված» գիտելիքներ հայ ժողովրդի պատմության, մասնավորապես Սյունյաց աշխարհի պատմության բնագավառում: Նրա պատմագիտական իմացությունների ու պատմական հայրենասիրության գեղարվեստական արտահայտությունը եղավ 1961 թվականին հրատարակված «Մխիթար Սպարապետ» պատմավեպը:

«Մխիթար Սպարապետը» վերարտադրում է 18-րդ դարի հայ ազգային ազատագրական շարժման կարևորագույն դրվագներից մեկը՝ Դավիթ Բեկի ու նրա զորավարների մղած հերոսական պայքարը թուրքական բռնակալության դեմ: Ժամանակագրական իմաստով «Մխիթար Սպարապետը» սկսվում է այն տարիների պատմական անցքերի նկարագրությամբ, որտեղ ընդհատվում են Րաֆֆու «Դավիթ Բեկի» գործողությունները:

«Մխիթար Սպարապետ» պատմավեպը, որի ստեղծագործական պատմությունը ծայր է առնում դեռ 50-ական թվականների սկզբից, Խանլաղյանը գրեց պատմական աղբյուրների բազմակողմանի ուսումնասիրության հիմքի վրա: 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների վերաբերյալ պատմագիտական աշխատություններից բացի, արձակագիրը վեպի պատմական հավաստիությունը պահպանելու համար զգալիորեն հենվում է պատմական սկզբնաղբյուրներին. նա ուսումնասիրել է ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական կյանքն ու քաղաքական հարաբերությունները, Հայաստանի դիվանագիտական կապերը բնութագրող բազմաթիվ վավերագրեր: Պատմագիտական գինվածությունը միպատանին հնարավորություն է տվել էպիկական լայն կտավի վրա ներկայացնել պատմական նշանակալից իրադարձություններով, դրամատիկական բախումներով, ազատագրության կրքերով ու տենչերով հագեցած ժամանակաշրջանի գեղարվեստական պատկերը:

18-րդ դարամուտը հայ ժողովրդի պատմության մեջ նշանավորվում է ազատագրական շարժման նոր հեռանկարներով. հասարակական գիտակցության մեջ, ժողովրդական լայն խավերում խոր արմատներ է ձգում օսմանյան լծից ազատագրվելու և ժողովրդի բախտը քրիստոնյա Ռուսաստանի հետ կապելու գաղափարը: Իսրայել Օրու դիվանագիտական ապարդյուն հարաբերությունները եվրոպական պետությունների հետ ժողովրդին մեկ անգամ ևս համոզում են, որ «եվրոպական օրիենտացիան» ոչ մի գործնական հեռանկար չի բացում սոցիալական ու քաղաքական բռնության մեջ տառապող ժողովրդի համար: Իսրայել Օրու մշակած քաղաքական նոր ծրագիրը՝ «ռուսական օրիենտացիան» ավելի բնական է թվում, ժողովրդի մեջ խորանում է դեպի հյուսիս, դեպի Ռուսաստան ուղղված հայացքի ճշմարտությունը: Դավիթ Բեկը, հանդես գալով ազատագրական պայքարի նոր վարքագծի ու համաժողովրդական զգացմունքների արթնացման դարաշրջանում, գլխավորում է Արևելյան Հայաստանի՝ Սյունիքի, Արցախի և Երևանի ազատագրական-հերոսական պայքարը: Գլխավորելով Սյունյաց անկախության շարժումը (1723—1739) Դավիթ Բեկը և նրա զորավարները խորապես գիտակցում են այդ պայքարի խոշոր նշանակությունը առհասարակ հայ ժողովրդի պատմական բախտի, ազգային ինքնուրույնության ու անկախության պայքարի համար:

Ճշմարտացի ըմբռնելով Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական շարժման համաժողովրդական բնույթը և այդ շարժման պատմական հեռանկարը, Խանլաղյանը իր ստեղծագործության կենտրոնն է դարձրել դարաշրջանի և ժողովրդի կյանքի արտացոլման խընդիրը: Այս իմաստով, անգամ իր թեմատիկական հատկանիշներով, «Մխիթար Սպարապետը» նկատելիորեն տարբերվում է պատմա-կենսագրական վեպից: Հայաստանի ազատագրական շարժումը վիպասանը բնութագրում է որպես ամբողջ ժողովրդի հավաքական ջանքերի ու հայրենասիրական ոգևորության արդյունք:

Ժողովրդական-ազատական խավերն են հանդիսանում ազատագրական պայքարի գլխավոր ուժը. Դավիթ Բեկը հենվում է ամենից առաջ հայ շինականի կորության ու անկեղծ, անշահամոլ հայրենասիրության վրա:

Ժողովրդական ներքին խավերի կյանքի պատկերումից բացի վեպում մեծ տեղ են գրավում նաև վերնախավի՝ հայ մելիքության, վաճառականության ու հոգևորականության միջև եղած հարաբերությունների պատկերները: Ցուցադրելով ազատագրության համաժողովրդական շարժման ընթացքում մելիքների ու վաճառականների մի մասի կատարած դրական դերը, նրանց իրատես քաղաքականությունը օտար նվաճողների դեմ մղվող ընդհանուր պայքարում, վիպասանը միաժամանակ չի կոծկել ո՛չ ազնվականության պառակտողական, կենտրոնախույս գործողությունները, ո՛չ էլ նրանց ներքին հակասությունները, շահամոլական տենչերն ու դասակարգային ատելությունը սամիկի հանդեպ:

Խանլաղյանը կերտել է ողբերգական ծանր հագամանքներում հերոսական դիմադրության ուղին բռնած հայրենասերների՝ հայրենիքի անձնուրաց պաշտպանների բազմաթիվ տպավորիչ կերպարներ՝ սկսած պետական-ռազմական գործիչներից մինչև ժողովրդական հասարակ խավերի ներկայացուցիչները: Իրենց գաղափարական նշանակությամբ, անկասկած, վեպում խոշոր տեղ են գրավում անկախության շարժման ղեկավարների՝ Դավիթ Բեկի և Մխիթար Սպարապետի կերպարները:



Դավիթ Բեկը, վիպական մեկնաբանությամբ, ոչ թե հայրենասիրության կամ պետական մտածողության վերացական, «սրբագործված» սկզբունքի կրողն է, այլ իր դարաշրջանի պատմական հոգեբանության հարատև արտահայտությունը: Հավատարիմ մնալով պատմական աղբյուրներին, վիպասանը Դավիթ Բեկի մեջ շեշտում է նրա խորաթափանց, ուժեղ միտքը, պետական հեռատեսությունը, անդրդվելի կամքը, ճկուն ու հավասարակշռված քաղաքականությունը:

Հեղինակը ցայտուն գույներով նկարագրելով Դավիթ Բեկի անհատականության էպիկական վեհությունը գործունեության պատմականորեն դրական-հեռանկարային իմաստը, նրան ներկայացնում է որպես ժողովրդական հոգեբանության հարատև ծնունդ:

Հայրենասիրության զգացմունքի կենդանի մարմնացումն է նաև Մխիթար Սպարապետը՝ հայրենական կռիվներում կտիված քաջ ռազմիկը, որի կերպարը նույնպես գծված է էպիկական բնավորության չափանիշերով: Մխիթարի հոգեկան ներքին հակասություններ,— դժգոհությունը Դավիթ Բեկի դիվանագիտական առանձին քայլերից, քաղաքական մտածողության թուլությունը, անձնական կյանքի որոշ ստվերները,— չեն խլացնում նրա անհատականության էպիկական բովանդակությունը:

Տեր-Ավետիսը նույնպես ժողովրդական գործին նվիրված, անվեհեր ու հայրենասեր գործիչ է, սակայն Դավիթ-բեկյան շարժման մեջ նա դավանում է ազգապահպանման մի ուղի, որ դեմընթաց է գնում դիմադրողականության նշանաբանին: Արձակագիրը Տեր-Ավետիսին պատկերում է դրամատիկական հերոսի պլանով,— ընդգծելով պատմական դեպքերի ազդեցությամբ հայրենասերի հոգում կատարվող հոգեկան ծանր դրաման: Հարատև ժողովրդի շարունակվող կոտորածները թուրքական կործերի արշավանքներից, ցարական արքունիքից ակնկալված հույսերի խորտակումը, հայկական գորախմբերի ճակատագրական ծանրությունը, երբ դրսից չկա և ոչ մի նեցուկ,— այս ամենը Տեր-Ավետիսին թելադրում են հանդես բերել թշնամու հետ հաշտեցման ու հպատակության տեսակետը: «Մինչև երբ կարող են իրենց փոքրաթիվ ուժով դիմագրավել այն վտանգները, որ անվերջ թափվում են հայ ժողովրդի գլխին»,— մտորում է Տեր-Ավետիսը: «Փրկությունը հպատակության մեջ է: Ժողովրդի մի մասը կկորչի, եսիր կգնա, բայց մեծ մասը կմնա: Չի մարի հայոց տան ճրագը»:

Տեր-Ավետիսի ծրագիրը բխում էր երկիրը փրկելու նրա ամենաանկեղծ ցանկությունից: Ռազմական դժվարին կացության մեջ հաղթանակի հեռանկարը կորցրած ուժեղ անձնավորությունը տանջալի ապրումներով է դիտում ժողովրդական պայքարի «ապարդյուն» որոնումները և իր «հաշտեցման» տեսակետով դառնում ակամա դավաճան:

Դեպքերի հետագա ընթացքը երևան է բերում Տեր-Ավետիսի առաջարկած ռազմա-քաղաքական կոնցեպցիայի վտանգավորությունը ազատագրական շարժման համար և հաստատում ապրդվին դիմադրելու տեսակետի խոր ճշմարտությունը:

«Մխիթար Սպարապետը» գրված է ժողովրդական հերոսապատումի ժանրային սկզբունքով: Վիպասանը կերտել է ազատագրական պայքարի մասնակիցների տասնյակ կերպարներ, որոնք տարբեր ուղիներով, հաճախ ներքին հակասություններ հաղթահարելով, դառնում են Դավիթ Բեկի ու Մխիթարի գլխավորած շարժման երդվյալ կողմնակիցներ:

Հոգեկան աշխարհի լայնություն, խի-

digitised by A.R.A.R.@

պախություն, հայրենյաց պատվի համար կյանքը զոհաբերելու պատրաստակամություն, անկաշառ հայրենասիրություն,— այս հատկանիշները բնորոշ են թե Երևանի պաշտպանության անձնուրաց հերոսներին— (Կառչիկ Հովհաննես, Դավիթ Միրզաջանյան, Պողոս Քեչիբեկյան և այլն), որոնք պաշարված քաղաքում աշխարհազորի շարքերում անօրինակ խիզախությամբ դիմադրում են ահեղ թշնամուն, թե մելիքներին (Հովհաննես, Ավան, Եգան, Բայանդուր և այլն), որոնք վեր են բարձրանում դասակարգային կախվածությունից, հանուն հայրենիքի պատվի պաշտպանության, թե վինվորականության ու հոգևորականության ներկայացուցիչներին (հայրուրապետներ Պակի, Եսայի, Թովմա, Մովսես աբեղա), թե՛, մանավանդ, հասարակ ժողովրդի ներկայացուցիչներին: Այս վերջին խմբում առանձնանում են գեղջկուհի Զարմանդի, պինագործ Վրթանեսի, նրա բարեկամ Վոլոդիմիր Խյեբի, Ծատուրի, Սիմոնի և այլոց հերոսական կերպարները:

Կերտելով ժողովրդի հավաքական կերպարը, վիպագիրը բարձր ոգեշնչումով արտահայտում է հայրենիքի պատմության լավատեսական փիլիսոփայությունը՝ հայ ժողովրդի անկախության ուղին, կամ ինչպես վեպի հերոսներն են ասում՝ «ճանապարհը հայոց», համարելով ազգովին դիմադրությունն ու ռուսական կողմնորոշումը: Պատմության այս երկու միտումներն են որոշում վեպի գաղափարական բովանդակությունը, ի հակադրություն հաշտեցման ծրագրի ու եվրոպական կողմնորոշման:

«Մխիթար Սպարապետը», լայն ընդգրկում ունեցող այդ մեծ կտավը, անվիճելի հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն գաղափարական բովանդակությամբ ու ժողովրդական հերոսների հոգեբանական աշխարհի գեղարվեստական վերլուծությամբ, այլև ժանրային-կառուցվածքային առանձնահատկություններով:

«Մխիթար Սպարապետը» պատմավեպում հեղինակը մեծ վարպետությամբ է լուծել այնպիսի դժվարին գեղարվեստական խնդիր, ինչպես ժողովրդական բազմամարդ տեսարանների նկարագրությունն է: Երևանի պաշարումը, Մարաղայի ճակատամարտը, Հալիձորի անկումը պատկերող տեսարանները նկարագրված են ժողովրդական ողբերգության հավաստիությամբ, «ականատեսի» իրականությամբ, անմիջական ու համոզիչ գրչով:

1964 թվականի տարեմուտին լույս տեսավ «Մխիթար Սպարապետի» երկրորդ հրատարակությունը: Թոթափելով երկը մի շարք կցակցունից տեսարաններից, խորացնելով մի քանի կերպարների հոգեբանությունը, Ս. Խանզադյանը այն դարձրեց հայկական պատմավեպի կայուն արժեքներից մեկը:

«Մխիթար Սպարապետը» լայն տարածում է գտել նաև արտասահմանյան հայության մեջ: Սփյուռքի մի շարք թերթեր վերատպում են վեպն ամբողջությամբ:

ՍԵՐՈ ԽԱՆԶԱԴՅԱՆ

ՀՈՒՅՍԸ ԱՆԹԵՂԱԾ



(Պատմվածք)

Տարիներ առաջ էր: Մեն-մենակ շրջում էի Կապանդուտ լեռան բարձրերում: Որոնում էի մի ափ մեծությամբ Լեռնակն լիճը: Նրա պերճությունը դեռ մանկությունից էր մնացել մտքիս պատկերների մեջ: Կարծես դա երկնքից ընկած մի կաթիլ արցունք էր, քափանցիկ՝ մինչև հատակի ավազը:

Ու, բարձրագնա ճմույզ ունեի: Նրա հետ մենակության տաղտուկ չէի ըզգում տեղ-տեղ հավերժական սառցադաշտերով կարկատված այդ զմրուխտ լեռների ամենի բարձրերում, տիեզերական լռության մեջ: Կանաչ ծածկոցով սքողվել էր մանկությունից ծանոթ արահետը, և ես չէի կարողանում գտնել Լեռնակը:

Շուտով քանձր մառախուղ պատեց շուրջս, և ես կորցրի ֆարայծի շավիղը, որ երեք մարդու ոտք չէր տեսել, ու միայն այս կողմերի տիրակալ ֆարայծերն են իրենց փափուկ պճեղներով տրորում նրան ծածկող կանաչը, իջնում Լեռնակնի ջրերը համբուրելու իրենց խոնավ դնչիկներով:

Մառախուղը բամբակե խճճուքով փաթաթեց ինձ ու ձիուս: Ամեն ինչ աչքիս դարձավ կաթնանեռմակ մեգ: Կենտ մի սխալ քայլ՝ և ձիուս հետ կգահավիժեմ ով իմանա որ սառցե վիհը: Իմ բախտը քոդի ձիուս իմաստությանը, սանձը բույացրի, ոտքերս հանեցի ասպանդակներից:

Չգիտեմ, որքան ժամանակ էր անցել, երբ մեկը բռնեց ձիուս սանձը: Բարձրահասակ էր, բաց գլխարկով, կապույտ վերնաշապիկով, սաստիկ զարմացած, նաև երկփող հրացանն ուսին:

— Էս ո՞ւր ես գնում, այ մարդ:

— Չգիտեմ: Մոլորվել, ճամփաս կորցրել եմ:

Նա քմծիծաղեց սև, երկար բեղերի տակ: Նրա ուսից չորս ճապաստակ էր կախված: Ես ուտելու ցանկություն զգացի:

— Մոտակայքում գյուղ կա՞,— հարցրի նրան:

— Կա՝ Արահիճը:

— Արահի՞ճը,— շշմեցի ես:— Ուրեմն ես ոտե՞ղ եմ հասել:

— Աստծո մուրուքին,— ծիծաղեց նա:— Հիմա կգա՞ս գնանք մեր տուն:

— Բա էլ ո՞ւր գնամ: Ճամփից շեղվել, բարձրացել եմ աշխարհի կատարը:

— Բարձրանալն է դժվար, իսկ գլորվելը՝ հեշտ... Անունս Վարդան է:

Ես էլ իմ անունը տվի: Նա ձիուս սանձը բռնեց ու կույր մառախուղի միջով ինձ տարավ: Հազիվ էի նկատում նրա գլխարկը, հրացանի փողը:

⁂

Չիս խրխնջաց: Մի շուն հաչեց: Մառախուղի մեջ կայծակեծին տվեց մի կրակ: Արարի դեզի մոտ մի շարդված սերմացրիչ նկատեցի:

— Հասանք,— ասաց Վարդանը:— Ձիուց իջիր:

Իջա: Մի սև գամփռ հոտոտեց ոտքերս: Գամփռի մեջքին նստած էր հազիվ յոթ տարեկան մի տղա՝ սև մազերով, կարմիր-թուշն այտերով: Արահի տակ, շեղ աչքերով, իրար հյուսված հոնքերով մի դեռատի կին Վարդանից վերցրեց ճապաստակները:

— Հորդ կանչիր, կնիկ,— պատվիրեց Վարդանը:— Ասա տունը դոնախ կա:

Բոլոր այտերով տղան շունը քշեց դեպի պապոնց տունը պապին կանչելու: Վարդանը բաց արեց տան դուռը:

— Վարդա՛ն,— սենյակի խորքից լսեցի մի պառավված, դողդոջ ձայն:— Բագրատի՞ն ես բերել, Վարդան:

— Ղոնախ է, նանի,— մռայլ պատասխանեց Վարդանը:— Ղարիբ մարդ է:

— Ուրեմն էլի Բագրատս չի՞:

— Չէ, նանի:

Տունը պարզվեց աչքերիս: Լեռնցի որսորդի տուն էր, պատերին մի զույգ զարգ, վայրի ոչխարի երեք մորթի: Մորթիներ կային նաև հողե հատակին: Սենյակում սեղան կար, աթոռներ, երկու մահճակալ՝ վրաները բրդով լիքը լցված անկողին, փրանոց բարձեր: Թախտի ծաղկավոր կարպետին ուղիղ նստել էր Վարդանի մայրը: Սեր էր, երեխ՝ ութսուն տարեկան: Դեմքը խամրած էր, բայց նա զուգված էր ճնատարազ արխալուղով, արծաթե գլխազարդերով, սուրմաներով:

— Ո՞ր երկրից ես, ղոնախի ապրած,— հարցրեց մայրիկը:

Նա չէր նայում ինձ, որդուն էլ չէր նայում: Անթարթ աչքերը դռան կողմն էին: Ես զարհուրեցի: Այս բարի դեմքով, բարի ձեռքերով պառավը կույր էր: Ես պատասխանեցի, բե ուտեղացի եմ:

— Հա,— անշարժ ասաց նա:— Լսել եմ: Կովումը եղե՞լ ես:

— Եղել եմ մայրիկ:

— Հա: Բա իմ Բագրատին չես տեսե՞լ: Մելքույանց Բագրատին: Բարձրը բոյով տղա է, ճակատը սպիտակ մազափնջով նաղաշ, ձախ բշի վրա մեծ, սև խալ: Քոռանամ: Տեսե՞լ ես:

— Ոչ, մայրիկ:

Մայրիկը շրթունքները ծռմռեց, հուսահատ ասաց:

— Հաց կեր, որդի, հաց կեր:

Սեղանին դեռ հաց չկար: Դրսում Վարդանի կինը ճապաստակներն էր տապակում օջախի կրակին: Դուռը բացվեց: Հսկա գամփռի մեջքին ներս մտավ Վարդանի տղան, ետևից նրա պապը՝ երկար դեմքը կիսած բուր բեղերով, շրթունքներն այնպես նավաած, ասես սուլում էր:

— Ո՞վ եկավ, Վարդան,— հարցրեց մայրիկը:— Բագրա՞տս է:

— Չէ, նանի, ապերն է:

— Հա,— հառաչեց պառավը — Հաց կեր, խնամի:

Հացի շուրջը երկար զրույց սկըսվեց Վարդանի, նրա աներոջ ու իմ միջև: Ծերունին խոսում էր սվսվացնելով, բութ մատով շրթունքներից հեռացնելով բեղերի մազերը: Զրույց էր, գնաց, գնաց ու դեմ առավ անցած կռվին: Ես ասացի, թե կռվում անհայտ կորած իմ մի բարեկամը վերջերս հայտնվել է:

— Ուտեղի՞ց,— հանկարծ հարցրեց մայրիկը, որ խաչքարի պես համրացած էր թախտին:

— Եվրոպայի երկրներից, մայրիկ:

— Հա,— պայծառացավ մայրիկը:— Նրա մոր աչքը լույս: Բա էդ քու բարեկամը Բագրատիս չի տեսե՞լ, որդի: Մի կհարցնես: Վարդան, գնա այդ Եվրոպի երկիրն էլ ման արի, Բագրատիս գտիր: Լսո՞ւմ ես, Վարդան:

Ու նորից լռեց՝ իր մտքերի հետ:

digitised by A.R.A.R.@

* * *

Ես պառկեցի փափուկ, մաքուր անկողնում։ Պառկեցի, բայց չքնեցի։ Սենյակում լույսը չէին հանգցրել։ Դա նանիի պահանջն էր։

— Թող լույսը վառվի,— ասաց նա։— Հանկարծ Բագրատս կերեա, բող տունը խավար չգտնի, լույսի վրա գա, մեզ նարի։ Տեր աստված...

Քնե՞լ, թե արթուն էր նանին՝ բախտին նստած, իր զուգսերի մեջ։ Հանկարծ կորած որդին կճայտնվի, բող իրեն գտնի արթուն՝ ձոցը մայրական կարոտով ու բույրերով լի, զգեստն՝ րի մեջ։

Դրսում հանախ հաչում էր շունը։ Նրա ձայնի վրա բախտին նստած նանին խլրտում էր.

— Վարդան։

— Ի՞նչ է, նանի։

— Քնա՞ծ չես։

— Չէ։

— Օղորմի հորդ։ Շունը մարդ է կոխում։ Վեր կաց, տես։ Գուցե Բագրատս է։ Շունը նոր է, չի ճանաչի, վնաս կտա բալիս։

Վարդանը վեր էր կենում, դուրս գալիս։ Մի քանի րոպե հետո ետ էր գալիս ու մրսելով մտնում տեղը։

— Հը՞,— լսվում էր պառավի պահանջկոտ, բողոքող ձայնը։

— Չկար, նանի։ Էն չէր։

— Էն չէր,— հառաչում էր նանին ու նորից լռում։

Աչքս հազիվ էի կպցրել, երբ նորից լսվեց նրա ձայնը.

— Վարդան։

— Ի՞նչ է, նանի։— Բնավ նեղացած չէր Վարդանի ձայնը։

— Շունը էլի մարդահաչ է տալիս, Վարդան, վեր կաց, Բագրատս կլինի։

Վարդանը նորից վեր կացավ, նորից բացեց դուռը։ Այս անգամ էլ ետ դարձավ, իհարկե, առանց եղբոր։ Այսպես կրկնվեց ողջ գիշեր։ Ցոր թե ուր անգամ մայրը որդուն հանեց տեղերից։

— Վարդան։

— Ի՞նչ է, նանի։

Մի մեծ ան էր մտել սիրտս։ Պառավը չի հանգստանում, չի քնում, տնեցիներին էլ չի թողնում քնել։ Ինչ համառ բան է հույսը։

* * *

Առավոտյան, դրսում լվացվելիս, Վարդանը մեղավոր ասաց.

— Ներող եղիր, քունդ փչացրեց։ Ինչ անեմ, է՞ս է քանի տարի է մայրս փոքր եղբորս նամփան է պահում։ Հազար անգամ մորս հասկացրել ենք, որ եղբայրս կռվել զոհվել է, բայց նա հավատում է, որ որդին ողջ է, սպասում է նրան... Աչքերը եղբորս ճանապարհին խավարեցին։— Վարդանը հառաչեց։

Ես ոչնչով չէի կարող թեթևացնել նրա վիշտը։ Ասենք նրանք թեթևացրի, հապա մո՞րը։ Ինչո՞վ սփոփես աչքը որդու ճանապարհին խավարած մանիին։

Մտանք տուն։ Ես մոտեցա նանիին՝ մնաս բարով ասելու։



Նկար՝ Լ. Խանամիրյանի

— Գնո՞ւմ ես,— հարցրեց նա։

— Գնում եմ։

— Էլի՞ գալու ես։

— Ո՞վ իմանա, երևի գամ։

— Բոյը բարձր տղա է Բագրատս, ճակատը՝ սպիտակ մազափնջով նաղաշ, ձախ բշի վրա սև, մեծ խալ։ Քոռանամ։ Ման եկ, որդիս։ Որ գտնես, ասա՝ մերդ գերեզմանից առաջ քեզ է սպասում, անխիղճ։ Բարով գնաս։ Վարդա՜ն։

— Ի՞նչ է, նանի։

— Հաց ու պաշար կապիր ղարիբի համար, Բագրատիս նկարն էլ նրշանց տուր, թող տեսնի, լավ ճանաչի, որ մտքիցը չգնա։

* * *

Այս պատմությունը գրելուց հետո ես նորից եղա Արանին գյուղում։ Դրնացի հին ծանոթիս տունը։ Բակում Վարդանը դիմավորեց ինձ։ Մենք միասին ներս մտանք։

— Վարդան,— լսեցի մայրիկի ձայնը։— Բագրատին բերի՞ր, Վարդա՜ն։

— Չէ, նանի, էն տարվա մեր հյուրն է։

Աչքերս լցվեցին։ Մոտեցա, համբուրեցի պառավի ձեռքը։ Նա սմքած մոմ էր դարձել արդեն, դողում էր կենդանի։ Նաև փոքրացել էր նանին, դարձել մի բուռ մանուկ, անբեղած կրակ՝ հույսի չմարող բոցով։

— Մխիթարանքի բան չասե՜ս,— ինձնից պահանջեց պառավը։— Ես մխիթարանք չեմ ուզում։ Բագրատս կա՛, կգա՛։ Ինձ համար գերեզման չկա՝ առանց Բագրատիս տեսնելու։ Բագրատս կգա՛, ես սպասում եմ։

* * *

Կապույտ լճակներ կան Կապանդուռ լեռան գոգերում, երկնքից ընկած արցունքի կաթիլներ՝ իրենց հայելիներում երկնքի լազուրը, քարայծերի սիրաչքերի չափաղը, ծաղիկների խայտանքը։ Մրին ծմակներ կան Արանին գյուղի շուրջը։ Հյուրընկալ օջախներ կան այնտեղ, հսկա զամփռների մեջքին նստած բուխ մանուկներ։ Մի պարզ լեռնական կյանք կա Արանինում, հեքիաթային հմայքներ, խորհրդավոր գիշերներ ու հրդեհ լուսաբացներ։

Ոչինչ իմ մտքում չի դաջվել այդ ամենից։ Իմ մտքում գյուղական մի պարզ խրճիթ է, նախշավոր կարպետ, վրան խաչարձանի պես տնկված մի մայր՝ լույսը թափված աչքը դռանը, ականջը՝ որդու ձայնին։

Հիմա էլ իմ ականջում զնգում է նրա բողոքող ձայնը,

— Բագրատս կգա՛։ Ես սպասում եմ։

Ես վախենում եմ նորից գնալ Արանին։ Հանկարծ որդու ճանապարհը պահող այդ պառավի տեղը դատա՞րկ գտնեմ։ Վախենում եմ լանջի գերեզմանատանը մի հողաթումբ ցույց տան ինձ, մի թաղված հույս։

Ոչ, թող ապրի նանին, թող ապրի նրա մի բուռ մարմնում անթեղված հույսը։

digitised by A.R.A.R.@

ՀԵՆՐԻԿ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մ Ա Հ Ը

Այս հավերժական,
Այս փոփոխական
Այս աշխարհաշեն աշխարհի վրա
Ամ՛ն ինչ մի նոր ձև է ստանում,
Ջաղաքները նոր գույներ են հագնում,
Նոր խոսքն է ծնվում երգերում թովիչ
Նոր բանաստեղծի,
Մի նոր ձևով է ծաղկում ակացին
Փորձակայանում:
Նոր նշաններ են երևում ահա քարտեզի վրա,
Որ երեկ չկար...
Նորը ծնվում է և հունտը ցանում
Առավել նորի,

Այդպե՛ս է կարգը այս հարատևող,
Այս մե՛ծ աշխարհի:

Ամեն ինչ նո՛ր է ու փոփոխական,
Բայց կա մարդու հետ աշխարհը եկած
Մի անչափելի՛, խորո՛ւնկ ցգացում,
Որ չունի՛ երբեք մահ ու ծերացում,
Որ նո՛ր է, հավե՛րժ, և հի՛ն է այնքան,
Որքան այս մի բուռ հողագունդը կա,
Այս մոլորա՛կը...

Եվ դա մարդկային սիրտը սիրտ պահող
Սե՛րն է, միա՛կը:
1964

ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ծաղկել է ալգին,
Իսկ դո՛ւ, իմ անգին,
Նստել ես մենակ, ինձ ես սպասում,
Կողքիդ այն վճիտ առվակն է խոսում
Ջեզ հետ մտովին,
Լուռ սպասումի վայրկյան ես դարձել
Դու բոլորովին:
Նայում ես շուրջդ,
Գալիս են ցույգեր, իրար հանդիպում,
Ակացին նրանց մազերի վրա
Ծաղիկ է թափում...
Իսկ ես դեռ չկամ...
Ամեն օրվա պես, գիտես, պիտի գամ,
Բայց ուշանո՛ւմ եմ,
Գուցե մտածես՝ հագած պզեստս նորից հանում եմ,

Դուրըս չի՛ գալիս,
Ո՛չ, ո՛չ, սիրելիս,
Ո՛չ, հապար անգամ,
Բայց ինչպե՛ս ասեմ, որ ամեն անգամ
Երբ տեսնում եմ քեզ,
Ա՛խ, այրվում եմ ես
Այրվում առանց ծուխ...
Ջո աչքերը թուխ
Մագնիս են կարծես,
Կրա՛կ են, բո՛ց են,
Որ քաշում են ինձ արեգակի պես..
Ա՛խ, ինչու այդպես
Ջո հպոր սիրո այրող կարոտից
Ես շուտ մոխրանամ,
Ծող հեռու լինեմ,
Ջի՛չ էլ, մի քի՛չ էլ թող որ ուշանամ:

ԿԵՐՍՊԻ ԼԻՃ

Երևանում ահա Սևանն է փոքրացել,
Կարապների լիճ է դարձել,
Իր հետ բերել է վով վեփյուռը լեռների,
Որ տալիս է այս բուրավետ ծաղիկներին,
Բալիկներին այս գանգրահեր,
Շոյում՝ կարոտ աչքերը մեր
Մե՛դմ, աննկատ իր նավանքով,
Այս պուրակն է լցնում երգով,
Ուր կանաչն է գորգի նման փռվել չորս դին,
Ուր մանուկը՝ դեռ առաջին խոսքը շուրթին
Վազվզում է ու թավալվում,
Շշուկով է սերը հալվում
Սաղարթախիտ այս ծառի տակ,

Բարձր երկինքն է կապուտակ
Այս լճի մեջ աստղեր չափում,
Բայց Սևանը, այս Սևանը
Էլ չի՛ ծփում,—
Ինչպես այնտեղ, իր հարազատ լեռների մեջ,
Ուր կրակն է վառվում անշեջ
Իր փարոսի,
Ուր ծանոթ երգը ծկնորսի
Հառնվում է ալիքներին փրփրադեզ,
Եվ հարազատ հնչյունի պես
Ջրերի հետ անվերջ խոսում,—
Լսում երկա՛ր, թե Սևանն իր բախտի մասին
Ի՛նչ է ասում:
1964.

ՀԵԾԱՆԻՎԸ

Մի թուխ մանուկ է երեք տարեկան,
Հեծանիվ ունի երեք ականի,
Ճամփան է անցնում իր սովորական
Մինչև դարպասը մեր հարևանի:

Երկու ծառերի մեջտեղից հանկարծ
Իր հեծանիվն է նա արագ քշում,
Բավականությամբ մի անգերազանց
Նայում է շուրջը, քիթը վեր քաշում:

Իբր անցել է, տեսե՛ք, մի տեսե՛ք,
Ա՛լ թե ինչպիսի դժվարին տեղից,

Էլ չծիծաղե՛ք, էլ փոքրիկ չասե՛ք
Այս սևաչ տղին:

Դեռ ամպ չտեսած նրա աչքերում
Ճառագայթում է ժպիտը անմեղ,
Իր հետ նա ասես գարո՛ւնն է բերում,
Իր հեծանիվով ցրում ամեն տեղ:

Եվ ի՛նչ է, ի՛նչ է հարկավոր մարդուն,
Որ սրտում գարուն և արև լինի,
Ա՛խ, այս ժպի՛տը, այս ճառագայթը
Եվ հեծանիվը երեք ականի:
1964.

ՍՓՅՈՒՌՔԱՇԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

Հոկտեմբերի 12-ին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հյուրն էր ամերիկահայ գրոսաշրջիկների մի խումբ:

Այս խմբի մասն էին կազմում հայտնի հասարակական գործիչներ Սեդրակ Շահենն ու Հակոբ Խաչմանյանը, Ֆրեզնոյի հայկական ռադիոժամի վարիչ Ասա Շիրազյանը, Աբարկիրի միության ներկայացուցիչ Սարգիս Ճանճիկյանը, «Լարեր» բերջի (Նյու-Յորք) անգլերեն էջի խմբագիր Աբահսի Միրիճանյանը:

Ամերիկահայ հյուրերին ընդունեց կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը, որը պատմեց նորաստեղծ հիմնարկության գործունեության, Հայաստանի վերելքի մասին և պատասխանեց հյուրերին հետաքրքրող հարցերին:

***

Հոկտեմբերի 13-ին Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում հավաքվել էին Գրականության և արվեստի բանգարանի, գրականության ինստիտուտի աշխատակիցները, հայտնի գրողներ ու գրականագետներ Խաչիկ Դաշտենցը, Մարո Մարգարյանը, Սողոմոն Տարոնցին, Գառնիկ Ստեփանյանը, Սարգիս Մելիքսեթյանը, Սուրեն Աղաբաբյանը, Սաղաթել Հարությունյանը, Ստեփան Ալաջաջյանը և ուրիշներ:

Ֆրեզնոյի հայկական ռադիոժամի վարիչ Ասա Շիրազյանը ներկաներին պատմեց իր հետ բերած հիշատակարանի մասին, ուր ամփոփված են չորք հարյուր գրողների 140 ստեղծագործության ձեռագրեր, որոնց մի մասը մինչև հիմա անտիպ է մնացել: Հիշատակարանում կան Ալ. Շիրվանզադեի, Ավ. Իսահակյանի, Դ. Վարուժանի, Անայիսի և ուրիշների ձեռագրերից: Հիշատակարանը կազմել էր սփյուռքահայ բանաստեղծ ու խմբագիր Վարուժան Պարսամյանը:

***

Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեն ստացել է «Նոր Գեղի» ազգագրական հանդեսի 100 օրինակ, որ ուղարկել էր համահղեցիական միությունը (ԱՄՆ): Իրենց հեղինակած գործերն են ուղարկել Պետրոս Քաչբերունին, Վահան Հովհաննիսյանը, Հակոբ Թորոսյանը, Կարո Փոլատյանը, Ասա Հովհաննիսյանը և ուրիշներ:

digitised by A.R.A.R.@

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՐԱԶԱՏ ԵՐԿՐՈՒՄ

Լ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Վաղուց ի վեր հայոց աշխարհում սովորույթ է եղել ուսումնառության նպատակով օտար աշխարհներ ուղարկել հայ պատանիներին ու երիտասարդներին: Ու հայրենի տնից, հարազատ օջախից հեռացած ուսումնածարավ այդ պատանիները մեկնել են Ալեքսանդրիա, Աթենք, Հռոմ, իսկ ավելի ուշ՝ Պետերբուրգ, Մոսկվա, Դորպատ, Բեռլին և այլ քաղաքներ:

Ու այդպես հայ մարդու համար հին նրազանք է եղել հայրենի երկրում բարձրագույն դպրոցներ ունենալը: Հայ հանճարեղ երգահան Կոմիտասը, օրինակ, իր ամբողջ կյանքում նրազում էր մի փոքրիկ նրաժյտանոց բացել Հայաստանում, բայց այդպես էլ նրան չհաջողվեց այդ բանը: Եվ ինչու միայն Կոմիտասը... Հայրենի երկրում առաջնակարգ դպրոցներ ունենալու մասին նրազել են նաև մեր բոլոր մտավորականները ու նրանց նրազանքը իրականություն է դարձել միայն խորհրդային իշխանության տարիներին:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո երկիրը ծածկվել է դպրոցական լայն ցանցով, վերացել է անգրագիտությունը: Հայ ժողովրդի ողջ գոյության ընթացքում առաջին անգամ հայրենի երկրում բացվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ, որոնց բիվը այսօր հասնում է տասնմեկի: Այդ հաստատություններում այժմ սովորում են ավելի քան 34 հազար պատանիներ ու աղջիկներ՝ 115 մասնագիտությունների գծով: Միայն Երևանի պետական համալսարանում, որը հանդիսանում է մեր ժողովրդի հպարտությունը, սովորում է շուրջ 10 հազար ուսանող և դասավանդում ավելի քան 400 դասախոս: Նրանցից չորսը ակադեմիկոսներ են, ինը՝ ակադեմիայի թղթակից-անդամներ, 40-ը՝ պրոֆեսոր-դոկտորներ և 218-ը՝ դոցենտներ ու գիտության բնկնածուներ: Սովետական Միության մեջ մեծ համբավ են վայելում նաև Երևանի մյուս բուհերը՝ պոլիտեխնիկական, բժշկական, անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտները, Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: Իսկ որքա՜ն պատանիներ են սովորում միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Այո՛, իրականություն է դարձել մեր ժողովրդի վաղնջմ նրազանքը: Սակայն կար և մի ուրիշ նրազանք, որ տարիներ շարունակ իրենց կրծքի տակ փայփայում էին աշխարհի տարբեր ծայրերում սփռված տարագիր հայերը՝ մեր հայրենաբաղձ հայրերն ու նրբայրները: Եվ այդ նրազանքը երկար ժամանակ մնում էր անկատար: Դա հայրենիքում, մայրենի լեզվով ուսանելու նրանց նվիրական նրազանքն էր, չերմ փափագը: Չէ՞ որ մեր ժողովրդի այդ հատվածի համար դեռ մնացել էր նույն ցավոտ խնդիրը՝ ուսանելու համար մեկնել այլ քաղաքներ, սովորել ոչ մայրենի լեզվով:

Ահռելի ու նվիրական նրազանք, որ նույնպես իրականություն դարձավ: Խորհրդային Հայաստանի կառավարությունը ընդառաջելով սփյուռքահայ պատանիների ու աղջիկների ցանկությանը, հնարավորություններ ստեղծեց նրանց համար գալ հայրենիք և սովորել նրա բարձրագույն դպրոցներում, ձեռք բերել իրենց նախասիրած մասնագիտությունը:

Առաջին ծիծեռնակները եկան 1957 թվականին: Դրանք Սիրիայից, Լիբանանից և Իրաքից ժամանած պատանիներ ու աղջիկներ էին, որ նվիրական զգացումներով ոտք դրեցին հայրենի հողին և այդ ժամանակից սիրիացի Կասիս Գրիգորը՝ բժշկական ինստիտուտը, նրա հայրենակից Սամի Շատրյանը՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի խմբավարական բաժինը, լիբանանցի Արա Առաքելյանը՝ պոլիտեխնիկական ինստիտուտի ավտոմատիկայի ֆակուլտետը և ուրիշներ:

Պոլիտեխնիկական ինստիտուտում ուսանողները մինչև հիմա էլ հիացմունքով են հիշում շինարարական ֆակուլտետի շրջանավարտ Վարուժան Մարգիրյանին (Լիբանան), որը ուսման հինգ տարիների ընթացքում ցուցաբերեց գերազանց առաջադիմություն և փայլուն կերպով պաշտպանեց իր դիպլոմային աշխատանքը՝ «Պանորամային կինոթատրոն՝ 1600 տեղի համար» թեմայով:

Հաջորդ տարին՝ 1964 թվականին, Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտեցին ևս վեց սփյուռքահայ երիտասարդներ: Նրանց մեջ էին Երևանի բժշկական ինստիտուտի շրջանավարտներ սիրիացի Ժան Օհանյանը, Խաչիկ Առաքյանը, Հարություն Մարտիրոսյանը, Երևանի պետական համալսարանի շրջանավարտներ Հերմինե Քալամքերյանը, Մանվել Քյոսեյանը, Երևանի պետական կոնսերվատորիայի շրջանավարտ շնորհալի երգչուհի Արմինե Մանուկյանը: Նրանք նույնպես վերադարձել են իրենց հարազատների մոտ և այժմ աշխատում են իրենց մասնագիտությամբ: Այս տարվանից արդեն սովորելու են գալու ավելի շատ սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ, հանի փոխարեն յորանասուն մարդ:

Սփյուռքահայ ուսանողներին Երևանի հասարակայնությունը, բարձրագույն դպրոցների դեկավարությունը, պրոֆեսոր-դասախոսական կազմը և ուսանողությունը շրջապատել են չերմ հոգատարությամբ, ստեղծել բոլոր պայմանները, որպեսզի նրանք կարողանան ստանալ հարուստ գիտելիքներ ու դառնալ բարձրորակ մասնագետներ: Համալսարանում սփյուռքահայ ուսանողների համար կազմակերպվել է նախապատրաստական հատուկ ֆակուլտետ, որտեղ արտասահմանից եկած պատանիներն ու աղջիկները անցնում են մեկ տարվա դասընթաց, ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ հաջորդ տարին

Նկարներում՝ 1. Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում (Ձախից աջ) Ք. Մալունցյանը (3-րդ կուրս), Օ. Ձերչիյանը (1-ին կուրս)— Բուլղարիայից, է. Մելքումյանը (2-րդ կուրս), Ա. Անդրեասյանը (4-րդ կուրս)—ԱՄՆ-ից, Շ. Որբերյանը (3-րդ կուրս)—Եթովպիայից և Լ. Քարամյանը (5-րդ կուրս) դասերից հետո։ 2. Երևանի բժշկական ինստիտուտի բուժֆակի 6-րդ կուրսում է ուսանում, Ա. Ֆաթրիկացյանը (Սիրիայից)։ Նա իր համակուրսեցիներ Վ. Նալբանդյանի և է. Կոստանյանի հետ ինստիտուտի լաբորատորիայում։



digitised by A.R.A.R.@



Երևանի բժշկական ինստիտուտում են ուսանում Սիրիայից ժամանած Մերուժան և Համբիկ Քիրիշյանները, իսկ նրանց քույրը՝ Վարսենիկը ուսանում է պոլիտեխնիկական ինստիտուտում։ Նկարում՝ Մերուժանը և Վարսենիկը բժշկական ինստիտուտի հանրակացարանում։

Լուսանկարները՝ Պ. Պետրոսյանի

իրենց ընտրած ֆակուլտետում ընդունելության քննությունները հանձնելու համար։ Նրանց տրամադրվում է լաբորատորիաներ, կազմակերպվում են կոնսուլտացիաներ։ Տեղացի սովորողները սիրով օգնում են նրանց մշակելու դասախոսությունների գրառումները, պատրաստվելու սեմինարներին, կոնսպեկտավորելու պարտադիր գրականությունը։

Խորհրդային Հայաստանի կառավարության որոշմամբ արտասահմանյան ուսանողներին ձրի տրամադրվում է հանրակացարան և բարձր թոշակ։ Նրանց համար հաճախակի կազմակերպվում են էքսկուրսիաներ դեպի Սովետական Միության և հանրապետության քաղաքներ, տեսարժան վայրեր, խոշորագույն ձեռնարկություններ։ Ինստիտուտների հասարակական կազմակերպությունները հաճախակի կազմակերպում են ներկայացումների, օպերաների, համերգների, և հանրապետության թանգարանների կոլեկտիվ դիտումներ։ Արձակուրդի օրերին սփյուռքահայ ուսանողներին տրվում են ուղեգրեր՝ երկրի առաջնակարգ առողջարաններն ու հանգստյան տներ մեկնելու համար։

Այս ուսումնական տարում մայրաքաղաքի բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվեցին նաև հիսուն սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ։ Առաջին անգամ այս տարի տասնվեց սփյուռքահայ պատանիներ ու աղջիկներ ընդունվել են հանրապետության միջնակարգ մասնագիտական ուսումնարանները։ Նրանք սովորում են Երևանի երաժշտական, պարարվեստի ուսումնարաններում, էլեկտրամեխանիկական, շինարարական, թեթև արդյունաբերության տեխնիկումներում։

Այժմ հարազատ երկրում սովորում են արտասահմանից եկած 193 հայ երիտասարդներ. նրանցից շատերը աչքի են ընկնում ուսման մեջ իրենց ցուցաբերած առաջադիմությամբ և օրինակելի կարգապահությամբ։ Դասախոսներն ու հասարակական կազմակերպությունները գովասանքով են խոսում Երևանի բժշկական ինստիտուտի ուսանող Սարգիս Ֆարբիկաչյանի (Սիրիա), Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ուսանողուհի Աստղիկ Անդրեասյանի (ԱՄՆ), պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Սիբի Լեոն Նազարեթի (Սիրիա) և ուրիշների մասին։



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ՃՇՄԱՐԻՏԸ ՎԵՐՀՈՒՇԻ ՄԵՋ

Կ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ներկայից անցյալին նայելու պահանջը գրական նախասիրության հետ չի կապված։ Մի ապրված կյանք, շրջադարձի կամ ավարտի հասած մի ուղի, որ լուսագծվում է հեռավոր ու անդարձ հիշատակների մշուշում— գեղարվեստական իմաստավորման է ենթարկվում այն ժամանակ, երբ ծնվում է դրանից «ազատագրվելու» ցանկությունը։ Սրա պատճառները նույնքան բազմազան են, որքան տարբեր կյանքի այդ սահմանը եզրափակող իրադարձությունները։

«Միծենականները ցածեն անցան»՝ այսպես է վերնագրել հայրենադարձ գրող Գեղամ Սևանը իր նոր գիրքը։ Մի քանի պատմվածքներ և «Կորսված գարուններ» գեղարվեստական հուշապատումը ենթարկված են անցյալի հետ «հաշիվներ փակելու» գրողի այն մտադրությանը, որ հետևանք ու արդյունք է նրա նորօրյա մտորումների։ Դա նաև յուրատեսակ ինքնաստուգում է՝ արդեն մի որոշ հեռավորությունից և այլ մի իրականության ներգործուն ազդեցության տակ։ Այնպես չպետք է հասկանալ, թե գրողը ազատագրվելով անցյալի «տանջալի ծանրությունից»՝ իր համար ներանձնական բարօրություն է վաստակում դրա հաշվին։ Ստեղծագործական ու գաղափարական բարդ հարցեր են ծառացել իր իսկ՝ հեղինակի առաջ. լուծումներ տալ դրանց՝ նշանակում է մեկ անգամ ընդմիշտ ճշտորոշել իր դիրքը անցյալի ու ներկայի միջև, սահմանագծել եղուզինները, չափակշռել վաստակածն ու ապրածը, վերստուգել նախկին համոզումները, տպավորությունները, դիտավորությունների հասարակական նպատակայնության արժեքը և վերջապես՝ պատասխանել այն հարցին, թե «կորսված գարունները»՝ մանկությունը, պատանեկությունը, երիտասարդությունը, ի՞նչ բերին և ո՞ւր տարան իրեն։ Սա՝ մյուս կողմից՝ արդեն որոշումն է մարդու և գրողի ճակատագրի։ «Մարդիկ չեն թողուր, որ ապրիս ուզածիդ պես, չեն թողուր երջանկությունդ ըլլա լիակատար»,— հուշապատումի ամբողջ գեղարվեստական հյուսվածքը այս մտքին է բերում։ Պոլիս թե Բեյրութ, Թուրքիա թե Լիբանան՝ հացի և քաղաքականության խնդիրը մեջտեղ ելած տնօրինում է մարդկանց ճակատագիրն ու բախտը։ «Բյուրեղյա դղյակը»— մանկության մաքուր երազանքները՝ ծիծաղհարույց կործանումի են դատապարտված, ինչպես աղջիկ փախցնելու Խրիստոյի և Գեղամի որոշումը, երբ դեռ 10—13 տարեկան երեխաներ էին։

Մանկության հուշանկարում գրողը նախընտրում է օգտագործել թախծոտ ու մեղմանուշ շեշտեր, քնարական բնանկարի գայթակղիչ լուսազարդումները, կապույտ երկնքի և աստղազարդ գիշերների խորհրդավոր ու անմեկին գունաներկը, ապա և մտերմիկ ու ջերմ այն հուզատոնը, որ վարակիչ է հենց միայն իր անխարդախ պարզությամբ։ Մի ենթաբնագրային և ընդհանրական մտքի է ենթարկված գեղարվեստական հուշապատումի այս հատվածը։ Միմյանց հետ կռվող թուրք-հայ-հույն երեխաները ունեն իրենց «զորաբանակը», իրենց «մարաջախտները»։ Եվ Թուտին, որ գերմանացի էր ու «մարաջախտ», քրոջ՝ Քրիստինայի ամուսնությունից հետո, դավաճանում է խմբին և անցնում Թաուֆի և սրա թուրք ընկերների կողմը։ «Վերքը տաք էր տակավին ու ցավը ոչ ուժգին,— մի ծեծկռտուքի պատմությունից հետո ասում է հեղինակը— վերցուցի գլուխս և ինչ տեսնեմ... Թուտին Թաուֆին հետ կպռուշտար հաղթական, հեռացող թուրքերու շարքերուն մեջ կեցած»։ Ճակատագրի այս համընկնումները թեկուզ մանկական «զինախաղերում» արդեն իսկ հուշում են արյունոտ պատմության և ոչ հեռու անցյալի միջև եղած կապը, դրվագներ, որ ասես թե կրկնվում են կյանքի միևնույն տրամաբանությամբ։

Գ. Սևանը զարմանալիորեն զգույշ և շրջահայաց է, կոպիտ չերևալու համար։ Նրա հրապարակախոսական մտորումները քնարական մեղմությամբ են հագեցված, նա չի պարտադրում, բայց և չի էլ նահանջում գաղափարական այն բնագծից, որի վրա կանգնած է վստահորեն և ամուր։ Հազիվ թե այս իմաստով խորհրդանշական չէ Խրիստոյի՝ այդ հույն ընկերոջ ու մարդու պատմությունը, որ ձգվում է «Կործանված գարունների» մեկ ծայրից մյուսը՝ որպես երգ կամ մեղեդի, ու շատ անգամ պատճառ դառնում գրողի քնարական մենախոսությունների և

digitised by A.R.A.R.@

ինքնավերլուծումների համար։ «Ախ, սիրելի երխատ, դուն սակայն, դուն ընտրեցիր դյուրին ճամփան»։ Տարիներ անց երխատն նորից է հայտնվում, լուսավոր ու մաքուր մի հոգի, արդեն ապառումի մոտ, նվաստացած ու խեղճ, որովհետև ապրում էր մոր թանկացրած պոռնկատան փողերով, մի վերջին ճիգով փորձում էր վերադարձնել մանկության պայծառ ժամանակները, Քրիստինայի սերը, ազատվել մղձավանջից և ապրել արդար կյանքով։ Բայց երխատն մեծացել էր միայն տարիքով. ամեն ինչ նրա մոտ մանկական էր և ռոմանտիկ՝ բնավորությունը, մտքերը, իղձերը։ Եվ դրա համար էլ կործանումի դատապարտված, քանզի աշխարհը մանկության օրենքներով չէ, որ կառավարվում է։ Երխատայի անկումը գիտակցական ինքնայրում էր և գիտակցական ինքնասպանություն։ Երխատայի ճակատագիրը գրողի համար մի խորհրդանիշ է այդ աշխարհին դատապարտումի խոսքեր ասելու։ Երխատն հեղինակի մի մասն է, նրա սրտի խորշերից մեկը, նրա հոգու խոր ցավերի թարգմանը։ Եվ եթե նա ողբում է երխատայի ճակատագիրը, ապա մասն ունի այնտեղ և իրենը, որովհետև կորուստների, զրկանքների, հուսախաբությունների ինչ ճանապարհներ ասես չի անցել նա՝ սուրբ մանկությունից մինչև ծաղկուն երիտասարդություն։

Երբ մանկությունն ու պատանեկությունը ետևում թողած գրողը հաստատվում է Բեյրութում, նրան պաշարում են ոչ միայն նոր հոգսերը հացի ու ապրուստի շուրջ, այլև նոր մտորումները ազգային կյանքի, որ Պոլսում, ըստ երևույթին, հասակ ու կերպարանք չունեին կամ գուցե ըմբռնվում էին ենթագիտակցորեն։

Այստեղ հենց առաջին հանդիպումին ուրվագծվում են ազգակործան բաժանումի ու թշնամանքի առաջին սահմանները։ Աշխատանքի համար ուրիշ նյութ գրագետը փնտրումի այդ օրերին դեմ առ դեմ հանդիպում է կուսակցական անհանդուրժողությանը, որ դեռ անհասկանալի ու անբացատրելի ուրվանկար ուներ հեղինակի համար։ Գ. Սեւանի քաղաքական համոզումները հետևանք են առաջադիմական կուսակցությունների հետ նրա մերձեցումների։ Եվ գրողը պարզում է իր կողմնորոշման, այսպես ասած, առարկայական հիմքը։ Դրվագները, որ նա նկարագրում է յուրահատուկ հրապարակախոսական նահանջներով, վկայում են նյութի համար այլ ուղի չունեցած մտավորականի արդարությունը։ Արար ազատամտականների և հայ համայնավարների հետ նրա բարեկամությունը տրամաբանական արդյունքն էր կյանքի իրական պայմանների։ Իր գրական երախայրիքներում արդեն իսկ տառապյալների դատն էր պաշտպանում նա։ Հիմա պատերազմի և գաղութարարության դեմ միասնական պայքարի որոշման մեջ կռահում էր տառապող մեծամասնության ապագայի ակնկալիքները։ Ու նա նվիրվում է այդ պայքարին։

Գաղափարական հակամարտությամբ բաժանված գաղթօջախի ներքին հակասությունները շատ անգամ են մղել հեղինակին վերհուշի մեջ ազգային ողբերգությունն այպանել՝ կարեկցանքի ու ներքին վշտի խոր ապրումներով։ Թյուր ազգայնականության դեմ պայքարի հանձնարարականը մի ավելորդ անգամ վկայում է նրա ազնիվ դիրքը կուսակցական պայքարում։

«Կորսված գարուններին» հետ Գ. Սեւանը գրքում տեղադրել է մի քանի պատմվածքներ։ Թեմատիկ ընդհանրություններից զատ, դրանք համախոս են հուշապատումի գրքին բոլոր տրամադրություններին։ «Մանիշակագույն էին լեռները» պատմվածքի սյուժետագիծը դարձյալ վերհուշի սահմաններում է տեղավորված։ Ֆիդայինի կյանքն է սա՝ իրապաշտ գույներով նկարված։ Գրողը դեպքերի ընկալման մարդկային տեսանկյունը հանգուցել է գաղափարական հստակ դիրքորոշման հետ։ Օհան դայու խոստովանությունը ջղատագնապի արցունք չէ։ «Վրիպանք էր այս մարդը»,— ասում է հեղինակը նրա հասցեին։ Ու պատմում է Օհան դայու պատմությունը ողբերգական, ըմբոստահույզ։ Իսկապես անհավասարակշիռ, ուժեղ համր չարոտ, ջարդարարների ոհմակից մազապուրծ, հետո պատուհասող և վրիժառու, մարդը ահարեկիչների խմբերին միացած կտրել անցել է դժբախտ ու դժնի մի կյանք ու մեռնում է հիմա հայրենիքի կարոտից տենդահար։ Հոգեբանական խոր վերլուծումները, որ գրողը կատարում է վարպետ դիտումներով, հաստատում են Օհան դայու շրջադարձի և երազանքի հավանականությունը։ «Հայրենիքին դեմ ըլլալ կարելի չէ»։ «Կսիրեմ հայրենիքս, ինչ մարդիկ ալ ըլլան հոն. միայն բավ է, որ հայ ըլլան անոնք»,— Ֆիդայինի այս խոսքերը ասես թարգմանում են սփյուռքահայության գերակշռող մեծամասնության տրամադրությունները։ Եվ ձայնակից այդ տրամադրություններին, Գ. Սեւանը փորձում է հեռավորին ու հարազատին գոյատևելու կանոնագիրքը ընթերցել՝ նրանց իսկ կյանքի պատմության օգնությամբ։ «Նահանջ երգով» պատմվածքում, օրինակ, Տրդատի որդի Հովնաթանին կարդացած հրավերը՝ «...Դյուրին չըլլա թերևս քու Ֆրանսա երթալդ»,— մի զգայաթափ կանչ է ազգաձուլման վտանգից խուսանավելու համար։ Պատկերի ամբողջության մեջ սիմվոլիկ տարրի գերակշռությունը, քնարական նահանջները, հրապարակախոսական քրոնիկի ակներև տարրերը Գ. Սեւանի խոսքը դարձնում են ավելի ներգործուն և նպատակամերձ։ Անշուշտ «արևի և իրավի» թեմա— գաղափարագիծը գրքին այն առավելությունն է տվել, որպիսի առավելություն կարող են տալ միայն ճշմարտությունն ու անկեղծության գեղեցկությունը։ Եթե երբեմն հեղինակը վրիպել է որոշ գեղարվեստական պատկերներում, ապա դա թերևս նրա կըրքոտ ու հախուռն գրական խառնվածքի հետևանքն է։

Ծովի սերը, ծովի երգը...

Շ. ԽԱՉԱՏՐՅԱՆ



ՎԱՐԴԱՆ ՄԱԽՈԽՅԱՆ

Ծովը, նրա անսահման հեռուն, անդորր մայրամուտների հրապույրն ու լուսնկա գիշերների կախարդանքը, լայնաշունչ արևածագն ու փոթորկահույզ ալեծփումները միշտ էլ հուզել, ինչ-որ յուրատեսակ ներշնչանք են տվել հայ արվեստագետներին՝ նվիրական ապրումներով հյուսված երգեր բանաստեղծելու, կտավներ վրձնելու:

Ծովը հատկանշական չէ հայկական բնաշխարհին, բայց հայ մարդը «ծովի երգի» մեջ իր ժողովրդին վերաբերող շատ բան է ապրել ու ապրել...

Բուն ծովանկարչության ասպարեզում հայ ժողովուրդը տվել է արվեստագետների մի պատկառելի սերունդ՝ Հովհաննես Այվազովսկի, Էմանուել Մահդեսյան, Արսեն Շաբանյան, Մկրտիչ Ճիվանյան, Կարապետ Ադամյան... Այդ սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է նաև Վարդան Մախոխյանը:

Մախոխյանը ստեղծագործական ասպարեզ իջավ վերջին երկու դարերի սահմանագլխին, այն ժամանակ, երբ հայ ժողովրդի պատմության ամենաարյունոտ էջերն էին գրվում: Նա դարձավ մայր ժողովրդի կրած դաժան փորձության ականատեսն ու ծանր վերապրողներից մեկը:

Երբ դիտում ես Մախոխյանի ծովանկարները, թվում է, թե քո առջև են տարբեր բնույթի, տարբեր հույզերով մարմնավորված պատկերներ, սակայն ըստ էության միևնույն երգի՝ նկարչի հոգու երգի հնչյուններն ես լսում նրանցից:

Հայրենակարոտ, տարաբախտ հայի առանձնության ապրումներն են բաբախել Մախոխյանի սրտում, երբ ամեն անգամ ներկատուփն է բացել ծովափին: Նկարիչը ընկալել է բնությունը՝ առանց փորձելու թաքցնել սրտի վարկերի ծայնը: Նա սիրել է ծովը ու ծովի երգերում երգել իր երգը: Դրանով էլ հենց նրա արվեստը, տաղանդի ընդգրկած սահմաններում, հուզական է, ներգործուն: Դրանով էլ Մախոխյանի արվեստը թանկ է մեզ համար:

Մախոխյանը իրապաշտ նկարիչ է: Իսկ իրապաշտական ուղղությունը բնորոշ էր այդ ժամանակաշրջանի հայ նկարիչներին, ուղղություն, որը բացի հայ կերպարվեստի բնականոն զարգացումը լինելուց, պայմանավորված էր նաև մի ուրիշ կարևոր հանգամանքով: Քաղաքական ծանր իրադրության պատճառով հայ արվեստագետը չէր ստեղծագործում բուն Հայաստանում, մայր հողի վրա: Սակայն հայրենիքից հեռու գտնվող հայ արվեստագետը ապրում էր իր ժողովրդի կյանքով, հետևում նրա ապրած դառնախոհ ժամանակի խորհրդին: Նրա մեջ խոսում էր հայրենասերը, քաղաքացին: Միշտ չէր, որ պատկերման նյութը, առարկան, երևույթը հայրենիքն էր լինում, սակայն ոգին սեփականն էր, հայկականը:

Հայրենիքում բարբարոսաբար ոչընչացվում էին ընտանեկան օջախը, գիրքը, մշակույթը... Այդպես էր տեսել ու թողել նրան, այդպես էր հիշում ու նորանոր գույժեր լսում օտար երկնքի տակ ապաստանած հայը: Իրականության ճշմարտացի, հանգամանալից, «հար և նման» վերարտադրումը հոգևոր սնունդ էր, ներքին պահանջ: Այս հանգամանքը մենք չենք մոռանում, երբ նայում ենք Ռուսաստանում կամ եվրոպական երկրներում ստեղծագործած հայ արվեստագետների աշխարհի նյութականությունը, գեղեցկությունը, կյանքը հաստատող երկերը: Չենք մոռանում տեսնելով Զ. Զաքարյանի նատյուրմորտները, կամ Վ. Սուրենյանցի երբեմն մանրակրկիտ, բայց սիրով

digitised by A.R.A.R.@

պատկերված, սառն ու տխրամած, բայց միշտ հաղթահասակ կանգնած ճարտարապետական կոթողները, խաչքարերը...

Այս պարագան չենք մոռանում նաև Մախոխյանի ծովանկարները դիտելիս, ուր բնության տեսարանների ճշմարիտ վերարտադրումներից ու գեղանկարչական խնդիրների վարպետ լուծումից բացի, հաղորդակից ենք դառնում կարևորին՝ նկարչի հայրենասեր հոգու ձայնին:

Վարդան Մախոխյանը ծնվել է Սև ծովի ափին, Տրապիզոնում, 1869 թվականին: Կարնո Սանասարյան վարժարանում ստացած գիտելիքների ու պատանեկան երազանքների բեռով մեկնում է Բեռլին, ընդունվում Գեղարվեստների ակադեմիա: Այստեղ նա տիրապետում է նկարչական գիտելիքներին՝ Է. Պրախտի և նորվեգական անվանի ծովանկարիչ Հանս Կյուդեի ղեկավարությամբ: Մի քանի տարի անց՝ ցամաքային տեսարաններ վրձնած Մախոխյանը վերադառնում է տուն: Ճանապարհին սիրով հյուրընկալվում է Թեոդոսիայի ծերունազարդ ծովանկարչի կողմից ու խորհուրդներ քաղում: Բայց հայրենի քաղաքը անհյուրընկալ եղավ: Տրապիզոնում սկսվեց հայերի հալածանքը: Մախոխյանների ընտանիքը ցրվեց: Ալեկոծվեց երիտասարդ նկարչի կյանքն հոգին: 1900 թվականին Բեռլինում ցուցադրված «Արևամուտը Սև ծովի վրա», «Ձմեռը Կովկասում», «Տրապիզոնի վանքը» գործերը արդեն կրում են նրա բանաստեղծական արվեստի հիմնական գծերը: Դրանք «մելամաղձոտ երազանքով լեցուն» պատկերներ էին:

Նկարչի կյանքի ուղին սկսում է իր անհանգիստ ընթացքը: Նա մեկնում է Եգիպտոս, հետո Իտալիա, և նոյից ուղղություն վերցնում (1908) դեպի հայրենի քաղաք, որը կրկին անհյուրընկալ մնաց: Մախոխյանը առաջին աշխարհամարտի նախօրեին փախչում է արյունոտ տպավորություններով՝ առմիշտ թափառելու օտար ափերում, կյանքի դժվարություններ ու կարոտ կրելու:

«... Արվեստը չի պատկանիր ոչ սահմանված սկզբունքներու, ոչ ալ դպրոցներու վարդապետությանց: Ան բոլորովին անկախ է, անհատական՝ գրեթե անիշխանական: Խիստ կանոնաց ենթարկվել կարելի չէ: Ցուրաքանչյուր արվեստագետ հետևելու է իր խառնվածքին, եթե ոչ կունենանք մի գիտություն և ոչ բնավ արվեստ»: Մախոխյանը հավատարիմ իր այս ընկերքունքին, ստեղծեց բնության նկատմամբ իր անմիջական վերաբերմունքն արտահայտող կտավներ: Նա պատկերեց ռուսական ձմեռը, եվրոպական մայր ցամաքի հյուսիսն ու հարավը, ափ սուրացող ալիքները՝ մերթ գիշերով, մերթ ցերեկվա տարբեր պահերին: Եվ ի՞նչ կարևոր է, թե ո՞ր ծովն էր պատկերում նկարիչը, երբ ամենից առաջ իրենն էր արտահայտում: Որքանով նա սերեց իր վարպետներից, նույնքանով դարձավ ինքնուրույն: Նա բնությունը խորապես ուսումնասիրող արվեստագետ էր: Համոզիչ վստահությամբ էր որսում ալիքների շարժումը, հասնում շոշափելի նյութականության, շեշտում բնության խորությունը: Նկարիչը իր բնանկարները հագեցնում էր օդի ու ջրի մի փոքր սառը, կովաշունչ ազացողությամբ, մատուցում իր ինքնատիպությունը բնորոշող յուրահատուկ համերանգով: Հալաստանի պատկերասրահում է պահվում «Ծովի տեսարանը» (1905) կտավը: Այն նոինագրված է մախոխյանական գորշ կապույտով ու կանաչով, որոնք աշխույժ գծանկարին նույված՝ մարմնավորում են նկարչի մենությունը, ծովի անծայր հեռուների ազացողությունը: Նույն տրամադրությունն է իշխում նաև «Մակընթացություն» կտավում, ուր գեղիշխողը բաց վարդագույնի ու կապույտի ջերմ երանգներն են:

Արվեստի գնահատելի արժանիքների շնորհիվ Մախոխյանի գործերը ջերմ համակրանք ու սեր են վայելել: 1923 թվականին Մարսելի «Լամբեր» պատկերասրահում կազմակերպված ցուցահանդեսի առիթով, ֆրանսիական հայտնի քննադատ Կամիլ Մոկլերը գրում է. «Վ. Մախոխյանը պատկանում է գեղարվեստին ծառայող համբերատար աշխատավորների և հուլականների գեղեցիկ սերնդին: Մեկ ցույց տված իր կտավներից շատերը հայտնաբերվում էին որպես կատարյալ ստեղծագործություններ: Նա ցուցաբերում է առողջարար, լայն, ներույժ մի արվեստ, որի մեջ պետք է ուրախությամբ ողջունել վարպետների միշտ կենդանի ավանդությունը, որը այժմեություն ունի նրանով, որ հավիտենական է»:

Մախոխյանի երկրորդ հայրենի քաղաքը Նիցցան դարձավ, ուր նա ապրեց մինչև կյանքի վերջը՝ 1937 թվականը: Այստեղից էլ տարեցտարի մասնակցում էր Փարիզյան սալոններին: Նկարչի 1921-ին ցուցադրված լավագույն գործերից մեկը՝ «Ճատեկատը» գնում է Նիցցայի թանգարանը, ուր ցուցադրվում է մինչև այժմ: 1925-ին «Ալլար» պատկերասրահում կազմակերպված մենացուցահանդեսից հետո Մախոխյանը արժանանում է «Պատվո լեգեոն» շքանշանի: Ահա ֆրանսիական տեսաբանի համառոտ գնահատականը այդ ցուցահանդեսի առթիվ. «Մախոխյանի գործերից յուրաքանչյուրը ծովային բանաստեղծության բառյակ է: Նա ոչ մի դպրոցի չի պատկանում, կախում չունի ոչ մի նորածևությունից, ոչ մի տեխնիկայից: Առանձնացած մի դիտող է, որը տալիս է այն, ինչ տեսնում է և ըմբռնում ամենակատարյալ անկեղծությամբ: Ալիքը նրա համար մի ապրող էակ է, թող քամին շուռ գա ու ալիքը ցնդի: Բայց աչալուրջ նկարիչն արդեն տիրացել է նրա ձևին ու աննմանելի դիմապատկերներին: Մախոխյանի ջրով ու քամով հագեցած նկարներում տիրապետում է անասելի ամայության տպավորություն: Արտասովոր մի բանաստեղծություն է հոսում այդ ալիքների միջից...»

Արտասովոր այդ բանաստեղծության ոգին մեզ ծանոթ ու սիրելի է այսօր: Ծովի երգերով Մախոխյանը դարձավ մայր ժողովրդի դառն հուլվերի արտահայտիչը: Խոսեց նկարիչը և հայկական շրջանակներում, մասնակցեց ըմփյուռքահայ նկարիչների «Անի» կազմակերպության ելույթներին: Եվ երբ ժամանակավորապես դադար էր առնում նկարչի վրձինը, Մախոխյանի հայրենասիրական բնարերգը հնչում էր ջութակով, որին բաջ տիրապետում էր նկարիչը:

Մախոխյանը համեստ ու անթառամ վաստակ բերեց հայ կերպարվեստին: Բայց ստիպված ենք ցավով նշել, որ, պատահաբար մեր պատկերասրահում հանգրվանած նրա երեք փոքր կտավներից բացի, ուրիշ գործի բնօրինակ դեռ չենք տեսել, չենք շփվել նկարչի լավագույն երկերին: Մախոխյանի ծովանկարների մեծագույն մասը, կարոտի հուլվեր ամփոփած, ծփում են հայրենիքից հեռու:







Նկարներում (վերևից ներքև)՝ 1. Վ. Մախոխյան. ԱԼԻՔ: 2. ԿԱՊՐԻ: 3. ՌՈՒՍԱԿԱՆ ԳՅՈՒՂԸ ՁՄԵՌԱՆԸ:

digitised by A.R.A.R.@



Վ. Մախոխյան. ՄՈՂՊ ՏԵՍԱՐԱՆ:



Վ. Մախոխյան. ՄԱԿԸՆԹԱՑՈՒԹՅՈՒՆ:

digitised by A.R.A.R.@

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Դ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Աշխարհասփյուռ հայ տպագիր գիրքն ավելի քան չորս ու կես դարի պատմություն ունի:

Մեծարգո հայ գիրքը երկրից երկիր դեգերելով իր վերջնական հանգրվանը գտավ և իսկական ոսկեդար ապրեց միայն մայր հայրենիքում:

Սովետական Հայաստանի նորաստեղծ կառավարությունը կուլտուրական հեղափոխության խնդիրները կենսագործելու ճանապարհին, ի թիվս մի շարք կարևոր որոշումների, 1921 թվականի հունիսի 10-ին դեկրետ է հրապարակում Հայաստանի պետական հրատարակչություն (Պետհրատ) կազմակերպելու մասին:

Հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ առաջին անգամ գրահրատարակչական գործը պետական, համաժողովրդական բնույթ է ստանում:

Իր գոյության շուրջ 43 տարիների ընթացքում Հայպետհրատը, որ վերջերս վերանվանվեց «Հայաստան», ընթերցողներին տվել է գրականության, գիտության, արվեստի և ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ ավելի քան 16 հազար անուն գիրք ու գրքույկ, որոնց ընդհանուր տպաքանակը հասնում է 120 միլիոնի:

Ուշագրավ է այն փաստը, որ եթե իր հիմնադրման առաջին տարում՝ 1921 թվականին, Պետհրատը տպագրել է 10 անուն գիրք՝ 21,5 հազար ընդհանուր տպաքանակով, ապա 1963-ին հրատարակել է 447 անուն գիրք՝ 4 միլիոն տպաքանակով:

Հայպետհրատի՝ հանրապետության ամենախոշոր հրատարակչության կազմում գործում են ութ մասնագիտացված խմբագրություններ՝ քաղաքական, գեղարվեստական, գիտա-մասսայական, գյուղատնտեսական, արտադրատեխնիկական, թարգմանական, մանկա-պատանեկան, երաժշտական գրականության:

Քաղաքական գրականության խմբագրությունն զբաղվում է մարքսիզմի դասականների երկերի, քաղաքատնտեսության, փիլիսոփայության ու պատմության վերաբերյալ աշխատությունների հրատարակման գործով:

Հայպետհրատի տպագրած հազարավոր գրքերի մեջ կարևոր տեղ ունեն Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի երկերի հրատարակությունները: Անցած քառասուներեք տարիների ընթացքում հայերեն են թարգմանվել ու հրատարակվել մարքսիզմի դասականների գրեթե բոլոր հիմնական աշխատությունները, որոնցից շատերն ունեցել են բազմաթիվ վերահրատարակություններ: Այսպես, Կ. Մարքսի «Կապիտալը» հրատարակվել է երկու անգամ, Մարքսի ու Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»՝ ութ անգամ, «Գոթայի ծրագրի քննադատությունը»՝ հինգ անգամ, Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»՝ հինգ անգամ, «Անտի-Դյուրինգը» և «Սոցիալիզմի զարգացումը՝ ուտոպիայից գիտություն»՝ չորս անգամ և այլն:

Հայպետհրատը հայերեն լեզվով լույս է ընծայում Վ. Ի. Լենինի երկերի լիակատար ժողովածուն՝ 45 հատորով: 39-րդ հատորը լույս տեսավ վերջերս: Սովետական իշխանության տարիներին մարքսիզմի դասականների երկերից հայերեն լեզվով լույս տեսած գրքերի ու գրքույկների քանակը հասնում է 355-ի, իսկ դրանց ընդհանուր տպաքանակը՝ շուրջ 2,5 միլիոն օրինակի: Այս թվերը պերճախոս կերպով վկայում են մարքսիստական գրականության նկատմամբ ընթերցող զանգվածների մեծ հետաքրքրության մասին:

Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչության հետ միասին, Հայպետհրատը նշանակալից ավանդ ունի հայագիտության տարբեր ճյուղերի վերաբերյալ գրականության հրատարակման գործում: Մ. Աբեղյանի խմբագրությամբ լույս տեսած «Սասնա ծռերը», Ստ. Մալխասյանի բառահատոր «Հայերեն բացատրական բառարանը», Հր. Աճառյանի «Հայոց լեզվի պատմությունը», Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» աշխատության հատորները, Դուրնովոյի կազմած «Հին հայկական մանրանկարչությունը» և այլ արժեքավոր հրատարակություններ իսկական իրադարձություն էին հայագիտության պատմության մեջ:

Պետհրատին է պատկանում նաև հայ պատմիչների աշխատությունների աշխարհաբար հրատարակման նախաձեռնությունը:

Գեղարվեստական գրականության խմբագրությունը, որը հրատարակչության ամենամեծ խմբագրությունն է, ամեն տարի հրատարակության է պատրաստում հայ, ռուս և համաշխարհային գրականության ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից գրողների ստեղծագործությունները առանձին գրքերով ու ժողովածուներով:

Մեծ տպաքանակներով տպագրվել են հայ դասականների՝ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Ծերենցի, Գ. Սունդուկյանի, Մուրացանի, Հ. Պարոնյանի, Պ. Դուրյանի, Շիրվանզադեի, Հովհ. Թումանյանի, Ավ. Իսահակյանի, Եր. Օտյանի, Գ. Զոհրապի, Դ. Վարուժանի, Սիամանթոյի, Մեծարենցի և ուրիշների երկերը:

Հայ դասական գրողների հարուստ գրական ժառանգությունը միայն սովետական իշխանության ժամանակ դարձավ ժողովրդի ամենալայն շրջանների իսկական սեփականությունը: Այսպես, սովետական իշխանության 43 տարիների ընթացքում Հովհ. Թումանյանի ստեղծագործությունները հրատարակվել են 118 անգամ՝ մեկ միլիոն 302 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով, Դ. Դեմիրճյանի երկերը՝ 74 անգամ, Շիրվանզադեինը՝ 61, Խ. Աբովյանինը՝ 40, Րաֆֆունը՝ 34, Իսահակյանինը՝ 33, Պարոնյանինը՝ 26 անգամ և այլն:

Այդ մեծածավալ գործին զուգընթաց՝ Հայպետհրատը պարբերաբար հրատարակել է սովետահայ տաղանդավոր գրողներ Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Գ. Մահարու, Ստ. Զորյանի, Ն. Զարյանի, Հովհ. Շիրազի, Ս. Կապուտիկյանի, Հր. Քոչարի, Գ. Էմինի, Պ. Սևակի, Ս. Խանզադյանի և մյուսների ստեղծագործությունները:

Սփյուռքահայ գրականության աչքի ընկնող ստեղծագործությունները սովետահայ ընթերցողների սեփականությունը դարձնելու նպատակով Հայպետհրատը հետպատերազմյան տարիներից սկսած լույս է ընծայում սփյուռքահայ առաջադեմ գրողների ստեղծագործությունները: Սովետահայ ընթերցողները այդ հրատարակությունների շնորհիվ այսօր արդեն ծանոթ են Կ. Սիտալի, Վահե Հայկի, Բ. Նուրիկյանի, Ա. Անդրեասյանի, Հ. Գույումճյանի, Վահե-Վահյանի, Ա. Ծառուկյանի, Արմեն Դարյանի, Շահան Շահնուրի, Մ. Մանուշյանի, Լուիզա Ասլանյանի (Լաս), Լևոն Մեսրոպի, Դեի, Կոստան Զարյանի լավագույն ստեղծագործություններին: Առաջիկայում նախատեսված է հրատարակել նաև Վ. Շուշանյանի, Գ. Աթմաճյանի, Զ. Գալեմքյարյանի և սփյուռքահայ առաջադեմ այլ գրողների երկերը:

Սովետական կարգերի օրոք, հայ իրականության մեջ առաջին անգամ մայրենի լեզվով գրքեր են հրատարակվում գիտության բոլոր բնագավառների, ինչպես հումանիտար, այնպես էլ ճշգրիտ ու կիրառական գիտությունների գծով:

Մայրենի լեզվով հրատարակվող գիտա-տեխնիկական, արտադրական, մասնագիտական գրքերը, զանազան բնույթի տեղեկագրերը, բառարանները, ինչպես և մասնագիտական ձեռնարկներն ու հանրամատչելի գրքույկներն օգնում են արդյունաբերության մեջ աշխատող բանվորներին, տեխնիկներին, ինժեներներին, գյուղատնտեսության և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում աշխատող մասնագետներին՝ գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումներին ծանոթանալու, առաջավոր փորձի փոխանակման, մասնագիտական գիտելիքների խորացման գործում: Չկա մի բնագավառ, որի վերաբերյալ մասսայական գրականություն հրատարակված չլինի: Բաժինը բազմաթիվ գիտահանրամատչելի գրքեր ու գրքույկներ է հրատարակել բնագիտության, առողջապահության, ֆիզկուլտուրայի ու սպորտի, գյուղատնտեսության ու տեխնիկայի, գիտության զանազան հարցերի վերաբերյալ և այլն:

Շնորհիվ տարեցտարի ավելի մեծ ծավալ ստացող թարգմանական հրատարակությունների, որն իրականացնում է թարգմանական գրականության խմբագրությունը, հայ ժողովրդի սեփականությունն են դարձել ռուս դասական գրողների՝ Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Տոլստոյի, Տուրգենևի, Չեխովի, Գորկու և ուրիշների հիասքանչ ստեղծագործությունները:

Ռուս սովետական տաղանդավոր գրողների՝ Շոլոխովի, Մայակովսկու, Ա. Տոլստոյի, Ֆադեևի, Էրենբուրգի, Իսակովսկու, Սիմոնովի, Լեոնովի, Տվարդովսկու, Ն. Օստրովսկու և շատ ուրիշների լավագույն ստեղծագործությունների հետ միասին սովետահայ ընթերցողները մայրենի լեզվով կարդում են նաև Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդների գրականության նշանավոր դեմքերի՝ Շևչենկոյի, Տիչինայի, Ծերեթելու, Գրիշաշվիլու, Սամեդ Վուրղունի, Ռասուլ Ռզայի, Յանկա Կուպալայի, Յակուբ Կոլասի, Յան Ռայնիսի, Վ. Լացիսի, Ջամբուլի, Աուեզովի և շատ ուրիշների լավագույն երկերը:

Բելոռուսիայի գրողների միության նախագահ Պետրուս Բրովկան Հայպետհրատի աշխատողների անունով գրած նամակում ասում է.

«Հաճելի է գիտակցել, որ հայ ընթերցողը մայրենի լեզվով կծանոթանա բելոռուսական արձակագիրների և բանաստեղծների բազմաթիվ ստեղծագործություններին: «Բելոռուսական գրականության անթոլոգիայի» հրատարակումը Հայաստանում մի վառ վկայություն է մեր ժողովուրդների եղբայրական բարեկամության»:

Հայպետհրատը ծրագրել է առաջիկա տարիներին հրատարակել ադրբեջանական, ուկրաինական, աբխազական և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների գրականության անթոլոգիաները:

digitised by A.R.A.R.@

Հայ ընթերցողի գրադարանը տարբեցտարի հարստանում է նաև աշխարհի մյուս ժողովուրդների գրականության նշանավոր երկերով։ Վաղուց արդեն հայ ժողովրդի համար հոգեհարազատ ստեղծագործություններ են դարձել համաշխարհային գրականության այնպիսի գլուխգործոցներ, ինչպիսիք են Հոմերոսի «Իլիականն» ու «Ոդիսականը», Դանթեի «Աստվածային կատակերգությունը», Սերվանտեսի «Դոն Կիխոտը», Սվիֆտի «Գուլիվերի ճանապարհորդությունները», Բոկաչիոյի «Դեկամերոնը», հանճարեղ Շեքսպիրի բոլոր նշանավոր բատերգությունները, Բալզակի, Հյուգոյի, Դյումայի, Մոպասանի, Գյոթեի, Շիլլերի, Հայնեի, Ֆլոբերի, Ստենդալի, Դիկենսի և համաշխարհային գրականության այլ տիտանների անմահ ստեղծագործությունները։

Քարգմանական գրականության խմբագրությունը զգալի թվով երկեր է թարգմանել ու հրատարակության պատրաստել նաև սոցիալիստական երկրների դասական և ժամանակակից գրողների ստեղծագործություններից։

Հայպետհրատը նշանակալից աշխատանք է կատարել հայ գրականության լավագույն երկերը ռուսերեն լեզվով թարգմանելու ուղղությամբ։ Այսօր հպարտությամբ կարող ենք ասել, որ ռուս ընթերցողը մայրենի լեզվով ծանոթ է ոչ միայն հայ դասական գրողներից շատերի, այլև գրեթե բոլոր սովետահայ գրողների լավագույն գործերին։

Մանուկ և պատանի ընթերցողների հոգում գեղեցկի սեր և ճաշակ զարգացնելու, ինչպես և նրանց գեղագիտական պահանջները բավարարելու նպատակով ամեն տարի մանկա-պատանեկան գրականության խմբագրությունը հրատարակում է 100—150 անուն գիրք ու գրքույկներ։ Ինքնուրույն և թարգմանական գրքեր են լույս ընծայվում դպրոցական և նախադպրոցական հասակի երեխաների համար, ընդ որում գերակշռողը գեղարվեստական գրականությունն է։

Երաժշտական գրականության խմբագրությունը հանրապետության միակ հաստատությունն է, որը բգրաղվում է երաժշտական գրականության հրատարակման գործով։ Տրպագրվում են ինչպես նոտաներ, այնպես էլ ուսումնամանկավարժական ու երաժշտական գրականություն՝ տարեկան 170-ից 200 մամուլ ընդհանուր ծավալով։ Նոտային գրականության հրատարակման կուլտուրան մեզ մոտ սովետական շրջանի ծնունդ է։

Հայպետհրատը բազմամյա հրատարակչությունից բացի նաև բազմալեզու հրատարակչություն է։ Հայերենից և ռուսերենից բացի, նա գրքեր է տպագրում քրդերեն, ադրբիջաներեն և եվրոպական լեզուներով։

Դարերի համփռ անցած «երկաթյա» գիր գրքերը մեր այսօր Սովետական Հայաստանում լույս տեսնող գունավոր ժապաքանակների շնորհիվ դարձել են սովետահայ և սփյուռքահայ ընթերցողների կյանքի անբաժան ուղեկիցն ու լավագույն բարեկամը։





Ուզունլար գյուղի գիշերօթիկ դպրոցում։ Նկարներում՝ 1. Ընկերուհիները ննջասենյակի պատշգամբի շեմին։ 2. Ֆիզիկայի դաս։

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Գեղեցիկ դիրք ունի Ուզունլարը՝ Ալավերդու չրջանի այդ ամենախոշոր գյուղը։ Թառել է նա Լոռվա անդնդախոր ձորի բարձրավանդակի վրա և ինչպես աերիծ գեղեցկուհի տարածում է արևի տակ։ Ձորի պռնկից է սկսվում գյուղը, կամաց-կամաց բարձրանում սիզավետ լանջերն ի վեր ու փակվում ալիք-ալիք լեռնալուրներով։ Աննման կա այդ լեռների լանջերին ու նրանցից ներքև՝ գյուղի և անտառի միջև վարդագույն խայտերով ընկրկած են գիշերօթիկ դպրոցի համակառույցները՝ համատարած կանաչի մեջ։ Վաղ առավոտից մինչև մրնշող այստեղ ճնշում են մանկական ուրախ ձայներ և զնգուն ծիծաղ։

Նոր է ուսումնական այդ հաստատությունը, երկու տարին դեռ չի էլ բոլորել, բայց նրա առօրյայի, երեխաների կյանքի և ուսման մասին պատմելու շատ բան կա։

Գիշերօթիկը տեղավորված է երկու հիմնական գեղեցկատես շենքում։ Առաջինը ուսումնական մասնաշենքն է։ Այն երկհարկանի է, ունի լավ հարմարություններ, բնդարձակ միջանցքներ, նախասրահներ։

Երեխաների տրամադրության տակ են դրված լուսավոր ու բնդարձակ տասը դասասենյակ, ֆիզիկայի, բուսաբանության և այլ լաբորատորիաներ ու կաբինետներ, ինքնագործունեության, կինոնկարների ցուցադրման և հանգստի կազմակերպման դահլիճ, պիոներական սենյակ։

Դպրոցում սովորում են Ալավերդու Ստեփանավանի, Նոյեմբերյանի, Կաիլինոյի տարբեր գյուղերից եկած շուրջ 350 տղաներ ու աղջիկներ, որոնք այստեղ ստանում են կրթություն, սնունդ, հագուստ և այդ բոլորը անվճար, պետության հաշվին։

Երեխաների ուսման և դաստիարակության գործը վարում են հմուտ մանկավարժներ, որոնց մեծ մասը ունեն բարձրագույն կրթություն և երեխաների հետ աշխատելու հարուստ փորձ։

Հանրային գիտելիքներից բացի, դպրոցի սաները տիրապետում են տարբեր տեսակի մասնագիտությունների։ Դասերից հետո միշտ աշխույժ եռուզեռ է դպրոցի մետաղամշակման, փայտամշակման արհեստանոցներում, տեխնիկական ինքնագործունեության խմբակների սենյակներում։ Երեխաները հմուտ վարպետների օգնությամբ տիրապետում են տարբեր մասնագիտությունների և միաժամանակ կատարում հանրօգուտ աշխատանք։ Նշանավոր վերանորոգում են դպրոցական գույքը, ուսումնական պարագաները, պատրաստում տարբեր տեսակի գործիքներ։

Գարնան, ամռան և աշնան ամիսներին երեխաները հետաքրքիր փորձեր ու աշխատանքներ են կատարում դպրոցի ուսումնա-փորձնական հողամասում, որը զբաղեցնում է ավելի քան երեք հեկտար տարածություն։ Դպրոցականները ցանում, մշակում են գյուղատնտեսական տարբեր մշակույթներ, խնամում են 22 մեղվաբուծանիքներ և այդ բոլորից ստացված մթերքները նրանց համար դառնում են հավելյալ սնունդ և եկամուտ։

Ուսումնական մասնաշենքից փոքր-ինչ հեռու ուշադրություն է գրավում վարդագույն տուֆից պատրաստված մի ցածրահարկ շենք, դա մարզադահլիճն է։ Մտնում ես մուտքից ներս ու անմիջապես հիանում։ Դրժվարանում ես նույնիսկ հավատալ, որ գյուղում կարող է լինել մարզական գործիքներով ու հարմարանքներով հարուստ այդպիսի մի շքեղ սրահ։ Դահլիճն ունի բասկետբոլի, վոլեյբոլի դաշտեր, լողավազան, մարմնամարզության և այլ բաժիններ։ Դպրոցի սաները մանկավարժ-մարզիկի ղեկավարությամբ այստեղ եռփում են իրենց մարմինը, դառնում կարգային սպորտսմեններ։

Հարմարավետ ու գեղեցիկ է դրպրոցի ննջարանային մասնաշենքը։ Այն երեք հարկանի է, արևահայաց։ Առաջին հարկում տեղավորված են հանդերձասրահները, լողարանները և ճաշարանը։ Երկրորդ և երրորդ հարկերում ննջասենյակներն են՝ հարուստ կահավորանքով և օժանդակ լավ հարմարություններով։ Որ սենյակն էլ

digitised by A.R.A.R.@



մտնես՝ զգացվում է բնակիչների մաքրասիրությունը, հոգատարությունն ու խնամքը։ Երեխաները իրենք են մաքրում և հարդարում իրենց սենյակները։ Եվ դա հենց փոքր հասակից նրանց մեջ դաստիարակում է ճաշակ և անհրաժեշտ հոգածություն դեպի իրենց կենցաղը։

Երբ իջնում է երեկոն և մերձակա լեռները կորչում են գորշավուն խավարի մեջ, դպրոցում սկսվում են հանգստի ու ինքնագործունեության ժամերը։ Ամեն մի երեխա հնարավորություն է ունենում զբաղվելու իրեն սրտին մոտ ու հետաքրքրությունները բավարարող զբաղմունքով։ Մի տեղ երեխաները սովորում են նոր երգեր ու պարեր, մի ուրիշ տեղ պատրաստում տարբեր տեսակի մոդելներ, սովորում նկարել։ Գրեթե ամեն օր դպրոցի դահլիճում ցուցադրվում են կինոնկարներ, կազմակերպվում են ինքնագործունեության համերգներ, զրույցներ, հանդիպումներ անվանի մարդկանց հետ։

Եվ այսպես հետաքրքիր ու բովանդակալից է անցնում երեխաների առօրյան։ Գյուղական գիշերօթիկ դպրոցը այդ երեխաների համար դարձել է հարազատ ու սիրելի բնօրրան, որտեղ բոլորին միավորում է նույն նվիրական սկզբունքը՝ բոլորը մեկի համար, մեկը՝ բոլորի։

Գ. ՇԱՀԻՆՅԱՆ

Գիշերօթիկ դպրոցի ընթերցասենյակում։

Լուսանկարները՝ Լ. Մայիլյանի



ՀԱՅ ԲՆԱԽՈՍՆԵՐԸ

Ս. ՀԱԿՈԲՅԱՆ
Պրոֆեսոր, Երևանի պետական համալսարանի բնախոսության ամբիոնի վարիչ

Ժամանակակից խոշորագույն բնախոսներից (ֆիզիոլոգներից) մեկը՝ ակադեմիկոս Կ. Բիկովը, իր բնախոսության (ֆիզիոլոգիայի) դասագրքի հայերեն թարգմանության նախաբանում գրել է. «Հայաստանի գիտնականները բնախոսության զարգացման ասպարեզում շատ բան են արել, սակայն անցյալում նրանց աշխատանքը կարող էր ընթանալ միայն հարազատ ժողովրդից կտրված։

Կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությունը հնարավոր դարձրեց եղբայրական Հայաստանում բժշկական և գիտական կյանքի զարգացումը, և մենք ականատես ենք գիտության և առողջապահության փայլուն ծաղկմանն ու զարգացմանը Հայաստանում»։

Բնախոսության պատմությունը Հայաստանում սկսում է հին դարերից։ Դեռ 11-րդ դարում Անիի համալսարանի հիմնադիր Հովհաննես Իմաստասերը հանճարեղ Բեկոնից շատ առաջ, քարոզել է փորձական մեթոդը, գտնելով, որ փորձը միակ ճշմարիտն է, բոլոր գիտելիքների հիմքը։

12-րդ դարի հայ բժշկագիտության խոշորագույն ներկայացուցիչ Մխիթար Հերացին՝ աշխարհում առաջինը գրել է, որ բժշկության բնագավառում տեսական առարկաների և գործնական բժշկության միջև պետք է գոյություն ունենա անխզելի, սերտ կապ։ Հերացին շատ գրքեր է գրել, որոնցից գլուխ գործոցը՝ «Ջերմանց մխիթարություն»-ն է։ Այս անմահ գիրքը, որպես տպագիր աշխատություն առաջին անգամ լույս է տեսել 1832 թվականին Վենետիկում, Մխիթարյանների կողմից, իսկ այնուհետև թարգմանվել և լույս է տեսել աշխարհի տարբեր լեզուներով։

Հայ խոշորագույն բնագետ Հովհաննես Երզնկացու (1250—1326) վկայությամբ, իր ժամանակ, ուսումնական և գիտական նպատակներով Հայաստանում թույլատրվել է հերձումներ կատարել մահվան դատապարտված հանցագործների վրա, ինչպես նաև գիտահերձել մահացածներին, մինչդեռ Եվրոպայում այդ մեթոդը սկսել է կիրառվել միայն 16-րդ դարում։

Հովհաննես Երզնկացին իր բազմաթիվ աշխատություններում շատ առաջադիմական մտքեր է արտահայտել մարդու բնախոսության և կենսաբանության այլ բնագավառների վերաբերյալ, որոնք ունեցել են գիտական խոշոր արժեք։ Նա արյան շրջանառության, մկանների և այլ օրգան-համակարգերի գործունեության կարգավորման ուղղությամբ խոշոր դեր է վերագրել ներվային համակարգությանը (գլխուղեղ, ողնուղեղ, ծայրամասային ներվեր)։

15-րդ դարում մարդու կազմախոսության և բնախոսության վերաբերյալ մի շարք աշխատություններ են գրել Տաթևի համալսարանի փիլիսոփայության և բնական գիտությունների դասախոս Օհան Որոտնեցին և նրան հաջորդող Գրիգոր Տաթևացին։

Միջնադարի նշանավոր բժիշկ Գրիգորիսը պարզ մտքեր է արտահայտել նյարդերի կազմախոսության և բնախոսության վերաբերյալ։ Նա ուսումնասիրել է գլխուղեղի ու ողնուղեղի փոխադարձ կապը, նկարագրել է ողնուղեղից դուրս եկող ներվարմատները ու դրանց գործունեությունը։ Գերազանցելով հանճարեղ Հալենին և Լեոնարդո դա Վինչիին, հայ բժիշկներն ավելի ճիշտ տեղեկություններ են տվել սրտի մկանային կառուցվածքի մասին։

Միջնադարի ամենախոշոր հայ բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացին (1414—1496) իր «Ուսումն բժշկության», «Օգուտ բժշկության», «Ախրապատին», «Անգիտաց անպետ» և այլ աշխատություններում մեծ տեղ է հատկացրել սաղմնաբանության, կազմախոսության, բնախոսության, դեղաբանության և բժշկական գիտության այլ բնագավառների կարևորագույն հարցերի ուսումնասիրությանը։

Ամիրդովլաթի նշանակությունը հայ ժողովրդի և աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների համար անգնահատելի է։ Նա, բացի թվարկած ուսումնասիրություններից, մեծ աշխատանք է կատարել տարբեր դեղամիջոցների ստեղծման գործում։ Պահել ու գալիք սերունդներին է հաղորդել հին հայկական դեղերի, դեղաբույսերի, բույսերի և կենդանիների անունները։

Ու այսպես բնախոսության զարգացման գործում կարևորագույն ներդրում են ունեցել միջնադարյան հայ բժշկագիտությունն ու կենսաբանությունը։

Սակայն բնախոսության զարգացումը ամբողջ աշխարհում, ինչպես և Ռուսաստանում նոր թափ է ստացել միայն 19-րդ դարի երկրորդ կեսում։ Ռուսական բնախոսության հայրը հանդիսացել է Մ. Սեչենովը, որն իր «Գլխուղեղի ռեֆլեքսները» աշխատության մեջ հանդուգն քայլ է արել մատերիալիստորեն բացատրելու մարդու հոգեկան գործողությունները։ Նրա ավանդների լավագույն ժառանգորդներ են եղել համայն աշխարհի ավագագույն բնախոս, Նոբելյան մրցանակակիր Ի. Պավլովը և ապա բնախոսական մտքի հանճարներ՝ Վվեդենսկին ու Ուխտոմսկին։

Աշխարհի բոլոր անկյուններից խոշոր գիտնականներն այցելում էին Պավլովի լաբորատորիան՝ տեսնելու նրա հիանալի փորձերը՝ սովորելու նրանից։ Դեպի Պավլովն էին ձգտում նաև հայ ժողովրդի զավակները։ Նրա մոտ սովորել և հետագայում գիտնականի համաշխարհային համբավ են ստացել բազմաթիվ հայ երիտասարդներ։ Պավլովի առաջին հայ աշակերտներից, իսկ հետագայում բնախոսության ականավոր ներկայացուցիչներից է Վարդան Վարդանյանը։ Նա աշխատանքի է անցել մեծ գիտնականի մոտ Թիֆլիսի գիմնազիան ավարտելուց հետո։ Վարդանյանը ամենախոշոր բնախոսներից մեկն էր Ռուսաստանում։ Նա Պետերբուրգում կազմակերպել է մի շարք բնախոսական լաբորատորիաներ և դասավանդել բազմաթիվ ուսումնական հաստատություններում՝ Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտում, հոգե-ներվոլոգիական ինստիտուտում, մանկավարժական ակադեմիայում և այլուր։ Նա կարևոր հայտնագործություններ է կատարել սիրտ-անոթային համակարգության նյարդային կարգավորման, ինչպես նաև օրգանիզմի ջերմականոնավորման, շնչառության և մաշկի բիոէլեկտրական երևույթների ուսումնասիրության ասպարեզում։

Վարդանյանը հանդիսացել է Սեչենովի անվան «Ռուսական բնախոսական ընկերության» նախաձեռնողը և կազմակերպողը, «Ռուսական բնախո-

digitised by A.R.A.R.@

ական հանդեսի»-ի հիմնադիրը։ Այս ընկերությունը և հանդեսը մեծ դեր են խաղացել ռուսական բնախոսական մտքի զարգացման գործում։ Ահա թե ինչու բնախոսների ապագա սերունդները երախտագիտությամբ են հիշում Վարդանյանի ծառայությունները։

«Լինելով հայ, Վարդանյանը հոխտասարդ հասակից զգոն կերպով հետևում էր հայկական հարցերի ընթացքին, մշտական և գործուն մասնակցություն էր ցուցաբերում հայկական քաղաքական, հասարակական բարեգործական և լուսավորական կազմակերպություններում... Վարդանյանը ամենալավ կերպով մարմնացնում էր իր մեջ դեռ Պետրոս Մեծի ժամանակից զարգացած և ամրացած հայերի և ռուսների միջև եղած ներքին կապը, և դժվար է ասել, թե ո՞րն էր այդ երկու ազգից նրա համար ավելի թանկը, ո՞ւմ էր նա ավելի հավատում, ո՞ւմ օգտին էր ծախսում ավելի ուժ և աշխատանք և մյուս կողմից, որ ազգի միջավայրում էր նա ավելի շատ սեր և հարգանք վայելում» (Լ. Օրբելի)։

Հայկական պարբերական մամուլը չերմորեն է արձագանքել Վարդանյանի գիտական-մանկավարժական գործունեության 35-ամյա հոբելյանին։ 1911 թվականին «Մարտ» թերթը այդ առիթով գրել է. «Հեռու ամեն տեսակ աղմուկներից, հեռու անախտությունից և բարձր դիրք ձեռք բերելու ձգտումից 35 երկար տարիներ նվիրված բժշկական գիտությանը, նվիրված նաև հայ հասարակական գործին, այսօր նա կանգնած է ամենքի դիմաց դափնին ճակատին։ Ահա մի մարդ, որ միշտ ինքը խուսափում էր փառքից, որ իր խորին համեստությամբ միայն գիտեր գործել և գործել ընդհանուրի համար, բայց որին հետևեց փառքը և հասավ նրան»։

Ի. Պավլովի աշակերտներից էր նաև մեր դարաշրջանի աշխարհահռչակ բնագետ Լեվոն Օրբելին, որը ծնվել է Թաղկածորում։ 1884 թվականին ավարտելով Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիան նա իր ազգակից Վարդանյանի երաշխավորությամբ աշխատանքի է անցել Պավլովի մոտ։ Իր անխոնջ, անձնվեր աշխատանքի շնորհիվ հետագայում նա դարձել է այդ նույն ակադեմիայի պրոֆեսոր, իսկ 1943 թվականից մինչև 1950 թվականը՝ ակադեմիայի պետ։ Պավլովի մահից հետո Օրբելին Սովետական Միության ամենախոշոր բնախոսն էր։ Նա գլխավորում էր Պավլովի անվրդող ժառանգությունը, իսկ 1942 թվականից մինչև 1946 թվականը եղել է Սովետական Միության Գիտություններ ակադեմիայի փոխնախագահ։ Լ. Օրբելու խոշոր հայտնագործությունները բարձրագույն նյարդային գործունեության, ուղեղիկի բնախոսության, սիմպատիկ ներվային համակարգության և զգայարանների ուսումնասիրության բնագավառում ճանաչված են համաշխարհային գիտության կողմից։ Նա էվոլյուցիոն բնախոսության հիմնադիրն է, տեսական բնախոսության ամենաակնառու ներկայացուցիչը՝ աշխարհում։ Նա միաժամանակ փորձառական բնախոսության փայլուն վարպետն էր։ Բացի բնախոսական տեսության զարգացմանը հետապնդող փորձառական աշխատանքից, նա մեծ հաջողություններ է ձեռք բերել բնախոսության նվաճումները գործնականում կիրառելու և մեր երկրի պաշտպանությունն ամրացնելու ասպարեզում, որի համար արժանացել է բժշկական ծառայությունների գեներալ-գնդապետի կոչման։



ԼԵՎՈՆ ՕՐԲԵԼԻ



ՀԱՋԱՏՈՒՐ ԿՈՉՏՈՅԱՆՑ

Իր խոշոր ծառայությունների համար Լ. Օրբելին արժանացել է մի շարք ոսկե մեդալների և պետական լաուրեատի կոչման։ Նա աշխարհի շատ երկրների գիտությունների ակադեմիաների անդամ էր, գիտության վաստակավոր գործիչ, Սոցիալիստական աշխատանքի հերոս։

Երբ 1921 թվականին հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, ստեղծվեց նաև բնախոսության ամբիոնը։ Նրա առաջին դեկավարը նորաստեղծ համալսարանի ռեկտոր, Պավլովի ու Վվեդենսկու աշակերտ, տաղանդավոր կազմակերպիչ, բնախոս ու փիլիսոփա Տիգրան Մուշեղյանն էր։ Վերջինիս ջանքերի շնորհիվ էլ Հայաստանում հիմք դրվեց բնախոսական կադրերի պատրաստմանը։ Բազմաթիվ խոստումնալից երիտասարդներ գործուղվեցին Մոսկվա—Լենինգրադ՝ Պավլովի և Օրբելու մոտ կատարելագործվելու։ Նրանցից մի քանիսը հետագայում դարձան համաշխարհային դեմքեր, ինչպես ակադեմիկոս Եզրաս Հասրաթյանը, որն այժմ գլխավորում է Սովետական Միության ամենախոշոր բնախոսական ինստիտուտներից մեկը։ Երբ Եզրասը դեռ սկսնակ գիտնական էր, Պավլովը նրա մասին գրել է. «Պարտք եմ համարում հանձնարարել նրան՝ որպես մի ակնառու սկսնակ գիտական աշխատակից, որը օժտված է նախաձեռնության ոգով ու մտքի հստակությամբ։ Գիտական հետազոտությունը կատարում է կլորը հստակությամբ, բծախնդիր բարեխղճությամբ և ճշգրտությամբ հանդերձ...»։

Հասրաթյանը խոշոր հայտնագործություններ է արել կենտրոնական նյարդային համակարգության ուսումնասիրության բնագավառում, որոնք բժշկության համար ոչ միայն տեսական այլև գործնական մեծ նշանակություն ունեն։

Համաշխարհային հռչակ վայելող գիտնական էր նաև Մոսկվայի համա-

★ ★

Վերջերս Երևանում գումարվեց Ի. Պ. Պավլովի անվան բնախոսների համամիութենական բնկերության 10-րդ համագումարը։ Սովետական բնախոսների գիտաժողովի յոթ օր տևած աշխատանքի ընթացքում լսվեցին և քննարկվեցին 500-ից ավելի զեկուցում և գիտական հաղորդում նվիրված բնախոսության հրատապ խնդիրներին։ Համագումարին մասնակցելու համար Երևան էին ժամանել սովետական հազարից ավելի գիտնականներ։ Նկարում մի խումբ ականավոր բնախոսներ (ձախից աջ) Ս. Սեվերինը, Ե. Հասրաթյանը (Մոսկվա), Ա. Կարաևը (Բաքու), Գ. Աճոխինը (Մոսկվա), Ս. Հակոբյանը (Երևան), Ս. Նարիկաշվիլին (Թբիլիսի) զրուցում են համագումարի նիստերից մեկի ընդմիջման։

★ ★ ★



digitised by A.R.A.R.@



Երևանի բժշկական ինստիտուտի լաբորատորիայում: (Ձախից աջ) ինստիտուտի բնախոսության ամբիոնի վարիչ Գր. Մուշեղյանը, կենսաբանական գիտությունների թեկնածու Տ. Ստեփանյանը, բժշկական գիտությունների դոկտոր Վ. Գրիգորյանը և դոցենտ Է. Անդրեասյանը փորձի պահին:

Լուսանկարները՝ Պ. Պետրոսյանի

լսարանի բնախոսության ամբիոնի վարիչ, այժմ հանգուցյալ, ակադեմիկոս Խաչատուր Կոշտոյանցը։ Նա հեղինակ է բազմաթիվ մենագրությունների։ Նրա «Համեմատական բնախոսության հիմունքները» եռահատոր մեծածավալ աշխատությունը միակն է աշխարհում և լավ ճանաչում է գտել գիտության կողմից։

Մարդու ուղեղի բնախոսության և կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում համաշխարհային հռչակ է վաստակել Մոսկվայի ուղեղի ինստիտուտի դիրեկտոր, ակադեմիկոս Սիմոն Սարգսյանը։ Նրա՝ «Ուղեղի ատլաս» անդանի անփոխարինելի գիրք է դարձել համայն աշխարհի բժիշկների և գիտության աշխատողների համար։

Գիտության բնագավառում անփոխարինելի ծառայություններ է մատուցել Սովետական Միության կենտրոնական արյան փոխներարկման ինստիտուտի նախկին դիրեկտոր, Միության առաջին արյունաբան, հանգուցյալ ակադեմիկոս Անդրեյ Բաղդասարյանը։ Նրա աշխատանքների շնորհիվ այժմ գիտությունը կարողացել է պարզաբանել արյան և արյունաստեղծ օրգանների մի շարք խիստ տարածված հիվանդությունների ծագման պատճառներն ու բուժման միջոցները։

Այժմ Սովետական Միության գիտնականների շարքում պատվավոր տեղ է գրավում Պավլովի մերձավոր աշակերտ, պրոֆեսոր Երվանդ Հայրապետյանցը։ Նա Լենինգրադի պետհամալսարանի բարձրագույն ներվային գործունեության բնախոսության ամբիոնի վարիչն է։

Մեծ են նաև հանգուցյալ պրոֆեսոր Մուշեղ Դուրմիշյանի ծառայությունները համաշխարհային բնախոսության զարգացման բնագավառում։

Միության տարբեր քաղաքներում ապրում և աշխատում են ևս բազմաթիվ հայ խոշոր բնախոս գիտնականներ։ Նրանցից են պրոֆեսորներ Արտաշես Քարամյանը (Լենինգրադ) Հակոբ Մարկոսյանը, Նիկոլայ Ջավադյանը (Մոսկվա) և ուրիշ հանրահայտ բնախոսներ, որոնք անխոնջ կերպով աշխատում են հանուն հայրենական և համայն աշխարհի գիտության զարգացման։

Բնախոսական գիտությունը մեծ թափով զարգանում է նաև մեզ մոտ՝ Հայաստանում, նրա բազմաթիվ գիտահետազոտական հիմնարկներում ու բուհերում։

Լուրջ աշխատանքներ են կատարվում Հայաստանի Գիտությունների ակադեմիայի բնախոսության, բիոքիմիայի, նուրբ օրգանական քիմիայի ինստիտուտներում և պետական համալսարանի, բժշկական, անասնաբուժականանասնաբուծական ու այլ բուհերի բնախոսության ամբիոններում։ Հատկապես աչքի են ընկնում պրոֆեսորներ Հրաչյա Բունիաթյանի, Սահակ Կարապետյանի, Արմենակ Մնջոյանի, Հրանտ Դեմիրճօղլյանի, Լևոն Ղամբարյանի, Սիմոն Միրզոյանի, Հայկ Ստեփանյանի, Գրիգոր Մուշեղյանի, Սարգիս Սահակյանի, Մարգարիտ Գրիգորյանի և ուրիշների կողմից ղեկավարվող կոլեկտիվների արժեքավոր, համաշխարհային ճանաչում գտած հետազոտությունները։ Մեր Հանրապետությունում մեծ վերելք են ապրում բնախոսության համարյա բոլոր բնագավառները։ Պրոֆեսորներ Անդրանիկ Մեհրաբյանը, Իվան Գեորգյանը և շատ ուրիշներ լուրջ աշխատանք են կատարում բնախոսության նվաճումները մարդու շահերին ծառայեցնելու, կլինիկական բժշկությունը մերձեցնելու ուղղությամբ։

Հայ բնախոսներն աշխարհի բոլոր երկրներում, տարբեր համագումարներում պարբերաբար հանդես են գալիս զեկուցումներով և այսպիսով մեր գիտության նվաճումները, փառքը տանում երկրագնդի բոլոր ծայրամասերը։

ՈՂՋՈՒՅՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՌԱՊԱՆԾ 44-ԱՄՅԱԿԻՆ

Շնորհիվ Նոյեմբերյան հեղափոխության, քառասուն և չորս տարիներե ի վեր հայ պատմությունը դադրած է ողբ արձանագրելէ: Տնտեսական, մշակութային, ֆիզիքական և հոգեկան բոլոր ճակատներուն վրա տարված հաղթանակը կշեփորե ան, արդար հպարտությամբ, հիացում պարտադրելով բոլորին:

Նոյեմբեր 29-ը ոչ միայն մեր Հայրենիքին, այլ ամբողջ հայության վերածնունդի լուսապայծառ թվականը եղավ:

Նոյեմբերի 29-ին ազատության արևը ոչ միայն մեր Հայրենիքին վրա շողաց, այլ աշխարհի վրա ցրված բոլոր հայերու սրտերուն մեջ նույնի ջահը վառեց, հոգեխոցված վիճակեն ազատեց զանոնք, դիմանալու, տևելու մինչ ազդակը դարձավ:

Սփյուռքահայը երախտապարտ է Նոյեմբերյան հեղափոխության: Առանց այդ պատմական շարժումին, ի՞նչ պիտի ըլլար օտար ափերու վրա անավոր խուճապի մատնված, նահանջող, լքված հայությունը: Հուսալքված, անապատ դարձած հոգիներ միայն պիտի տեսնեինք մեր չուրջը:

Ինչպես քառասուն և չորս տարիներ առաջ, մեր պատանի հասակին, մեծ հրճվանքով և հպարտությամբ ողջունեցինք Նոյեմբեր 29-ը և վստահ եղանք անոր հաղթանակի տևականացումին, հայ ժողովրդի փրկության միակ լաստին, նույն խանդավառությամբ, մեր սրտերուն մեջ հարահուն ուրախությունը կծաղկի, տեսնելով մեր հայրենիքը իբրև հզոր դաշնակցային պետության մեկ սյունը, իր հերոսական մաքառումները, մտքի և բազուկի աշխատավորներուն ստեղծագործական հիգով, մեր գյուղերուն ու քաղաքներուն, դաշտերուն և լեռներուն նոր շունչով, ժպիտով կյանքի երթալը՝ լույսի, բարօրության, խաղաղության ճամփաներով:

Նոյեմբեր 29-ը Հայրենիքին տրված սահմաններու ապահովությունը: Այս իրողությունը ավելի ևս գնահատելի է մանավանդ անոր համար, որ բնաշխարհի տարբերե չրջապատված էր, սոսինք իրմե շատ ավելի զորավոր էին, ու մեր երկիրը անդադար ենթակա էր հարձակումներու: Մինչ Սովետական Հայաստանի ծնունդեն ի վեր ոչ ոք հարձակեցավ վրան, ավելի ճիշտը, ոչ ոք համարձակեցավ իրեն դպիլ, իր ոչ մեկ սահմանին վրա:

1920 նոյեմբեր 29-ի պատմական թվականը ոսկի տառերով արձանագրված է հայոց պատմության մեջ, անջնջելի կերպով:

Այդ թվականեն ի վեր ամեն տարի մեր հայրենիքի գյուղերուն ու քաղաքներուն մեջ հրապարակ կուգան հայուն Հայրենիքը վերականգնող և այսօրվան բարձրության հասցնող մտքի, գրչի, բազուկի տիտան մեր եղբայրները և քույրերը, հաղթական դրոշներ պարզելով:

Ողջո՜ւյն ձեզ, հերոս եղբայրներ, ողջույն ձեզ բոլորիդ:

Ողջո՜ւյն հայրենիք իմ սրբազնվեր, ողջո՜ւյն քո պայծառ արևին, հողին ու ջուրին և քո տաղանդավոր ժողովրդին:

Ողջույն քո հաստատուն իրավակարգին, որ տվեց իմ ժողովրդին կյանք, և լույս, և մի Հայրենիք:

Ողջույն ձեզ բոլորիդ, Հայրենիքի օդին ու ջուրին կարոտով մնացող զավակներեդ մեկուն կողմե:

ՍՈՒՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Էվրեսթոն. 1964, ԱՄՆ
Սեպտեմբեր 25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵԹԵՐԱՅՈՒՂԸ

Արարատյան դաշտը հիանալի բարիքներ է տալիս հողի աշխատավորին: Քաղցրահամ խաղողի, բազմատեսակ պտուղների հետ կոլտնտեսությունների ու պետական տնտեսությունների դաշտերում փարթամորեն աճում ու հասունանում է նաև խորդենին՝ եթերայուղատու այդ բույսը:

Այդ արժեքավոր մշակույթը առանձնապես լավ է աճում Հոկտեմբերյանի շրջանի Արմավիր գյուղում: Այստեղ խորդենու դաշտերը գրավում են ավելի քան 120 հեկտար տարածություն և ամեն տարի տալիս առատ բերք:

Երկու տարուց ավելի է խորդենու մշակությամբ են զբաղվում նույն շրջանի Նալբանդյան, Տանձուտ, Նոր Ամասիա գյուղերի կոլտնտեսությունները:

Այդ թանկարժեք բույսը տեղում մշակելու համար Հոկտեմբերյանում կառուցվել է հատուկ կոմբինատ, որտեղ ամեն տարի մշակվում է 36 հազար ցենտներ կանաչ խորդենի, որից ստացվում են տարբեր տեսակի հոտավետ օծանելիքներ:

digitised by A.R.A.R.@



Հոկտեմբերին մեզ մոտ հյուր էր բուրժահայ դաշնակահար Հերման Միսքրճյանը, որ Երևան էր ժամանել Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հրավերով: Նա Երևանում մի շարք ստեղծագործություններ կատարեց ամերիկահայ գրող Զարուհի Գալեմքյարյանի ծննդյան 90-ամյակին նվիրված հոբելյանական երեկոյին: Հոկտեմբերի 23-ին Հայֆիլհարմոնիայի համերգային Մեծ դահլիճում տեղի ունեցավ պոլսահայ դաշնակահարի համերգը, որտեղ նա հանդես եկավ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ: Համերգը անցավ մեծ հաջողությամբ: Արտիստին մատուցվեցին ծաղիկներ: Նկարում՝ Հերման Միսքճյանը կատարում է Գրիգի կոնցերտը:

Լուսանկար՝ Վ. Ամալյանի

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐԻՑ

կողմերը` Մորիս Թորեզի և Միսաք Մանուշյանի մեծադիր նկարներով, ինչպես նաև հուշատախտակ մը, որուն վրա արձանագրված էին զոհված հայ ռեզիստանտներու անունները: Իսկ այս ամենուն վրա կհսկեր Սասունցի Դավիթը, սլացիկ, սուրը պատրաստ, շանթահարելու համար հայրենիքի թշնամիները:

Հայկական տաղավարը ունեցավ մեծ հաջողություն: Հոն ցուցադրված էին մայր հայրենիքի արտադրությունները՝ ցուցափեղկի մը մեջ: Հայ ժրաջան տիկիններ և օրիորդներ չէին հասներ բավարարելու ֆրանսիացի հաճախորդները, որոնք կուզեին ճաշակել հայկական խորոված, հայկական կերակուրները, որոնք բազմապիսի էին ու հետաքրքրական իրենց համար:

Դաշտահանդեսի հսկայական, ծովածավալ բազմության մեջ Հայաստանը կներկայանար պատվավոր կերպով:

Հայ երիտասարդուհիներ և երիտասարդներ այս տարի լայնորեն բերած էին իրենց մասնակցությունը, և տարեցներու հետ տարին շատ գովելի աշխատանք, որը արդյունավետ եղավ թե՛ նյութական և թե՛ բարոյական տեսակետեն, ինչպես նաև եղավ մեծագույն առիթը, ժողովրդական զանգվածներուն ծանոթացնելու հայ ժողովուրդը և Հայաստանը:

ԱՐԱՔՍԻ ԱՆԴԻԿՅԱՆԻ ՓԱՅԼՈՒՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԵՆ

ԼՐԱԲԵՐ

Սեպտեմբերի 19, շաբաթ երեկոյան Լոս Անճելեսի մեջ ջերմ ընդունելություն սարքեցավ Հայաստան իրենց այցեն վերադարձած Գարեգին և Արաքսի Անդիկյաններուն:

Սիրելի ուսուցչուհի Արաքսի Անդիկյան ունեցավ շատ տպավորիչ ելույթ մը: Ան իր գոհունակությունը հայտնեց Հայաստանի մեջ իր արժանացած ընդունելության, տրված հյուրասիրության համար, պատկերավոր խոսքերով տվավ իր տպավորությունները մայր հայրենիքեն, խոսեցավ կրթական, մշակութային, շինարարական, արդյունաբերական, գյուղատնտեսական նակատներու վրա կատարված հսկայական աշխատանքներու և ձեռք բերված մեծ հաջողությանց մասին, և իր անկեղծ հիացմունքը հայտնեց վերածնված Հայաստանի նկատմամբ:

Տիկ. Արաքսիի ելույթը գնահատվեցավ ջերմագին ծափահարությամբ: Տրվեցան հարցումներ, որոնց պատասխանեց նա հաճելի կերպով:

Ունկնդիրների ցանկության ընդառաջելով, հարգելի ուսուցչուհիի տված կարևոր տեղեկությունները պիտի առնրվին ժապավենի վրա:

Բարի գալուստ մեր շնորհալի ուսուցչուհի Արաքսի Անդիկյանին, որն արդարև արժանի է ամեն գնահատանքի ու գովասանքի:

ԲՈՒԼՂԱՐ ԵՎ ՀԱՅ ԲԱՐԵԿԱՄՈՒԹՅԱՆ ՀՈՒԶԻՉ ՑՈՒՅՑ ՄԸ ՊԼՈՎԴԻՎԻ ՄԵՋ

ԵՐԵՎԱՆ

«Երևան»-ի Պլովդիվի մասնաճյուղի վարչությունը, ընդառաջելով նախկին աղրինապոլսեցիներու, ռոդոստոցիներու և մալգարացիներու փափաքին, հրավեր ուղղած էր Մալգարայի Փյուշմանճեոյի և այժմ Բուրգազի Սարաֆովո գյուղի բնակիչ հայասեր ընկ. Գ. Քաղաֆովին՝ դասախոսություն մը ընել Պլովդիվի մեջ Թրակիո անցյալին շուրջ:

Ընկ. Քաղաֆով իր 4 վետերան ընկերներուն հետ Փաղաքս ժամանեց, կայարանին մեջ ընդունվելով «Երևան»-ի վարչական անդամներու և բազմաթիվ Փաղաքացիներու կողմե:

Սեպտեմբեր 20-ին Հայ մշակույթի տան մեջ տեղի ունեցավ բուլղար և հայ ժողովուրդներու անխախտ բարեկամության նվիրված հանդիսություն մը:

Բացումը ըրին պետական երաժշտական դպրոցի դասատու ընկ. Կ. Բալըքայանի աշակերտները՝ ջութակով, սրինգով, դաշնակով, թավջութակով, ակորդեոնով և երգերով: Նախագահության սեղանին շուրջ էին հյուրերը, «Երևան»-ի վարչության անդամները, Թրակիացիներու միության ներկայացուցիչները, մշակույթի և հասարակական գործիչներ:

Հանդիսության նախագահող ընկ. Ս. Գաբրիելյան գեղեցիկ խոսքերով վեր առավ բուլղար և հայ ժողովուրդներու բարեկամության նշանակությունը ու բեմ հրավիրեց ընկ. Գ. Քաղաֆովը՝ զեկուցանելու «Հայ և բուլղար հարաբերությունները մոտավոր անցյալի մեջ» նյութի շուրջ:

Ընկեր Քաղաֆով փաստացի տվյալներու հիման վրա ապացուցանեց, թե բրքական տիրապետության օրով Թրակիո բուլղար բնիկները և եկվոր հայերը իրենց գոյությունը պահպանելու համար սերտ գործակցություն հաստատած են իրարու մեջ ու միասնաբար պայքար մղած օսմանյան անգութ բռնակալության դեմ:

Ընկ. Գ. Քաղաֆով հիշեց Բալկանյան պատերազմի առեն մալգարացի հայերու կողմե Փյուշմանճեո գյուղի բուլղար բնակչության պաշտպանությունը: Արդարև Մալգարայի հայերը թուրքերու կողմե հարձակման վտանգին ներքև բուլղար բնակչությունը պահպանած են զեն ի ձեռին հրսկելով ու վտանգի մատնելով իրենց կյանքը:

Ընկ. Քաղաֆով ըսավ. «Նախկին Փյուշմանճեո գյուղի բուլղարները, որոնք այժմ Բուրգազի Սարաֆովո գյուղի մեջ հաստատված են, 50 տարի հետո կուզան իրենց երախտագիտությունը հայտնել իրենց ազատարարներուն և անոնց զավակներուն»:

Խիստ ջերմ և հուզիչ մթնոլորտի մեջ անցած այս հավաքույթի պահուն հյուրերը «Երևան»-ի վարչության հանձնեցին շնորհակալության հասցե:

«ՅՈՒՄԱՆԻԹԵԻ»-Ի ԴԱՇՏԱՀԱՆԴԵՍԸ

Աշխարհ

Ինչպես ամեն տարի, այս տարի ևս «Յումանիթե»-ի դաշտահանդեսը անցավ շատ հաջող: Հարյուր հազարավորներ լեցուցած էին Քուրնեովի ընդարձակածավալ դաշտավայրը: Ամեն տարվա պես, հայ Դեմոկրատները ևս ներկա էին շատ սիրուն տաղավարով մը: Հայոց տաղավարը կկրեր «Արմենի» (Հայաստան) վերտառությունը, ֆրանսերեն և հայերեն: Հայկական տաղավարը հղացված էր նկարիչ Պետոյանի և կառուցված Տոնիկյան եղբայրներու կողմե, այնքան սիրուն, որ իր վրա կհրավիրեր ֆրանսացի բազմությունների ուշադրությունը: Տաղավարին ճակատը զարդարված էր Ս. Հայաստանի զինանշանով և երկու

digitised by A.R.A.R.@

ԼԵՎՈՆ ՋԱՎԵՆԻ ՍՈՒՐՄԵԼՅԱՆԻ ՀԵՏ

ԳՐԻԳՈՐ ԳՈՒՅՈՒՄՋՅԱՆ

Վերջերս հայրենիք այցելեց ամերիկահայ նշանավոր գրող Լևոն Զ. Սյուրմելյանը: Նա եղավ Սիյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում: Նրան ընդունեց կոմիտեի նախագահ Վ. Համազասպյանը:

Ներկա էին կոմիտեին կից գործող գրական հանձնախմբի անդամները, որոնց թվում Գ. Հովնանը, Ս. Տարոնցին, Գ. Ստեփանյանը, Շ. Տատուրյանը, Ա. Կոթիկյանը, Ս. Հարությունյանը և ուրիշներ:

Սյուրմելյանը պատմեց իր մասին, իր կյանքի ու գործի մասին: Պատմում էր մի մարդ, մի քաղաքացի ու գրող, որը վաղուց ձևավորել է իր աշխարհայացքը և ունի իր ուրույն՝ սյուրմելյանական մոտեցումը բարոյականության, քաղաքակրթության, աշխարհի ու ընկերային հարաբերությունների նկատմամբ:

Նա ծնվել է Տրապիզոնում 1907 թվականին:

Սկսվեց երկրորդ աշխարհամարտը, և Թուրքիան հարմար նկատելով առիթը՝ «քաղաքավար ձևով» ուզեց ապատվել հաճախ իրեն պարտադրվող «Հայկական հարցից»: Կոտորածների ալիքը 1915 թվին հասավ և Տրապիզոն (որերրդ անգամ): Կորուստներ ունեցավ և Սյուրմելյանների ընտանիքը: Եղբայրներով ու քույրերով որբացան:

Մի պահ ապատագրվեց Տրապիզոնը ռուսական վենքով: Կրկին վերադարձան, սակայն ժամանակավոր: Հետո Ստամբուլ, Արմաշի գյուղատնտեսական վարժարան, հետագայում էլ հայ արմաշական որբերի հետ 1920 թվականին եկավ Հայաստան:

Սյուրմելյանը հիշում էր Հայաստանի այն ժամանակվա անօգնական, աղետալի վիճակը: Հիշում էր և՛ Երևանը, և՛ այն վայրերը, ուր ոտք էր դրել իր նման հապարավոր որբերի հետ:

Ընդամենը երեք ամիս ապրեց Հայաստանում: Եվ մի օր էլ հետ գցած գումարով հասավ Բաթումի, կրկին վերադարձավ Ստամբուլ, իսկ այնտեղից Ամերիկա՝ Միացյալ Նահանգներ:

ԱՄՆ-ում Սյուրմելյանը հետևեց Կանկասի պետական կոլեջի երկրագործական ճյուղին՝ ավարտելուց հետո Հայաստան վերադառնալու և հայրենիքին օգտակար լինելու միտումով: Կոլեջն ավարտելու տարին նա, նույնիսկ, նամակ էր ուղարկել Սովետական Հայաստանի հողագործության կոմիսարին՝ հայտնելով իր այդ փափագի մասին: Սակայն հետագայում հիվանդանալով և երկար ժամանակ գամվելով անկողնին, հրաժարվեց այդ մտքից:

Լ. Սյուրմելյանը Կանկասում ուսանելու շրջանում գրում է բանաստեղծություններ, որոնք 1924 թվականին Վ. Թեքեյանը փոքրիկ գրքույկով հրատարակում է Փարիզում՝ «Լույս ըվարթ» խորագրով: Գրքույկում ամփոփված էին Սյուրմելյանի 16—17 տարեկան հասակում գրած բանաստեղծությունները: Նրա առաջին քայլերը խրախուսել էր դեռ Օշականը, որի սանն էր եղել Ստամբուլի կեդրոնական վարժարանում ուսանելիս: Իսկ Թեքեյանը գրքույկի առաջաբանում գրում էր. «Վստահ եմ, որ հոս ամփոփված բանաստեղծությունները պիտի տարածեն բանաստեղծին գրասեր հոգին և իրեն պիտի բերեն բավմաթիվ անծանոթ, հեռավոր, խանդավառ բարեկամություններ»:

Հետագայում նա սկսում է իր ուժերը փորձել անգլերենով՝ գրելով չափածո, վերջում էլ ծանրանալով արձակի վրա:

Հայ կյանքին օգտակար լինելու ձգտումն էր, որ Սյուրմելյանին մղեց 1931 թվականին հիմնելու երկլեզվյա (անգլերեն և հայերեն) մի թերթ, որ երկար կյանք չունեցավ, դադարեց 1934 թվականին:

Այնուհետև նա սկսեց աշխատակցել ամերիկյան գրական-գեղարվեստական հանդեսներին, բայց երբեք չկտրելով հոգեկան կապը իր հարազատ ժողովրդի հետ: Սյուրմելյանը իր ստեղծագործություններով միշտ էլ անդրադարձավ հայ կյանքին, արհավիրքի նկարագրությանը: Նա շատ պատմվածքներ հրատարակեց վանական գրական հանդեսներում, որոնց թեման հայկական կոտորածներն էին, հայրենի Տրապիզոնը, որբության ճանապարհները:

Այդ պատմվածքներն էին, որ հեղինակը 1945 թվականին ի մի բերելով՝ մեջտեղ հանեց մեծածավալ «Չեզ եմ դիմում, տիկիններ և պարոններ» խորագրով ինքնակենսագրական հատորը:

Գիրքը մեծ հռչակ բերեց հեղինակին՝ նույն տարին ունենալով հինգ հրատարակություն: Վեպը շատ չանցած ունեցավ օտար թարգմանություններ, գլխավորապես եվրոպական լեզուներով՝ շվեդերեն, գերմաներեն, չեխերեն, իտալերեն և այլն:

Գրքի երևան գալը ողջունողներից մեկը եղավ Վիլյամ Սարոյանը՝ հինգերորդ հրատարակությունում վետեղելով մի առաջաբան, ուր կարդում ենք. «Այս գիրքը պարունակում է մի այնպիսի նուրբ գրականություն, որի նմանը տակավին չեմ կարդացել: Ամբողջ գիրքը երաժշտական բանաստեղծություն է:

Սյուրմելյանի ոճը պարզ է ու անսեթևեթ, ջերմ ու սուր, միաժամանակ լեցուն նուրբ տխրականությամբ:

Չեմ կարող երևակայել մի անձ, որ այս գիրքը կարդալուց հետո հուսախաբ լիներ:

Կյանքիս մեջ կարդացած ամենից գեղեցիկ և հետաքրքրական պատմվածքներից մեկն է: Այս ասում եմ անկախ Լևոն Սյուրմելյանի հետ իմ ունեցած բարեկամությունից:

... Անմիջապես կանապանում եմ լավ գիրքը, երբ տեսնում եմ»:

1951 թվականին Սյուրմելյանը հրապարակ հանեց իր երկրորդ վեպը՝ «98,6 աստիճան» վերնագրով, միաժամանակ գրելով շատ պատմվածքներ: 500-ից անցնում է տարբեր հանդեսներում հրատարակված նրա պատմվածքների թիվը, և եթե հնարավոր լիներ ժողովել դրանք, հատորներ կարելի կլիներ կազմել:

Վերջին տարիներին Լ. Սյուրմելյանը անցել է դասախոսական աշխատանքի Լոս-Անջելոսի բարձրագույն կոլեջում՝ դասավանդելով անգլերեն լեզու, ուր շատ անգամ նյութ է ունենում նաև



Լևոն Զ. Սյուրմելյանը ՍՍՌՄ ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի հետ:

Լուսանկար՝ Ա. Քոչարի

հայ մշակույթի ու քաղաքակրթության հարցերը:

Եվ այս շրջանում է, որ նա ստանձնեց «Սասնա ծռեր»-ի (36 պատումների) անգլերեն թարգմանության կարեվոր գործը՝ հիմնականում օգտագործելով Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի կազմած համահավաք տեքստը: Գործին ձեռնարկել է մեծ սիրով, կրքով, հայրենասիրությամբ: Նա համոզված է, թե այդպիսի բանաստեղծական, այդպիսի մարդասիրական, այդպիսի մոնումենտալ դյուցազնավեպ, ինչպիսին «Սասնա ծռեր»-ն է, չկա ոչ մի գրականության մեջ: Պետք է ցույց տալ աշխարհին մեր այդ գործը, որպեսզի մարդկությունը հաղորդակից լինի մեր մտածումներին ու բարքերին: Իսկ անգլերեն թարգմանությունը կարող է մեծ դեր խաղալ այս առումով:

Եվ «Սասնա ծռեր»-ի պատճառով է, որ եկավ Հայաստան՝ Հայաստանի գրականագետների ու մտավորականների հետ հանդիպելու, խոսելու որոշ հարցերի շուրջ, որպեսզի որքան կարելի էր առավել կատարյալ կերպով օտար հանրությանը ներկայացվեր մեր անմահ էպոսը:

Լ. Սյուրմելյանը Հայաստան եկավ Իրանի վրայով: Զարմացել էր հայկական հանրապետության հողը մտելով: Հիացած ասում էր.

— Ամեն թիվ հողը պբաղված էր խաղողի ու պտղատու ծառերի այգիներով: Ամենուր ծաղկած տեսա: Զարմացա ու ոգևորվեցի տեսնելով իմ երկրի այս առաջընթացը: Դուք մեծ

digitised by A.R.A.R.@

գործ եք կատարել մշակելով այդ հողերը. կասեի ավելի մեծ գործ, քան այն, ինչ կառուցված տեսա քաղաքում:

Սյուրմեյյանը իրոք ոգևորված էր: Հիրավի մեծ գործ է: Եթե անցնելու լինեք այդ վայրերով, կտեսնեք, թե ինչ է դառնում «Արմաշ» պետական տնտեսությունը: Արմաշ... Սյուրմելյանը չէ՞ր, որ արմաշական որբերի խմբով եկավ Հայաստան: Արմաշակա՞ն... և հիմա ծաղկուն մի նոր Արմաշ՝ Հայաստանի հանրապետության հարավի սահմանագծում: Մի՞թե խորհրդանշական չէ:

Լևոն Սյուրմելյանի հետ պրույցը շարունակվեց մյուս օրերին Գրականության ինստիտուտում, Գրականության և արվեստի թանգարանում, Մաշտոցի անվան պետական մատենադարանում, Գրողների միությունում, խմբագրություններում և ամեն տեղ, ուր նա լինում էր:

Գրողների միությունում նրա հետ հանդիպելու էին եկել շատերը: Որքա՜ն կրքեր բորբոքվեցին այնտեղ: Պատճառը Սյուրմելյանն էր: Նա հուզեց և ալեկոծեց: Մանավանդ, երբ տրտմությամբ նկարագրեց ամերիկահայության ապագան, որ, նրա կարծիքով վաղ թե ուշ ձուլման, կորստյան ենթակա է, նույնիսկ, մեկ սերնդի կյանքում:

Առարկողներ եղան, իհարկե: Եվ դա նրանից է, որ Հայաստանում դժվար է պատկերացնել թե հայրենիքից դուրս ու նրանից հեռու վտանգված է ամեն մի հայի ապագան, նկալ կամ առավել, նայած թե ինչպիսի քաղաքակրթության մակարդակի վրա գտնվող երկրում է ապրում:

Իսկ Սյուրմելյանի համար Միացյալ Նահանգները ազգությունների խսկական մի խառնարան է: Այնտեղ ամեն ինչ կորչում է, ազգային հատկանիշ, ավանդություն: Դա ողբերգություն է, քանի որ այդ երկրում են բնակվում նաև 300 հազարի չափ հայեր՝ մեր ազգի համար խիստ կցալի մի թիվ: Եվ այս ամենից շատ Սյուրմելյանին է հուզում: Տասնյակ միլիոնավոր եվրոպացիներ, ասիացիներ, աֆրիկացիներ են մեկնել այդ երկիրը, կլանվել են, հիմք դնելով մի նորագույն ազգի, որ դեռ կազմավորման ընթացքի մեջ է: Եվ մինչև օրս ոչ մի գրող ու բանաստեղծ չի անդրադարձել այս թեմային:

Նա մտադրվել է գրել իր երրորդ վեպը՝ նյութ ունենալով «ազգերի խառնակությունը» Բաբելոնի հայտնի աշտարակաշինությունից ու ջրհեղեղից հազարամյակներ հետո՝ ամերիկյան հողում:

Իր երկի գլխավոր հերոսը հունահայ մի ուսանող է լինելու, որ ընկել է այդ աշխարհը: Թերևս ինքնակենսագրական պահը գերիշխի այստեղ: Իր հերոսը մի մարդ է, որ և՛ հայ է, և՛ միաժամանակ ամերիկացի: Դժվար մի պարտականություն է մարդու ուսերի վրա դրված: Երկուսը պայքարում են, մարդը երկվության մեջ է: Որպես հայ կզգամ է իր երեքհազարամյա պատմության ծանրությունը իր հոգու, ուսերի վրա: Նա ունի հին, բարձր մշակույթ, սակայն այդ աշխարհում ուզում են մոռացության տալ դրանք: Ամբողջ շրջապատն է ինքնաբերաբար պահանջում: Ահա մի հոգեկան դժվարագույն պայքար, որ միայն հայը կարող էր մտածել ու զգալ:

Թե ինչպես կլուծվի ամեն ինչ, պարզ կլինի, երբ ավարտվի գիրքը: Սակայն մեր բոլորի փափագն է, որ անպայման հայը հաղթանակով դուրս գա այդ պայքարից, իսկ նրա հաղթությունը թերևս ոգևորիչ լիներ ամերիկահայ երիտասարդ սերնդի համար:

Լ. Սյուրմելյանի հետ եղանք նաև Մատենադարանում:

Հպարտանալու և հիանալու շատ բան կար Մատենադարանում և բավականին ժամանակ մնացինք այնտեղ՝ լսելով Մատենադարանի գիտական քարտուղար Վարդան Գրիգորյանի բովանդակալից բացատրությունները:

Լևոն Սյուրմելյանը շատ տեղեր չշրջագայեց, ասենք ժամանակ էլ չուներ: Այցելությունները գիտական օջախներին, հանդիպումները մտավորականների հետ, լիներ դա պրոֆ. Կ. Մելիք-Օհանջանյանի բնակարանում, թե ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի, գրող Խաչիկ Դաշտենցի և այլոց, խլում էին նրա ժամանակի մեծ մասը:

Մեկ օր միայն ազատվելով քաղաքի «հոգսերից»՝ մի խմբով, որի մեջ էին բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, Դաշտենցը, Սյուրմելյանի հարազատները, լուսանկարիչ Անդրանիկ Ռոշարը, դուրս եկանք Երևան—Սևան—Դիլիջան երթուղով:

Կեսօրին հասանք Սևան: Եղանք թերակղզու վրա, երկար կանգնեցինք Սյունյաց Մարիամ իշխանուհու շռայլ նվիրատվությամբ ու հովանավորությամբ կառուցված հազարամյա վանքերի պատերի տակ:

Հետո եղանք նորաբաց «Ախթամար» իջևանատանը, ուր մեզ ընկերացավ Նաիրի Զարյանը և ուրախ սեղանի շուրջը վայելեցինք Սևանի բարիքները:

Դիլիջանում, կոմպոզիտորների ստեղծագործական տանը Սյուրմելյանը հյուր եղավ այնտեղ հանգստացող մեծ վարպետ Մարտիրոս Սարյանին, ծանոթացավ Թաթուլ Ալթունյանի, Էդվարդ Միրզոյանի, Առնո Բաբաջանյանի և այլոց հետ: Սյուրմելյանը գոհ էր շրջագայությունից:

Նախավերջին օրն էր: Տանն էի և լսում էի Սյուրմելյանի հեռուստատեսային ելույթը: Նա խոսում էր անկաշկանդ և վերջում հուզումնալից կարդաց իր «Ասացվածք ծառ տնկելու առթիվ» հոյակապ բերթվածքը.

Տեր, օրհնե՛, ծառն այս մատղաշ: Ես
կտնկեմ պայն ահա
Փխրուն և սև հողին մեջ ուր
պապերս կը պառկին.
Ես՝ անոնց թոռը հսկա, այս հողին
տերն եմ կրկին,
Ու արևուն տակ կաճիմ անունն
իրենց շուրթիս վրա...

Սյուրմելյանին ճանապարհեցինք: Ճանապարհեցինք ուրախ տրամադրությամբ, հուսով, որ գալու է կրկին: Այդպես խոստացավ:

ԵՐԳՈՂ ԼԱՐԵՐ

Գ. ՉԻԳԻՆՅԱՆ

Շրջանայաց եղել նրա հետ զրուցելիս: Մոգական փայտիկի մի քանի շարժումներով նա կարող է ձեզ մի ակնթարթում փոխարկել թզուկի: Ի՞նչ է այս: Հմայո՞ւմ: Ոչ: Մեդեա Աբրահամյանը պարզապես հիանալի նկարչուհի է, որին կարող է նախանձել ամեն մի պրոֆեսիոնալ ծաղրանկարիչ: Սակայն նա մատիտից անհամեմատ լավ է տիրապետում աղեղին: Ընկերական շարժերը սոսկ ժամանց են նրա համար, իսկ երաժշտությունը կյանքի իմաստն է:

...«Արտասովոր ընդունակությունների տեր է երեխան: Նա անպայման պետք է նվագել սովորի»,— հորդորում էր ծնողներին երգահան Ռոմանոս Մելիքյանը: «Եվ միայն թավջութակի վրա: Նայեցեք նրա մատներին»,— բացականչում էր նվագավար Կոնստանտին Սարաջյանը:

Աբրահամյանների տանը հնչեց փոքրիկ թավջութակը: Մեդեան շատ շուտ ըմբռնեց կատարողական վարպետության «գաղտնիքները»: Դեռևս երաժշտական տասնամյա դպրոցի աշակերտուհի էր նա, բայց արդեն հանդես էր գալիս փայլուն մենահամերգներով: Նրա անունը հաճախակի սկսեց երևալ ազդագրերի վահաններին: Սկսեցին խոսել նրա մասին, խոսել բարձրաձայն:

Երևանի պետական կոնսերվատորիա: Մեդեան ընդունվում է մրցույթից դուրս: Եվ ահա առաջին լուրջ քննությունը. կոնսերվատորիայի երրորդ կուրսի ուսանողուհուն ուղարկում են Բուխարեստ՝ երիտասարդության համաշխարհային փառատոն:

Հետաքրքիր մի մանրամասնություն: Մոսկվայում, ընտրողական մրցույթից հետո, պատանի թավջութակահարուհուն է մոտենում բարձրահասակ, ակնոցներով մի տղամարդ և ասում. «Գրեցեք իմ հեռախոսի համարը: Բուխարեստից վերադառնալուն պես անպայման զանգահարեցեք ինձ: Դուք պետք է ուսանեք իմ դասարանում»: Մստիսլավ Ռոստրոպովիչն էր դա:

1953 թվականից արդեն Մեդեա Աբրահամյանը Մոսկվայի կոնսերվատորիայում է: Ռոստրոպովիչը իր սանուհու գիտակցության մեջ զարգացնում է տրամաբանական մտածողություն, ստեղծագործության գաղափարի բացահայտման ունակություն և դրա հետ միաժամանակ պահպանում նրան հատուկ երաժշտական ներըմբռնողության բնատուր հարստությունը:

...Պրագա: 1955 թվական: Գանուշ Վիգանի անվան թավջութակահարների միջազգային մրցույթ: Երրորդ վճռական տուր: Ժամացույցի սլաքը մոտենում է 7-ին, իսկ Մեդեան չկա: Նախօրյակին շատ է նվագել նա, հոգնել և... քնած է մնացել: Այդ դեպքը ճակատագրական կարող էր լինել, եթե պակասեր նրան ինքնատիրապետման ներքին ուժը: Շնչակտուր վազելով անդրբեմ՝ նա արագ արձակում է գործիքի շապիկը: Այդ պահին էլ հայտարարվում է նրա ազգանունը: Եվ պատահեց անսպասելին. Մ. Աբրահամյանը նվագեց հիանալի: «Դու երբեք այդպես լավ չես կատարել, ջանիկս»,— շնորհավորում էր նրան հուզված ուսուցիչը: Մեդեան երջանիկ էր: Ռոստրոպովիչը՝ ոչ պակաս:

«Հայ աղջիկ Մեդեա Աբրահամյանը,—գրել է «Մլադա Ֆրոնտա» թերթը,— ունկնդիրներին հմայեց բացառիկ երաժշտականությամբ և թեթև հնչումով»: Պրագայի կոնսերվատորիայի պրոֆեսոր Կարլ Պևխ. «Ես հիացած եմ պատանի թավջութակահարուհու անթերի կատարմամբ: Երբեք չեմ մոռանա Դվորժակի կոնցերտի դանդաղ մասը, որ կատարվեց սքանչելի»:

Սկսվեց համերգային-կատարողական բեղմնավոր գործունեություն: Նրան ծափահարում են Մոսկվան ու Լենինգրադը, Ռիգան ու Տալլինը, Սոֆիան ու Փխենյանը: Եվ յուրաքանչյուր ելույթ բացահայտում էր նրա բազմակողմանի տաղանդի նորանոր կողմերը:

Անցյալ աշնանը Մ. Աբրահամյանը համերգային շրջագայություն կատարեց Ֆրանսիայում: Եվ ուր էլ որ ելույթ ունեցավ նա, Փարիզում թե Բորդոյում, Տուլուզում թե Մարսելում, Լիոնում թե Տուլոնում, ամենուրեք խանդավառ ընդունելություն, ծափեր, ծաղիկներ, ինքնագրեր: Դժվար է մի ուրիշ ժողովրդի զարմացնել իր իսկ երաժշտությամբ: Սակայն Մեդեա Աբրահամյանը գերեց ֆրանսիացիներին Ռավելի ստեղծագործությունների կատարմամբ:

«Խա-բա-նե-րա»: «Խա-բա-նե-րա»,— վանկարկում էր Փարիզի Պլեյել դահլիճը: Եվ ահա հնչում է իրենց մեծ հայրենակցի կրակոտ մեղեդին:

Մեր առջևն է գունեղ մի բացիկ: Բարեկամական համբույրով միաձուլվել են ֆրանսուհին և ռուսը: Դա «Ֆրանսիա—ՍՍՌՄ» ընկերության անդամատոմսն է, որ շնորհառատ արտիստուհուն է հանձնել գեներալ Պետին:

digitised by A.R.A.R.@

ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՎ ԻՐ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ



Թավջութակահար Մեդեա Աբրահամյան։

Մեդեա Աբրահամյանը նուրբ, բանաստեղծօրէն մտածող նուագիչ է։ Թավջութակահարուհու կատարողական ստեղծագործության գաղափարը զգացումների մաքրությունն է, խորը ներթափանցումը երաժշտական կերպարների մեջ, այստեղից էլ՝ նրա արտիստական կերպարի պայծառ, ներդաշնակ նկարագիրը։

Կատարյալ է նրա տեխնիկան, որ միշտ գերակշռում է ճշմարտականը. դրանումն է նրա կատարման հմայքը։ Նրա աղեղի շարժումները աչքի են ընկնում նազելիությամբ ու նախանձելի ազատությամբ։ Ամեն ինչում զգացվում է կշռույթի անթերի զգացումը և բնատուր երաժշտականությունը։ Եվ ինչ էլ որ կատարելիս լինի Մեդեա Աբրահամյանը, նրա մեկնաբանությունը միշտ համոզում է և ստիպում է ոչ միայն լսել, այլև զգալ, ապրել։

Չափազանց հարուստ է արտիստուհու նվագացանկը։ Այն ընդգրկում է ամենատարբեր ոճի ստեղծագործություններ՝ Բեթհովենից մինչև Սպենդիարյան։ Աբրահամյանը հայ կոմպոզիտորների՝ թավջութակի համար գրած երկերի առաջին կատարողն է։ Նրան են ձոնում իրենց ստեղծագործությունները կոմպոզիտորներ Արտեմի Այվազյանը, Ադամ Խուդոյանը, Ավետ Տերտերյանը։

Ներկայումս Հայկական ՍՍՌ վաստակավոր արտիստուհի Մեդեա Աբրահամյանն աշխատում է Կ. Դեբյուսիի, Ս. Բարբերի սոնատների, ինչպես նաև Ա. Խաչատրյանի և Ա. Բաբաջանյանի նվագախմբի հետ թավջութակի համար գրված կոնցերտների վրա։

Առջևում են ստեղծագործական նոր որոնումներ, ստեղծագործական նոր իրագործումներ։

Գ. ՄԱԴՈՅԱՆ
Թանգարանի գիտաշխատող

Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության Գրականության և արվեստի թանգարանը հանրապետության աչքի ընկնող մշակութային հաստատություններից է։ Նրա հասցեով ամեն օր ծրարներ ու ծանրոցներ են ստացվում Սովետական Միության և արտասահմանյան երկրների տարբեր քաղաքներից։ Աշխարհի չորս ծագերում ապրող մեր հայրենակիցներն այստեղ են ուղարկում իրենց մոտ եղած գրական, թատերական, երաժշտական արխիվները՝ մշակութային գործիչների ձեռագրեր, նրանց պատկանող իրեր, հնատիպ գրքեր, մամուլի հավաքածուներ։

Թանգարանի հարստությունները տարեցտարի աճում են։ Այսօր նա ունի 19—20-րդ դարերի գրողների ու հրապարակախոսների 238, դերասանների ու թատերական գործիչների 158, երաժշտագետների 75 արխիվ, ավելի քան կես միլիոն թանկագին ձեռագրեր, այդ թվում Խ. Աբովյանի, Րաֆֆու, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Դ. Վարուժանի, Ե. Չարենցի, Պ. Ադամյանի, Կոմիտասի, Ալ. Սպենդիարյանի, Ռ. Մելիքյանի ինքնագրերը։

Թանգարանում է պահվում հայերեն հնատիպ գրքերի ամենահարուստ հավաքածուներից մեկը։ Այստեղ են գտնվում Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Գ. Սունդուկյանի, Ե. Շահազիզի, Մ. Աբեղյանի, Ա. Չոպանյանի, Թ. Ասատյանի, Գ. Արսլանյանի, Վ. Հապեշյանի, Դ. Դեմիրճյանի, Ե. Չարենցի, Գր. Ավետյանի, Վ. Վաղարշյանի, Ար. Ոսկանյանի, Ան. Մալիկյանի և այլոց մասնագիտական հարուստ գրադարանները, որտեղ կարելի է գտնել գրականության, արվեստի և հայագիտության վերաբերյալ ամենահայվագյուտ հրատարակությունները։

Այստեղ պահվում են երկու հազարից ավելի հայ պարբերականների նմուշներ, այդ թվում «Հյուսիսափայլ», «Կռունկ Հայոց աշխարհին», «Ճռաքաղ», «Մշակ», «Փորձ», «Արձագանք», «Փարոս Հայաստանի», «Աղբյուր», «Տարազ», «Մուրճ», «Մասիս», «Արևմուտք», «Բյուզանդիոն», «Ժամանակ», «Արևելյան մամուլ», «Թատրոն-բարեկամ մանկանց», «Բազմավէպ», «Հանդես ամսօրյա», «Լույս», «Գեղունի», «Գեղարվեստ», «Թատրոն», «Թատրոն և երաժշտություն», «Հուշարար» և այլ տասնյակ թերթերի ու հանդեսների լրիվ հավաքածուները։

Մեծ թիվ են կազմում նաև գեղանկարչական գործերը. այստեղ կարելի է տեսնել հայ ականավոր նկարիչների ու քանդակագործների՝ Անդրեաս Տեր-Մարուքյանի, Գ. Բաշինջաղյանի, Հ. Կոջոյանի, Վ. Սուրենյանցի, Մ. Սարյանի, Ա. Սարգսյանի, Հ. Զարդարյանի և ուրիշների, թատերական նկարիչներ Մ. Արուտչյանի, Ստ. Ալաջալյանի, Կ. Սիմոնյանի, Ա. Չինչինգարյանի, Ալ. Շաքարյանի, Խ. Եսայանի, Մ. Սվաղչյանի բազմաթիվ գործերի բնօրինակները։

Բազմակողմանի աշխատանք է տարվում ստացված վավերագրերի մշակման, հետազոտման, հրատարակության և ցուցադրման ուղղությամբ։ Թանգարան եկող բոլոր նյութերը գրանցվում են մայր մատյանում, բաժանվում գրական, թատերական, երաժշտական բաժինների միջև և տեղադրվում հարմարավետ ու ապահով գրապահոցներում։ Այնուհետև սկսվում է նյութերի գիտատեխնիկական մշակումը։ Այդ գործով զբաղվում են 23 գիտաշխատողներ։ Նրանք ձևակերպում են առանձին գործիչների արխիվային ֆոնդերը՝ ըստ բնույթի խմբավորում նյութերը, կազմում պահպանման միավորներ, ծրարում, ցուցակագրում և քարտագրում։ Այս բոլորից հետո նյութերը տրամադրվում են այցելուներին։

Արխիվային նյութերով թանգարանը սպասարկում է գիտահետազոտական ինստիտուտներին, ինչպես և անհատ գրականագետների, երաժշտագետների, պատմաբանների և այլ մասնագետների։ Թանգարանի նյութերը օգտագործվում են կինոյի, հեռուստատեսության և ռադիոյի կողմից։ Հենց միայն այս տարվա առաջին կիսամյակում գիտնականներին տրամադրվել են 30.500 փաստաթուղթ և լուսանկար, ռադիոյի, հեռուստատեսության և կինոյի աշխատակիցներին՝ 3.200 փաստաթուղթ և լուսանկար։

Այս թվերը չպիտի պարմացնեն ընթերցողին, եթե հայտնենք, որ վերջին տասնամյակում հանրապետությունում գրված գիտական ուսումնասիրությունների մեծ մասի համար աղբյուր են հանդիսացել մեր թանգարանի ֆոնդերը։ Այդ նյութերի հիման վրա են գրվել այնպիսի ծանրակշիռ գիտական աշխատություններ, ինչպիսիք են Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի հրատարակած «Հայ գրականության պատմություն» բազմահատոր երկը, Հրայր Մուրադյանի «Դերենիկ Դեմիրճյան», Հրանտ Թամրազյանի «Շիրվանզադեի կյանքն ու գործը», Արշալույս Բաբայանի «Պերճ Պռոշյան», Ռուբեն Զարյանի «Պետրոս Ադամյան», Գառնիկ Ստեփանյանի «Ուրվագիծ արևմտահայ թատրոնի պատմության», Սարգիս Մելիքսեթյանի «Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության», Գ. Տիգրանովի «Հայկական երաժշտական թատրոնը», Ռ. Ռուշնարյանի, Մ. Մուրադյանի և Գ. Գյոդալյանի «Ակնարկ հայ երաժշտության պատմության» մենագրությունները։



Գրականության և արվեստի թանգարանի՝ Րաֆֆուն և Գր. Արծրունուն նվիրված անկյուններ։

digitised by A.R.A.R.@

Գրականության ինստիտուտը, Հայաստանի թատերական ընկերությունը, Հայպետհրատը թանգարանում կենտրոնացված ձեռագրերի հիման վրա են կատարում հայ մշակույթի գործիչների երկերի գիտական և հանրամատչելի հրատարակությունները:

Գիտական ուսումնասիրություններ են կատարվում նաև թանգարանի ներսում: Վերջին տարիներին լույս են տեսել Պետրոս Ադամյանի անտիպ նամակների ժողովածուն, «Գրական բաժնի արխիվային ֆոնդերի ուղեցույցը» (կազմող՝ Գ. Ալպավուրյան), «Գրական ժառանգության» երեք հատորները. «Նար-Դոսի և Ալ. Շատուրյանի նամակները» (կազմող՝ Գ. Ալպավուրյան և Պ. Սիմոնյան), «Ալ. Սպենդիարյանի նամակները» (կազմող՝ արվեստագիտության թեկնածու Ռ. Գրիգորյան), «Գևորգ Ախվերդյանի նամակները» (կազմող՝ Ա. Ավետիսյան) և «Օլգա Մալսուրյան» մեներգությունը: Տպագրության են պատրաստվել թատերական և երաժշտական բաժինների արխիվային ֆոնդերի ուղեցույցը, «Դանիել Վարուժանի նամակներին» և «Ժամանակակիցների հուշերը հայ կլասիկ գրողների մասին» ժողովածուները:

Խոշոր աշխատանք է կատարվում արխիվներում պահվող երաժշտական ստեղծագործությունները ժողովրդականացնելու ուղղությամբ: Այսպես, պարսկահայ երգահան Նիկոլ Գալանդերյանի հորինած բավմաթիվ մեղեդիներ ծանոթ չէին սովետահայ երաժշտասերներին: Նրա արխիվը թանգարան բերվելուց հետո այդ մեղեդիներից մի քանիսը գրավեցին երաժշտագետների ուշադրությունը, հանվեցին արխիվից և հաղորդվեցին ռադիոյի միջոցով: Թանգարանում պահպանվող նյութերի հիման վրա է իրագործվել Տիգրան Չուխաջյանի «Արշակ Բ» և «Կարինե» երկերի բեմականացումը: Անցյալ տարվա վերջին Ֆրանսահայ երիտասարդական միության նախաձեռնությամբ երաժշտագետ Ավետիս Մեսումենցը Նեապոլում թանգարանի համար ընդօրինակեց 18-րդ դարի իտալական երաժշտագետ Նիկոլո Պիչչինիի «Տիգրան մեծ» օպերայի կլավիրը և հանեց լիբրետոյի միկրոֆիլմը: Այժմ բոլոր նյութերը գտնվում են թանգարանում, և հանրապետության երաժշտագետներն ուսումնասիրում են հայկական կլանքից վերցված և երկու հարյուր տարի առաջ Իտալիայում մի քանի անգամ բեմադրված այդ գործի բեմականացման հնարավորությունները:

Ժողովրդի լայն կանգվածները թանգարանի հարստություններին ծանոթանում են նաև ցուցահանդեսների միջոցով: Կան մշտական և շրջիկ ցուցահանդեսներ, կազմակերպվում են նաև հոբելյանական ցուցահանդեսներ:

1958 թվականից գործում է «Հայ թատրոնի 2000-ամյակը» մշտական ցուցահանդեսը: Այն դիտել է 25 հազար մարդ, այդ թվում բավմաթիվ օտարազգի մասնագետներ: Ցուցահանդեսը իր բացման տարում ՌՍՖՍՌ Կուլտուրայի մինիստրության միջնորդությամբ 40 օրով տեղափոխվել է Մոսկվա, ունեցել 40 հազար այցելու և արժանացել բարձր գնահատության:

1962 թվականից բացվել է «Հայ նոր գրականության հուշ-ցուցահանդեսը, ուր ներկայացված են հայ դասական գրողների կյանքին ու գործունեությանն նվիրված բավմական ցուցանմուշներ:

1961 թվականից կազմակերպված է թատերական շրջիկ ցուցահանդես, որ ամփոփված է 80 մեծադիր ծալովի վահանների վրա: Այստեղ խոշոր տեղ է հատկացված սովետահայ թատրոնի նվաճումներին: Ցուցահանդեսը եղել է Լենինական, Կիրովական, Ալավերդի, Հոկտեմբերյան, Մեղրի, Ղափան, Սիսիան, Գորիս, Քաջարան, Հրազդան, Կամո, Դիլիջան, Իջևան, Բերդ քաղաքներում և քաղաքատիպ ավաններում, Կիրովի անվան և ալումինի գործարանների մշակույթի պալատներում: Այն դիտել է 115 հազար մարդ: Առաջիկայում ցուցահանդեսը տարվելու է Էջմիածին, Արտաշատ, Աշտարակ, մի քանի խոշոր գործարաններ, գալիք տարի ցուցադրվելու է Թբիլիսիում և Բաքվում:

Այս տարի կազմակերպված «Շեքսպիրը և հայ թատրոնը» շրջիկ ցուցահանդեսը մեծ հետաքրքրություն առաջացրեց: Երեք ամսվա ընթացքում այն դիտել է 35 հազար մարդ:

Մեծ ու շքեղ ցուցահանդեսներ են կազմակերպվել Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Սիրանույշի, Շիրվանզադեի, Ե. Չարենցի հոբելյանների առթիվ: 1961 թվականին վեց ամսով գործել է Անդրկովկասյան ժողովուրդների բարեկամությանը նվիրված ցուցահանդեսը: Սայաթ-Նովայի ծննդյան 250-ամյակին նվիրված ցուցահանդեսը ութ ամիս բաց էր այցելուների առաջ: Այս տարվա մայիսից նույն տեղում բացվել է Հակոբ Պարոնյանի ծննդյան 120-ամյակին նվիրված ցուցահանդես, որը գործելու է մինչև տարեվերջը:

Ինչպես արխիվային նյութերի հայտնաբերման ու հավաքման, այնպես էլ դրանց մշակման, օգտագործման և ցուցադրման գործում թանգարանի աշխատակիցներին մեծ օգնություն են ցույց տալիս նրա բարեկամները: Իսկ դրանց թիվը շատ է թե՛ մայր հայրենիքում և թե՛ սփյուռքում: Դրանք տարբեր սբաղմունքի մարդիկ են և կազմակերպություններ:

Ֆրանսահայ մշակութային միության և Ֆրանսահայ երիտասարդական միության (ԺԱՖ) շնորհիվ վերջին 7—8 տարում Ֆրանսահայ գաղութից տեղափոխվել են ավելի քան 30 խոշոր արխիվներ, այդ թվում՝ Ա. Չոպանյանի, Տ. Չիթունու, Սիամանթոյի արխիվները: Լոնդոնի Հայրենակցական միության ջանքերով Հայաստան փոխադրվեց պատմաբան Արշակ Սաֆրաստյանի հարուստ արխիվը:

Արևմտահայ և սփյուռքահայ մշակութային կյանքի վերաբերյալ վավերագրերի հայտնաբերման գործում հսկայական նշանակություն ունեցան Կահիրեի «Արև» թերթի (խմբագիր՝ Է. Կոտալալյան) հայրենասիրական կոչը իր ընթերցողներին՝ գուրգուրանքով հավաքել հայրենի մշակույթի ամեն տեսակի վավերագրերը և խմբագրության միջոցով փոխանցել թանգարանին: Դրա շնորհիվ հայտնաբերվեցին և Հայաստան բերվեցին Վահան Թեքեյանի, Երվանդ Օտյանի, Միքայել Կյուրճյանի և այլոց մի շարք ձեռագրեր ու նամակներ, որոնք կորած էին համարվում: Նույնպիսի աշխատանք կատարեց Կահիրեի «Սավառնակ» երգիծաթերթի խմբագիր Երվանդ Մսըրլյանը և ուղարկեց ականավոր դերասանուհի Սիրանույշի բեմական գործունեությանը վերաբերող բավմաթիվ նյութեր: Հրապարակագիր և գրող Ա. Անդրեասյանը պատրաստակամություն է հայտնել կարգի բերել և ուղարկել հանգուցյալ բանաստեղծ Հակոբ Գուլումճյանի արխիվը:

Թանգարանի բարեկամների թվում են գիտնականներ Վիկտոր Համբարձումյանը, Աշ. Հովհաննիսյանը, Աբգ. Հովհաննիսյանը, Արտ. Կարինյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Վ. Պարսամյանը, Կ. Ղաֆադարյանը, Մ. Հասրաթյանը, Գ. Հովնանը, Ռ. Ջարյանը, Խ. Սարգսյանը, ժողովրդական նկարիչներ Մ. Սարյանը, Արա Սարգսյանը, Մհեր Աբեղյանը, գրողներ Ստ. Զորյանը, Կոստան Զարյանը, Վ. Նորենցը, Ս. Տարոնցին, Ս. Կապուտիկյանը, արվեստագետներ Վավիկ Վարդանյանը, Շարա Տալյանը, Ռ. Աթայանը և ուրիշներ:

Մեծ է նաև սփյուռքահայ բարեկամների թիվը՝ Արմենակ Սալմասլյան, Մարգարիտ Բաբայան, Աննա Բուդաղյան (հանգուցյալ), Մարգարիտ Ուլունյան, Ադրինե Չիթունի, Չապել Համբարձումյան, Մարի Աթմաճյան, Վահան Մալեզյան (Ֆրանսիա), Ռոպեր Ճեպեճյան (Սիրիա), Արտ. Գարդաշյան (Լիբանան), Զարուհի Գալեմքյարյան, Վերոն, Վարուժան-Սաֆրապյան, Պերճուհի, Մաշա Սուրբաբյան (ԱՄՆ), Մելինե Գովանճյան (Բելգիա), Արամայիս Սրապյան, Երվանդ Արկումանյան (Իտալիա), Արմ. Տեր Հակոբյան (Հունաստան), Շուշանիկ Ավատյան (Թուրքիա), Հ. Սիրունի (Ռումինիա), Մարգար Ղարաբեկյան-Դև (Իրան):

Այդ հայրենասերները իրենց պատվի գործն են համարում ամեն կերպ կորստից փրկել և մայր հայրենիք տեղափոխել մեր հոգևոր մշակույթի բեկորները: Օր. Մարգարիտ Բաբայանի սիրալիր օժանդակությամբ են Փարիզից փոխադրվել Կոմիտասի բավմաթիվ ձեռագրերը, գրառումներն ու ժողովրդական երգերի մշակումները: Այդ նյութերի հիման վրա է գրվել Կոմիտասին նվիրված աշխատությունների մեծ մասը:

Շուշանիկ Ավատյանը գրեթե մենակ կարողացավ կազմակերպել իր հանգուցյալ ամուսնու՝ բանասեր Թորոս Ավատյանի հսկայական գրադարանի և արխիվի փոխադրությունը: Բավական է ասել, որ գրադարանն ունի մեծ մասամբ հնատիպ և հազվագյուտ 4416 գիրք, իսկ արխիվը պարունակում է 13.985 վավերագիր:

Առավել կամ նվազ չափով նման հայրենասիրական գործեր է կատարել թանգարանի բարեկամներից լուրաքանչյուրը:

Սփյուռքի հետ կապերն ընդլայնելու, արխիվային ֆոնդերը հարստացնելու, գիտահետազոտական աշխատանքներ ծավալելու, ցուցահանդեսներ կազմակերպելու ուղղությամբ վերջին տարիներին գնահատելի աշխատանք են կատարել թանգարանի նախկին դիրեկտոր, գրականագետ Գառնիկ Ստեփանյանը և ալժմյան դիրեկտոր, թատերագետ Սարգիս Մելիքսեթյանը:

Գիտական հասարակայնությունը, թանգարանի բարեկամները նորանոր պահանջներ են դնում թանգարանի առաջ՝ ավելի ընդլայնել կապերը սփյուռքի հետ, հայտնաբերել և թանգարան տեղափոխել նորանոր գրական-արվեստագիտական արխիվներ, ավելի նպատակասլաց դարձնել գիտահետազոտական աշխատանքները, ավելի խոսուն ու բովանդակալից դարձնել ցուցահանդեսները՝ մեծ տեղ հատկացնելով ժամանակակից հարցերին: Ահա այդ խնդիրների կենսագործման վրա է ալժմ աշխատում թանգարանի գիտական կոլեկտիվը:



digitised by A.R.A.R.@

ՀԱՄԵՐԱՇԽ ՎԵՑՅԱԿԸ

Մեկ տարի առաջ էր: Քիմիայի նորակառույցների շինարարության հարցերին նվիրված Երևանի համամաղարային երիտասարդության խորհրդակցությանը մասնակցում էր նաև երիտասարդ շինարար Սերյոժա Մովսյանը: Նա այդ հավաքում բոլոր երիտասարդներին կոչ արեց մեկնել քիմիական արդյունաբերության նորակառույցները, օգնել շինարարներին, երիտասարդական ավյունով աշխատել հատկապես ամենադժվարին տեղամասերում: Երիտասարդ մասնագետի ելույթը ոգևորեց շատ երիտասարդների: Սերյոժան իր խոսքը գործ դարձրեց:

Հայաստանի քիմիական արդյունաբերության զարգացման համար խոշոր ձեռնարկումներից մեկն է Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանի հարավային մասում քիմիական արդյունաբերության նոր ճյուղ տեղամասի կառուցումը: Այդ նոր կառույցի **ճարկաբաժինները** ստեղծվում են երկաբրետոնից, որոնց մոնտաժման գործը անձնվիրաբեն կատարում է Սերյոժա Մովսյանի բրիգադը: Երիտասարդների բրիգադը սիրով ու նվիրվածությամբ է իրագործում մոնտաժումը, արժանանալով գործարանի դիրեկցիայի գովասանքին:

Սերյոժա Մովսյանն իր բրիգադի անդամներ՝ Միշա Հարությունյանի Վարուժան Աբրահամյանի, Թովմաս Ղարիբյանի, Ռուստամ Բարսեղյանի և Վոլոդյա Պողոսյանի հետ մասնակցել է նաև Կիրովականի, Ալավերդու քիմիական արդյունաբերության նորակառույցների շինարարության աշխատանքներին:

— Մենք, որ նոր եկանք շինարարություն աշխատանքի, մոնտաժման գործից շատ իչ բան գիտեինք,— ասաց Վարուժանը,— բայց Սերյոժան այնպես արեց, որ կարճ ժամանակամիջոցում բոլորս էլ տիրապետեցինք այդ բարդ ու դժվարին մասնագիտությանը: Ամեն օր, երբ սկսում ենք աշխատանքը, նա մեզ հիմա էլ մանրամասն բացատրում է երկաթյա մասերի հավաքման, երանց միացման ու տեղադրման գործը: Մենք էլ լսում ենք մեր բնկերոջը ու սովորում:

Եվ իրոք նորակառույցում մոնտաժվել է երկնաքեր շուրս աշտարակ, որ երիտասարդների եռանդուն աշխատանքի արդյունքն է: Նրա նման բարձրաբերձ մեկ աշտարակ էլ մոնտաժվելու է մինչև այս տարվա վերջը:

Համերաշխ կոլեկտիվ է շինարարների այդ բրիգադը: Նրանք ձգտում են մինչև տարվա վերջը ավարտել իրենց հանձնարարված գործը:

Երիտասարդական այդ բրիգադի անդամները գիտեն և՛ լավ աշխատել, և՛ լավ հանգստանալ: Նրանք ամբողջ օրը գրեթե միշտ միասին են: Աշխատանքից հետո բոլորը հավաքվում են Սերյոժայի մոտ ու որոշում ա՛ր գնալ այդ օրը: Նրանք դիտում են ամեն մի նոր կինոնկար, այցելում ներկայացումների, համերգների: Իսկ կիրակի օրերին նրանց կարելի է տեսնել մեր հանրապետության հռսարժան վայրերում:

Ֆիզկուլտուրան նրանց ամենասիրելի զբաղմունքն է: Գործարանի ֆիզկուլտուրայի հրապարակում նրանք հաճախակի խաղում են վոլեյբոլ, բասկետբոլ կամ ֆուտբոլ:

Նկարում՝ երիտասարդական բրիգադի անդամները հիանում են ի՛նց կառուցած աշտարակով:

Լուսանկարը՝ Պ. Պողոսյանի



ՆՈՐ ԳՐՔԵՐ

ՊԱՏՄԱՒՈՒ ԵՆ ՎՃՌԵՐԱԳՐԵՐԸ

Ժամանակակից բուրք պատմագրությունը ամեն կերպ աշխատում է գունազարդել օսմանյան ռազմաֆեոդալական պետությունը՝ այն ներկայացնելով իբրև «օրինականության», «արդարության», «բարեկրթության» տիպար բովանդակ աշխարհի և մարդկության համար: Սակայն պատմական փաստերն ու վավերագրերը միանգամայն հակառակն են ապացուցում՝ ի դերև հանելով բուրք պատմաբանների կեղծարարական ջանքերը:

Վերջին երկու-երեք տասնամյակում Թուրքիայում ավելի ու ավելի մեծ ուշադրություն է նվիրվում Օսմանյան կայսրության վաղ շրջանի պատմության ուսումնասիրություններ: Լույս են ընծայվում բազմաթիվ արխիվային նյութեր, փաստաթղթեր: Այդ կարգի նյութերից են 15—16-րդ դարերին վերաբերող օրինամատյանները (կանունամե) և օրենքները (կանուն): Ստամբուլի համալսարանի պրոֆ. Ո. Լ. Բարկանը հրատարակել է «15-րդ և 16-րդ դարերում օսմանյան կայսրության մեջ գյուղատնտեսության իրավական և ֆինանսական հիմունքները» նահատակ աշխատությունը, որի առաջին հատորը՝ «Կանունլար» խորագրով, տպագրվել է 1945 թվականին Ստամբուլում: Այդ աշխատությունը պարունակում է երկու հարյուրից ավելի օրինամատյաններ և օրենքներ, որոնք պահվում են թուրքական արխիվներում: Ահա այդ նյութերից է կազմված «Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում (16—17-րդ դդ. կանուններ)» ժողովածուն, որ լույս է ընծայել Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը (1964 թ., Երևան): Գիտությունների ակադեմիայի գիտաշխատողներ Ա. Սաֆրաստյանը և Մ. Զալյանը Բարկանի հիշյալ աշխատությունից ընտրել, բարգմանել ու ծանոթագրել են 23 կանուններ, որոնք վերաբերում են Արևմտյան Հայաստանի սահմանների մեջ մտած վիլայեթներին ու սանջակներին, ինչպես նաև Թուրքիայի տիրապետության տակ եղած մի շանի այլ հայաբնակ վայրերի: Պատմական այդ վավերագրերը ներկայացնում են 16—17-րդ դարերում Թուրքիայի լծի տակ հեծող Արևմտյան Հայաստանի սոցիալ-տրնտեսական կյանքի պատկերը, հայ ժողովրդի իրավազուրկ վիճակը: Կանունները բավական պերճախոս ցույց



ՆՎԵՐՆԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան կոմբինատի և «Հայֆիմգիտնախագիծ» գիտահետազոտական ինստիտուտի կոլեկտիվները հաղարի № 4 միջնակարգ դպրոցում ստեղծեցին քիմիայի ցուցադրական լաբորատորիա, որն առաջինն է հաղարում:

Այդ յուրահատուկ «գիտական հաստատությունում» 7—11-րդ դասարանների աշակերտները ուսումնասիրում են քիմիայի «հրաշքները», կատարում հետաքրքիր փորձեր:

Ընդարձակ, լուսավոր սրահում յուրաքանչյուր աշակերտի տրամադրված է հատուկ փորձասեղան, որը լուսավորվում է տեսողության համար անվնաս, բայց ուժեղ լույսով: Ամեն մի սեղանի մոտ կա ջրի ծորակ, ինչպես նաև քիմիական նյութերի պահարան՝ աննրաժեշտ փորձանյութերով:

Նույնպիսի լաբորատորիա է ստեղծվել նաև հաղարի № 8 դպրոցում, իսկ № 12 դպրոցում ստեղծվել է մետաղամշակման ցուցադրական արհեստանոց:

Միայն քիմիայի կաբինետները հարստացնելու նպատակով հաղարի դպրոցներն այս տարի ձեռք են բերել ավելի քան 30 հազար ռուբլու լաբորատոր սարքավորում:

digitised by A.R.A.R.@

են տալիս սամանյան ռազմա-ֆեոդալական կառավարության և տեղեկում նրա ներկայացուցիչների կողմից հայերի նկատմամբ գործադրվող անսահմանափակ ճնշումներն ու բռնությունները, ապօրինությունները ու չարաշահումները: Այդ արտահայտվում էր և՛ հողերի օգտագործման, և՛ հարկերի նշանակման ու գանձման, և՛ իրավունքներից օգտվելու ասպարեզում: Սամանյան կենտրոնական կառավարությունը երկրում հաստատված ռազմա-ֆեոդալական կարգերը ամրապնդելու և բոլոր ֆեոդալներին (սուլթանից սկսած մինչև վերջին սիփահին) շնորհված անսահման իրավունքները «կարգավորելու» և որոշ չափով «օրինականացնելու» նպատակով պարբերաբար հրատարակում էր կանուննամեներ և կանուններ, որոնք արտաքուստ իբր թե կանոնավորում էին ֆեոդալների և իրավազուրկ ռայաների հողային, հարկային և իրավական հարաբերությունները, մինչդեռ իրականում է՛լ ավելի էին ուժեղացնում վերջինների ճնշումն ու կեղեքումը:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դեռևս 9-րդ դարում Հայաստանում առաջանում են բազմաթիվ քաղաքներ, որոնք զարգանում են ապրում հետագա մի քանի դարերում: Այստեղ ծաղկում է նյութական և հոգևոր հարուստ մշակույթ, որ նոր աստիճան էր հայ մշակույթի պատմության մեջ: Միջնադարյան քաղաքների ուսումնասիրությունը ավատատիրական Հայաստանի պատմության կարևոր բնագավառներից մեկն է: Այդ հարցին է նվիրված Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Բաբկեն Առաքելյանի «Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դ.դ.» խորագրով մենագրությունը: Աշխատության առաջին մասը լույս է տեսել 1955 թվականին, երկրորդը՝ 1964-ին, Գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ:

Օգտագործելով միջնադարյան քաղաքների, հատկապես բագրատունիների մայրաքաղաք Անիի և միջնադարյան Հայաստանի նշանավոր կենտրոններից մեկի՝ Դվինի հնագիտական բազմամյա ուսումնասիրությունների արդյունքները, որոնք ընդհանրացված են Ն. Մառի, Հ. Օրբելու, Կ. Ղաֆադարյանի աշխատություններում, ինչպես նաև հայերեն, արաբերեն, պարսկերեն, հունարեն և վրացերեն գրավոր աղբյուրներն ու հայ վիմագրական հուշարձանների տվյալները, մենագրության հեղինակը առաջին գրքում շարադրել է միջնադարյան քաղաքների ծագման ու զարգացման պատմությունը 9—11-րդ դարերում և քաղաքային արհեստների ու նրանց բազմաթիվ ճյուղերի զարգացումը 9—13-րդ դարերում: Հայկական լեռնաշխարհում այդ ժամանակ հաշվվում էին 45 քաղաք և 23 գյուղաքաղաք: Դրանցից խոշորագույնները գտնվում էին միջազգային քարավանային առևտրի մայրուղիների վրա և հանդիսանում էին արհեստագործական արտադրության ու առևտրի կարևոր կենտրոններ:

Մենագրության երկրորդ գրքում ուսումնասիրված են ապրանքային արտադրության, առևտրի և դրամական շրջանառության զարգացումը 9—13-րդ դարերում, քաղաքների հետագա վերելքը 12-րդ դարում և 13-րդ դարի առաջին երրորդում: Ավատական հասարակության արտադրողական ուժերի զարգացման հետևանքով նախադրյալներ են ստեղծվում ապրանքային արտադրության համար: Քաղաքները վճռալով նշանակալից դեր են խաղում երկրի տնտեսական և քաղաքական կյանքում: Հայաստանը դառնում է միջազգային առևտրի կենտրոններից մեկը: Թեպետ սելջուկյան նվաճումների շրջանում քաղաքների զարգացու-



մը որոշ չափով դանդաղում է, սակայն հետագայում դրանք նոր վերելք են ապրում, և միայն մոնղոլական տիրապետությունը անկում և ամայացում է բերում ծաղկուն այդ կենտրոններին:

Աշխատության մեջ հեղինակը հանգամանորեն անդրադարձել է քաղաքների ներքին կյանքի, սոցիալական կառուցվածքի, արհեստագործական եղբայրությունների (համքարություն), ինչպես և քաղաքային վարչության և ինքնավարության առաջացման հարցերին: Բնակչության աշխատավորական խավերի շահագործման ուժեղացման հետ խորանում են սոցիալական հակասությունները հակոտնյա ուժերի միջև: Սրվող դասակարգային պայքարը իր անդրադարձն է գտել 9—13-րդ դարերի գրական շատ երկերում: Այդ պայքարը արտահայտություն է գտնում նաև թոնդրակյան շարժման մեջ, որի գաղափարները նկատելի չափով համակեցին քաղաքային աշխատավորական խավերին:

Բ. Առաքելյանի հիմնային աշխատությունը կարևոր ներդրում է հայ պատմագիտության մեջ:

ԽԱՉԲԱՌ



Հորիզոնական

3. Առանձական հատկությամբ պարուրաձև մետաղե լար: 7. Ֆրանսիացի նշանավոր փիլիսոփա: 8. Հոտավետ ծաղիկ: 10. Ձող: 11. Քաղաք Ուկրաինայում: 13. XIX դարի գերմանացի բանաստեղծ: 15. Եվրոպական պետության մայրաքաղաք: 17. Օսեթական ժողովրդական էպոսի հերոս: 18. Դանուբի վտակներից: 19. Պատմական Հայաստանի մայրաքաղաք: 20. Ռուս նշանավոր նկարիչ: 22. Կալմանի օպերետներից: 23. Մետաղ: 25. Ենիսեյի վտակ: 26. Քարանձավ: 27. Քաղաք Թուրքիայում: 29. Արդյունաբերական կենտրոն Հայաստանում: 31. Զախարինյա Ուկրաինայի հետման: 32. Ֆրանսիացի ականավոր երաժշտագետ:

Ուղղահայաց

1. Գերմանացի աշխարհագրագետ-քարտեզագետ: 2. Վյետնամի հանրապետության կենտրոնական մասի նախկին անվանումը: 3. Լիճ Ղազախստանում: 4. Մ. Պեշիկթաշլյանի պատմական ողբերգություններից: 5. Հյուսիս-ամերիկյան հնդիկների ցեղի ներկայացուցիչ: 6. Զգեստի կրծքի վրա կարված մետաղե օղակ և կոճակ: 9. Նար-Դոսի «Սպանված աղավնին» վիպակի հերոսուհի: 11. Գործող անձ Գ. Սունդուկյանի «Օսկան Պետրովիչը էն կինքումը» կատակերգությունում: 12. Գետ Լենինգրադի մարզում: 13. Զգայարանների մեկը, որով մարդ երևույթն ընդունում է իբրև հիմարություն: 14. Ալ. Ծատուրյանի բանաստեղծություններից: 15. Պահակ: 16. Ժամացույցի մաս: 21. Հարմարանք մեկ մակարդակից մյուսը բեռ կամ մարդ փոխադրելու համար: 22. Հին հունական ականավոր աշխարհագրագետ-պատմաբան: 24. Հախճապակե կամ մետաղե աման: 27. Նուրբ գործվածք: 28. Բուսականության աստված հին Հռոմում: 30. Պտղատու ծառ: 31. Գավառ Վասպուրականում:

№ 11-ՈՒՄ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

1. «Նամուս»: 2. Ճակատ: 3. Գառնի: 4. Բազում: 5. Քանոն: 6. Վառեա: 7. Ֆեզին: 8. Սեդով: 9. Շահին: 10. Դավիթ: 11. Շերամ: 12. Վերին: 13. Գանգի: 14. Համալ: 15. Տիտան: 16. Չիլդա: 17. Մոզեր: 18. Գոհար: 19. Արյուն: 20. Արմեն: 21. «Արսեն»: 22. Բրաուն: 23. Տառեխ: 24. Գարեն: 25. Խոյակ: 26. Շոպեն: 27. Իրտիշ: 28. Երմակ: 29. Մեթան: 30. Ռեպին:

Գլխավոր խմբագիր՝ Ա. Ն. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Խմբագրական կոլեգիա՝ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍԵՎԱԿ, ԲՐՈՒՏՅԱՆ ՑԻՑԻԼԻԱ, ԶԱՐԴԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆ ՍԻԼՎԱ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ՎԱՐԴԳԵՍ, ՍԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ, ՍԵԼՅԱՆ ՊԱՏՐԻԿ, ՍԱՐՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ (պատասխանատու քարտուղար):

Ձևավորումը՝ ԱՆ. ՊՈՂՈՍՅԱՆԻ

Խմբագրության հասցեն՝
Հայկական ՍՍՌ, Երևան, Աբովյան փողոց № 29
Adresse de la rédaction—Erévan, rue Abovian № 29
Editorial address—Erevan, Abovian Street № 29

Պատվեր 1350

Ստորագրված է տպագրության 3/XII 1964 թ.:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի Մամուլի պետական կոմիտեի պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության № 1 տպարան, Երևան, Ալավերդյան փող. № 65:

ՀՍՍՌ-Ակադ. ԳԳՐ

digitised by A.R.A.R.@

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱ

ՀՈՒՄՈՐ

ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉ.— Ապա դու ասա, ի՞նչ տարբերություն կա էլեկտրական հոսանքի և կայծակի միջև:

ԱՇԱԿԵՐՏ.—Կայծակը ձրի է փայլատակում, իսկ էլեկտրական հոսանքի համար պետք է վճարել:

ՀԱՐՑ ԸՍՏ ԷՈՒԹՅԱՆ

— Մի վախենա, փոքրիկս, բժիշկ քեռին քեզ ոչինչ չի անի:

— Այդ դեպքում ինչո՞ւ ենք եկել նրա մոտ:

ՉԵՍ ՍՊԱՍՈՒՄ ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋ

— Նելլի, քանի անգամ եմ քեզ սովորեցրել, որ չխառնվես մեծերի խոսակցությանը: Սպասիր, մինչև նրանք կվերջացնեն:

— Ես սպասել եմ, մայրիկ: Նրանք երբեք չեն վերջացնում իրենց խոսակցությունը:

ՀԱՅՏՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

— Դու հիշո՞ւմ ես, որ կես տարի առաջ ես կորցրի իմ ժամացույցը:

— Հիշում եմ:

— Ես այսօր նայում էի այն վերարկուիս գրպանները և ինչ ես կարծում, ինչ գտա այնտեղ:

— Ժամացույցը:

— Ոչ: Այն անցքը, որից ընկել էր ժամացույցը:

ՀԱՄԱՁԱՅՆ ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՆԻ

— ՈՒՂԵԿՑՈՂ.— Խնդրում եմ զգեք ծխախոտը: Կուպեում թույլատրվում է ծխել միայն բոլոր ուղևորների թույլտվությամբ:

ՈՒՂԵՎՈՐ.— Ներեցեք, բայց ես մենակ եմ այստեղ:

ՈՒՂԵԿՑՈՂ.— Այդ դեպքում սպասեցեք մինչև որևէ մեկը գա ձեզ մոտ:

ԻՍԿ ԻՆՉՈ՞Վ

ՄԱՅՐԸ.— Հակոբ, քիթը չի կարելի քորել գդալով:

ՀԱԿՈԲ.— Իսկ պատառաքաղով կարելի՞ է:

ՊԱՅԹՅՈՒՆԸ ՀՈՐԱՏՈՒՄ Է ԸՆԴԵՐՔԸ

Սովետական Միությունում հաջողությամբ փորձարկվել է պայթյունի միջոցով հորատող նոր հարմարանքը: Դեպի ներքև կրակող այդ «թնդանոթը» ի վիճակի է փշրելու ամենակարծր ապարները:

Կոնվեյերն անընդհատ հոսանքով հորատանցքին է մատակարարում պայթուցիկ նյութերով լի սրվակիկները, որոնք գտնվելով լվացող լուծույթի մեջ, հասնում են հորատանցքի բերանին դրված նետող ծայրափողին և խփվում հատակին: Պայթյուն, և հորատանցքն ավելի է խորանում:

Փորձարկման ժամանակ հորատողները հասել են երեք կիլոմետր խորության: Նոր մեթոդի առավելությունն այն է, որ կարելի է փորել անընդմեջ: Հարկ չկա դադարեցնելու աշխատանքը մաշված դուրը փոխելու համար, ինչպես նաև հորատող սարքի բարձրացման և իջեցման համար ժամանակ ծախսելու:

ԽՈՐՋՐՅԱ ԱՊԱՐԱՏ



Խորջրյա ապարատը՝ «Սևեր—2» մեզոսկաֆը (սուզասարքը), կառուցվում է Սովետական Միությունում: Դա ոչ մեծ ստորջրյա նավակ է $6^{1}/_{2}$ մետր երկարությամբ և կարող է խորասուզվել մինչև երկու կիլոմետր: Հորիզոնական և ուղղահայաց պտուտակները ապարատին հնարավորություն են տալիս շարժվելու ցանկացած ուղղությամբ մինչև 5 հանգույց արագությամբ, իսկ «մեխանիկական ձեռքերը» հնարավորություն են տալիս ջրի հատակից բույսերի և հանքատեսակների նմուշներ հավաքելու: Նկարում՝ «Սևեր—2» մեզոսկաֆը:

ՄՇԱԿՈՎԻ ԺԵՆՇԵՆ

«Կյանքի արմատը»՝ ժենշենը, որ տեսնում եք նկարում, աճեցվել է Տեբերդայի (Հյուսիսային Կովկաս) պետական արգելանոցում: Լաբորատոր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ «Կովկասյան» տեսակն իր որակով շատ ավելի լավն է, քան համաշխարհային շուկաներում հոչակված արտասահմանյան տեսակները: Այսպիսով ժխտվում է դեռևս հնուց արմատավորված այն տեսակետը, թե իբր ժենշենի վայրի տեսակն ավելի առողջարար է մշակովի ժենշենից: Ներկայումս գիտնականներն զբաղվում են այդ բույսի արդյունաբերական պլանտացիաների ստեղծումով:



ԻՆՔՆՈՐԻՆԱԿ ՄԱԳՆԻՏՈՖՈՆ

Ռադիոսիրողներ, ինժեներ Եվգենի Բորիսովը և խառատ Լև Կրասիկովը (Լենինգրադ) տրանզիստորների (էլեկտրական ազդանշաններն ուժեղացնող սարք) վրա նախագծել են գրպանի մագնիտոֆոն: Այն սնվում է գրպանի լապտերի մարտկոցների հոսանքից, ինչպես նաև էլեկտրական ցանցից՝ կցանի միջոցով: Ժապավենի



շարժման արագությունը 9,5 սանտիմետր է մեկ վայրկյանում: Մագնիտոֆոնն աչքի է ընկնում իր լավ հնչականությամբ: Այն բարձր գնահատականի է արժանացել մասնագետների կողմից: Նկարում՝ նոր մագնիտոֆոնը:

ԳԻՏԵ՞Ք ՈՐ...

Ակնթարթը, այսինքն աչքի մեկ թարթումը տևում է $^{2}/_{3}$ վայրկյան, իսկ ռադիոալիքին անհրաժեշտ է $^{1}/_{3}$ վայրկյան, որպեսզի այն շուրջերկրյա ճանապարհորդություն կատարի:

Աչքը չորս հազար անգամ պակաս է մարդու կշռից, իսկ ութոտնուկների մի քանի տեսակների մոտ աչքի կշիռը հավասար է մարմնի կշռի մեկ քառորդին:

Ծաղրանկարները՝ Գ. Յարալյանի



— Դու ի՞նչ հայր ես. երեխայիս այնպիսի գործի ես դրել, որ ստիպված պիտի աշխատի:



— Շնորհակալ եղեք ինձնից. թե որ ձեր ներկայացումը մի լավ չքննադատեի, այն չէր հաջողվի...



— Դու խոստացար՝ ինձ ձեռքերի վրա ման ածել:

— Բայց դու այն ժամանակ քառասուն կիլոգրամ էիր:

digitised by A.R.A.R.@

77821

digitised by A.R.A.R.@